1748

ՍՏԵՓԱՆՈՍ

ՍԻՒՆԵՑԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՀՈՐԻՑ

ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ

226
Ս-88

226
Ս-88

Ա.Ց

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՁՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ

2010

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ
ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

***

1988

ԱԹԷՆՔ

ՏՊԱՐԱՆ «ՆՈՐ ԱՇԽԱՐՀ»

96205-42

Հայաստանի Ազգային Մատենադարան

1406-2003



ԵՐԱՆԱՇՆՈՐՀ
ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ստեփանոս Սիւնեցւոյ «Զորից Աւետարանչաց Մեկնութիւն»ը
հրատարակուեցաւ բաջալերութեամբ
«Ալեք Մանուկեան Հիմնադրամ»ի:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՁՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

****

Գործիս Հրատարակութիւնը կիսատ մնաց յԱնթիլիաս, 1956 թուին:
Ներկայ Տպագրութիւնը կատարուեցաւ
«Նոր Աշխարհ» Թերթի Տպարանին մէջ,
բարոյական օժանդակութեամբ Զաւէն Գ. Գրիգորեանի,
1986–88, Աթէնք

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ
ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԻՐ ՊԱՏԳԱՄԸ
ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ԱՌԹԻԻ

«ՃՇՄԱՐԻՏ Է՛, ՄԱՐԴՈՒ ՄԷՋ ԿԱՅ ԲՆԱԶԴԸ ՍԻՐԵԼՈՒ ԱԶԳԸ, ՀԱՅՐԵՆԻՔԸ, ԼԵԶՈՒՆ, ԵԿԵՂԵՑԻՆ, ԲԱՅՑ ՆԱ ԴԱՌՆՈՒՄ Է ԳՈՐԾ, ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ, ՆԻՒԹԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՁՈՀՈՂՈՒԹԻՒՆ, ԵՐԲ ԲՂԽՈՒՄ Է ԱՅԴ՝ ԽՈՐԸ ԵՒ ՊԱՅԾԱՌ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ, ԵՐԲ ՆԱ ԳԻՏԷ ԹԷ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՅԹԸ ՀԻՄՔՆ Է, ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱՐՁՈՒՆՔԸ ԱՅՆ ԿԵՆԴԱՆԻ, ՅԱՐԱՃՈՒՆ ՀԱԻԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ՈՐ ԱԶԳՈՒԹԻՒՆ Է ԿՈՉՒՈՒՄ ԿԱՄ ՀԱՅՐԵՆԻՔ՝ ԼԱՅՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՄԲ»:

(ԿՈՆԴԱԿ, 1946 Յուլիս 18, Թիւ 20)

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ստեփաննոս Սիւնեցւոյ «Զորից Աւետարանչաց Մեկնութիւն»ը՝ ներկայ հրատարակութեամբ առաջին անգամ է որ ի լոյս կ'ընծայուի՝ շնորհիւ Գարեգին Կթղ. Յովսէփեանի բանասիրական աշխատանքին:

«Մեկնութիւն Զորից Աւետարանչաց» գտնուած է Գարեգին Կաթողիկոսի կողմանէ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Թ. 446 Ձեռագրական Հաւաքածոյին մէջ եւ 1917 թուին ծանօթացուած հայագիտութեան (Արարատ, 1917, էջ 193–98): Խնդրոյ առարկայ Ձեռագիրը, որ այժմ կը պահուի Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուամբ Մատենադարանի մէջ եւ կը կրէ 5551 Թիւը, Մայր Աթոռ բերուած է Լիմ Անապատէն. գիրը՝ բոլորագիր. գրիչ՝ Կիրակոս. ստացող՝ Յովհաննէս. տեղի՝ Կամրջաձորի Վանք, Արշարունիքի մէջ. ժամանակ՝ ՈԴ (1155):

«Զորս Աւետարանիներու Մեկնութիւն» *կոչուած աշխատութիւնը, գլխաւորաբար մեկնութիւնն է Մատթէոսի Աւետարանին. Ղուկասի եւ Յովհաննէսի Աւետարանները չատ համառօտ կերպով մեկնաբանուած են. իսկ Մարկոսի Աւետարանը համարեա՛ ամբողջութեամբ (բացառելով ԺԴ. գլխ.ի 53–րդ համարը) չէ մեկնուած, Մատթէոսի Աւետարանէն քաղուած համարուելով: Ուստի, երեք Աւետարաններու,— Մատթէոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի մեկնութիւննե՛րը միայն յառաջարկուած են ընթերցողներուն:*

Մեկնութեանց ձեռագիրը, դժբախտաբար անեղծ եւ ընտիր չէ, այլ տեղ-տեղ քերծուած է եւ աղաւաղուած. նոյնիսկ եռեւառաջութիւններ եւ փոքրիկ թերիներ կան: Սակայն ձեռագիրին թերիները ու սխալները մեթոտիկ կերպով եւ ձեռնհասութեամբ ուղղուած եւ ամբողջացուած են Հրատարակչութեան կողմէ: Ստորիջեայ ծանօթագրութիւններով նշանակուած են՝ մեկնաբանուած համարները, ըստ տպագիր Աւետարաններու (տպ. Վիեննա, 1929 թ.), լուսանցային նօթերը, եւ մերթ՝ ձեռագրին հանգամանքը:

«Զորից Աւետարանչաց Մեկնութիւն»*ը գրուած է օրուան կաթողիկոսին՝ հաւանականաբար Դաւիթ Արամոնեցիի առաջարկութեամբ. «Հրամայեցաւ ինձ ի քրիստոսասէր հայրութենէդ Ձերմէ, ո՛վ պատուական բահանայապետ, շարագրեցի... որ ինձ մեզ թուեցաւ դժուարապատում ի մեկնութիւն» (Գարեգին Կթղ. Յովսէփեան, Ցիշատակարանք Ձեռագրաց, հտր. Ա. Անթիլիաս, 1951, էջ 55):*

Կատարուած աշխատանքը քարոզախօսական չէ, այլ՝ բնագրային-պարզաբանական: Հաւանաբար՝ Սիւնեցի նպատակադրած էր Դուինի կաթողիկոսարանին դպրեվանքի աշակերտներուն ընձեռել հիմնական մեկնութիւն մը, որ օժանդակ ըլլար իրենց՝ Աւետարանի մեկնողական քարոզութեան գործին մէջ:

Ներկայ «Մեկնութիւն«ը բարոյախօսական մեկնութիւն մը չէ, այլ՝ Աւետարանի խրթին, հեղինակին բառով՝ «դժուարապատում» խօսքերուն, եւ մերթ սոսկ բառերուն պարզաբանութիւնն է, բնագրային ճշդումներով: Ուստի, մեկնաբանուած են միայն Աւետարանին, յատկապէս Մատթէոսի Աւետարանին դժուարիմաց պատումներն ու տողերը. իսկ աւետարանական այն մթին պատմութիւններն ու խօսքերը, որոնք դուրս կը մնան Մատթէոսեան աւետարանէն՝ ըստ կարգի՝ համառօտաբար մեկնուած են. «Ո՛վ պատուական բահանայապետ, շարագրեցի ըստ կարողութեան, որ ինձ ի չորս Աւետարանիչսդ, ընտրեալ ի յառաջագոյն մեկնչացդ, եւ որ ինձ մեզ թուեցաւ դժուարապատում ի մեկնութիւն, Մա[տ]թէոսեան աւետարանն՝ գրեցաւ ըստ կարգի. իսկ ի յայլ աւետարանիչսդ, որ ինձ մեկուսանայր ի Մա[տ]թէոսեան աւետարանէն՝ եւ զայս ընձեռեցի, Ձերոց հրամանի հնազանդեալ...» (Ցիշատակարանք, անդ, 55):

Ստ. Սիւնեցիի մեկնաբանական մեթոդը՝ մեթոդէ մը աւելի՝ սիստեմ մըն է մեթոդներու: Անիկա փաստօրէն գիտէ մեկնաբանական բազում մեթոդներ,— պարզաբանական, այլաբանական, պատմական, բնագրային-քննադատական, աստուածաբանական, քարոզչական,— զորս կը գործածէ ըստ տեղւոյն՝ գեղեցկայարմար կերպով, մեկնելու համար աւետարանական դժուարիմաց պատմութիւնները, խօսքերն ու բառերը:

Ստ. Սիւնեցի, «Զորից Աւետաւնչաց Մեկնութիւն»ը պատրաստելու համար՝ օգտագործած է «յառաջագոյն» մեկնիչներու գործերը, սակայն ո՛չ թէ հետեւողական պարզ ընդօրինակումով,

այլ քննական-քննադատական ոգիով: Օրինակ. Մատթ. ԺԶ.գլ.ի 16-17 համարներուն մէջ՝ Քրիստոս կ'ըսէ իր Աշակերտներուն. «Բայց ձեր երանի է աչացդ զի տեսանեն, եւ ականջաց ձերոց՝ զի լսեն: Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել» եւն.: Այդ առիթով Սիւնեցին կը յայտնէ որ ոմանք կարծած են՝ թէ Քրիստոս Ցարուքեան եւ Դատաստանի մասին խօսած է, եւ այդ պատճառաւ՝ ունկնդիր Աշակերտները երանուած են: Բայց իրեն աւելի պատշաճ թուած է այն բացատրութիւնը՝ ըստ որուն աչք եւ ականջ բառերը կ'ակնարկեն ո՛չ թէ մարմնական՝ այլ իմանալի (հոգեկան) ականջներուն եւ աչքերուն, որոնցմով մարգարէներ եւ արդար մարդիկ տեսան (նախազգացին) Քրիստոսի գալստեան օրը (տպագիրը, էջ 61-62):

Դարձեալ, 62-րդ էջի մէջ, Ստեփանոս՝ Որոգինէսի «Մատթէոսի Մեկնութեան» բացատրութիւն մը կը յիշատակէ ու այդ մասին կը գրէ. «Զայդ Ուրուգինես այդպէս մեկնեաց, եւ ես ոչ ընդդիմանամ, բայց կարծեմ ըստ այժմեան մեկնութեանս, եթէ որ ունիցի զսերմն բարի, հոգին որ բարի է, երկիր անուանութեցաւ» եւն.: Տե՛ս ուրիշ օրինակներ՝ էջ 72, 91 եւն., եւն.:

Քննելով սիւնեցիի օգտագործած աղբիւրները, կը համակուինք խոր հիացումով մը, վասնզի անոնք կը ներկայեն օտար մեծ մեկնիչներու գործերը, որոնք մեծ մասամբ կորսուած են եւ միայն հատակոտորներով կը մնան: Ծանուանէ յիշատակուած են հետեւեալ աշխատութիւնները.-

1. Որոգինէսի Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին.
2. Ակիւղասի Հին Կտակարանի յունական թարգմանութիւնը.
3. Սիւմմաքոսի Հին Կտակարանի յունարէն թարգմանութիւնը.
4. Թէոդիտոնի հին Կտակարանի յունարէն թարգմանութիւնը.
5. Փիլոն Երրայեցիի Մեկնութիւն Հնգամատեանի.
6. Յովսէփոսի Պատմութիւնը.
7. Հին Կտակարանի եօթանասնից թարգմանութիւնը.
8. Հին Կտակարանի երրայեցերէն բնագիրը.
9. Նոր Կտակարանի յունարէն բնագիրը.
10. Գրիգորի- հաւանօրէն Նիւսացւոյ՝ աւետարանական Մեկնութիւնը, գուցէ մասնական:

Անչուշտ Ստ. Սիւնեցիի օգտագործած աղբիւրները միայն յիշեալ գործերը չեն եղած, այլ եւ ուրիշ հայերէն եւ օտարալեզու մեկնութիւններ, որոնք թէպէտ յանուանէ չեն յիշատակուած, բայց որոնց գոյութիւնը կը զգացուի եւ կը հաստատուի՝ «ասեն ոմանք», «ոմանք կարծեցին» ասուածիւններով:

Իսկ յիշեալ աղբիւրները ուղղակի՞օրէն գործածուած են՝ թէ ուրիշ գործերու միջոցաւ. այդ չենք գիտեր որոշապէս: Սակայն մենք նկատի ունենալով Սիւնեցիին մեկնողական խոր հմտութիւնը եւ ուսած օտար լեզուները (յունարէն, լատիներէն, հաւանականաբար նաեւ երրայեցերէն), կը խորհինք որ այդ աշխատութիւնները առհասարակ ուղղակիօրէն օգտագործուած են:

Սիւնեաց դպրոցը, հայկական դպրատուներու մէջ առաջնակարգ դիրք ունեցած է, իբր կեդրոն քերթողական, աստուածաբանական, մեկնողական, փիլիսոփայական, երաժշտական եւ այլ գիտութիւններու, եւ որպէս դաստիարակ՝ Հայ Եկեղեցիի դաւանութեան եւ արժէքներուն անաղարտ պահպանման նախանձախնդիր վարդապետներու:

Ստ. Սիւնեցի մէկն է այդ գիտուն վարդապետներէն, եւ իր «Աւետարանչաց Մեկնութիւն»ը գեղեցիկ վկայութիւն մըն է՝ Սիւնեաց դպրոցի մեկնաբանական բարձր ուսման մասին: Ատիկա կը յայտնէ թէ սիւնիքի մէջ սուրբ-գրական մեկնութեան որքա՛ն գիտականօրէն զարգացած դասընթացք մը կար:

Սիւնեցիի Մեկնութեան արժէքը եթէ ուզենք ճշդել համաձայն Ս. Գիրքի արդի նրբազնին ու ճոխ մեկնաբանական գրականութեան նուաճումներուն՝ խոչոր գործ մը չէ: Սակայն որպէս հին շրջանին պատրաստուած աշխատութիւն՝ ինքնուրոյն ու կարեւոր մեկնութիւն մըն է, որ Հայերուս օգտակար եղած է թէ՛ իբր կրթական գործիք եւ թէ որպէս աղբիւր՝ նման երկերու պատրաստութեան: Շատ հաւանաբար, անիկա երկար ատեն իբր դասագիրք գործածուած է Սիւնեաց դպրոցին մէջ:

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՁՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ» երկի հրատարակութիւնը կը հանդիսանայ ոդիսական պատմութիւն մը: 50-ական թուականներու սկիզբը՝ երբ տակաւին ողջ էր Գարեգին Կթղ. Յովսէփեան, գործը յանձնուեցաւ տպագրութեան: Այդ տարիներուն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Տպարանի տեսուչը էր Տ. Գնել Ծ-Վրդ. Ճերեճեան (այժմ եպիսկոպոս), որ բարեխղճութեամբ պատրաստեց Ձեռագրի հրատարա-

կութիւնը: 1953 թուի Ցունիս 28ին աբեղայական ձեռնադրութիւնը ընդունելէ ետք, ստանձնեցի ոչ միայն Կաթողիկոսարանի Ձեռագրաց Հաւաքածոյի, այլեւ Տպարանի պատասխանատուութիւնը (1954):

Մինչ այդ վախճանած էր Գարեգին Կաթողիկոս (21 Ցունիս 1952) եւ Գիրքին հրատարակութիւնը մնաց անաւարտ, Սիւնեցւոյ երկրորդ ծորայայտ Մեկնութեան- «Պատճառք եւ Թելադրութիւն Առաջին Տեսլեանն Եզեկիելի»- պատճառաւ: Սոյն կարճ երկասիրութեան Մայր Աթոռոյ Թ: 1306 կամ Երեւանի Թ. 1288 Ձեռագիրը շատ աղաւաղեալ է եւ Խմբագրութիւնը կարեւոր նկատեց զայն համեմատել Երուսաղէմի Թիւ 69 եւ 1322 ձեռագիր օրինակներուն հետ: (Մատենադարանի երկու այլ Ձեռագրերու մէջ եւս պահուած կայ Եզեկիէլի Մեկնութիւնը- Թիւք 1879 եւ 5906): Բաղդատութեան աշխատանքը չէր աւարտած, երբ 1956 թուի Փետրուարին՝ կաթողիկոսական ընտրութեան առթիւ տագնապ մը ցնցեց Անթիլիասի Վանքը եւ ես Ցունիս-Ցուլիս ամիսներուն պարտաւորուեցայ եւ պարտադրուեցայ հրաժարիլ Տպարանի տեսչութեան պաշտօնէն: Բնականաբար ինձ համար մեծ պատիւ է եւ ուրախութիւն՝ այժմ ի վերջոյ հրապարակել Սիւնեցւոյ «ՁՈՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆՉԱՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ»ը:

Եզեկիելի Տեսլեան Մեկնութիւնը կը ծրագրեմ հրատարակել առանձին տետրակով: Հետաքրքրուողներ կարող են Ստ. Սիւնեցիի կեանքին եւ գործերուն մասին կարդալ կամ վերակարդալ իմ ուսումնասիրութիւնը- ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ, Պէյրութ, 1958:

Հուսկ ուրեմն սրտագին շնորհակալութիւն կը յայտնեմ «Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամ»ի պատասխանատուներուն՝ իրենց տրամադրած ազնիւ նպաստին, ինչպէս եւ եղբօրս Զաւէնին, բարոյական բաջալերութեան համար՝ որպէսզի ոյժերս հաւաքեմ եւ այլեւս անյապաղ աւարտեմ Սիւնեցւոյ Աւետարանական Մեկնութեան բազմաչարչար հրատարակութիւնը:

ԴՐ. ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Դասախօս Հայագիտութեան Վիեննայի
Համալսարանի Բիւզանդագիտական
Ինստիտուտի մէջ

Վիեննա, 1988:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՁՈՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆՉԱՑ

Ա.

«Գիրք Մնդնդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի»(1)·— Գիրք լինելութեան, ասէ զհեղձուածողք այնոքիկ, որ ասեն, եթէ ոչ էր մշանջենաւորակից Քրիստոս որդի Աստուծոյ Հաւր գոյացութեամբ, այլ եղեալ ասեն, և ակիզբն առ ի Մարիամայ: իսկ մեք ոչ այզպէս· այլ գիրք լինելութեան ասեմք զլինելութենէն, որ յաղագս մերոյ փրկութեան եղեւ մարդ և նմանեցաւ մեզ ամենեւին բայց ի մեղաց·

«Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա ի Թամարա· Արբրահամ ծնաւ զԻսահակ ի Սառայ[յ]է, Իսահակ ծնաւ զՅակոբ ի Ռեբեկայէ(*), Յակոբ ծնաւ զՅուդա ի Լիա[յ]է»(2)· Բայց լռեաց զայլոցն մարս, և ասաց յիշելով զԹամար, եթէ Յուդա ծնաւ զՓարէս ի Թամարայ· առ այս խնդիր ասեմք նախկին, եթէ յիշելն զԱբրահամն, յիշեաց եւ զՍառայ, վասն զի Աբրահամ եւ Սառա մի մարմին էին, և Իսահակ և Ռեբեկայ նոյնպէս մի մարմին էին, իսկ Յուդա և Թամար ոչ էին մի մարմին· քանզի պատնիկ համարեաւ զԹամար Յուդայ, վասն այսորիկ յիշեաց աւետարա[ւո]իչն(**) զԹամար· նոյնպէս և զԲեերսաբէէ, և զԻեսոնէ պատնիկն և զՀուբէթ Մովսեսի, զի ցուցցէ, թէ ի բազում [եր. 224բ] և յանգնին մարդասիրութենէ և պատնիկաց որդի արժանաւորեսցի կոչել և պատնիկս և զայլազգիս մարս անուանէ·

«Յովրամ ծնաւ զՈքոզիաս»(3), որոյ վախճանեալ դուստր Յովրամա[յ] Թագաւորի, առեալ զՅովսափատ եղբայր Ոքոզիա զաղաեաւ կՅովաս(4), որ Թագաւորեաց· յետ որոյ որդի նորայ Ամասիա,

(1) Մատթ. Ա. 1·
(2) Մատթ. Ա. 3-2 յետ ու առաջ դրեւած բնագրի մէջ·
(3) Մատթ. Ա. 8. գՈզիա·
(4) Մատթ. չուեր. Սիւնեցին առել է Դ. Թագ. ԺԱ. 1-3· ԺԲ. 1·
(*) Ջ.ում՝ Ռեբբեկայ·
(**) Ջ.ում՝ Աւետարիչ·

յետ նորա՝ որդի նորա Ազարիաս։ Արդ խնդիր է ըստ անուանց երից Թագաւորացդ։

«Ահա կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցին զանուն նորա Էմմանուէլ»(1)· սաղամա բառդ յերրա[յ]եցւոյն զկոյսն անուանեցին Թարգմանքն· Թարգմանեալ, իսկ Ակիւղաս և Սիմաքոս որիւորդ կամ երիտասարդամարդ, և չերկրորդ աւրէնսն ադաղամայ անուանդ կոյս Թարգմանեցին, եթէ եղիցի ասէ դուստր կոյս խաւսել առն ուժիմն(2)։

Բ.

«Բանդի տեսաք զաստղն նորա յարեւելս»(3), որպէս մնծ աստղդ որ դիտաւոր կոչի, յորժամ երեւի նոր լոյս նշանակէ, առաւել ևս հրաշափառագոյն աստղ երեւեցաւ ի ծնանիլ փրկչին, կամ հրեշտակ իսկ երեւեալ ի նմանութի[ւ]ն աստղոյ։

«Իսկ նոքայ ասեն ցնա ի Բեթղէեմ Հրէաստանի»(4), Բեթղէեմ Թարգմանի տուն հացի, ուր ծնանի [եր. 225ա] հացն կենդանի, որ էջն յերկնից և կենդանութիւն աշխարհի։ «Եւ դու Բեթղէեմ, երկիր Յուդա, ոչ իւիք կրասերագոյն ես յիշխանս և յառաջնորդս Յուդայ, քանզի ի քէն ելցէ իշխան, որ հովուեսցէ զիսրայէլ»(5)։ Միքիէ մարգարէ այսպէս ասէ· «Եւ դու Բեթղէեմ տուն Եփրաթա, սակա[ւա]ւոր(*) իցես լինել ի հազարաւորս Յուդա, ի քէն ինձ ելցէ իշխան Իսրայէղի և ելք նորա իսկզբանէ աւուրց երկնից յաւիտենից»(6)· արդ խնդրելի է, վասն է՞ր արդեաք որպէս կայն առ մարգարէին, նոյնպէս ոչ եղ աւետարանիչդ, այլ փոխեաց։ կարծիք են եթէ յերրայեցւոյն· եղաւ վկայութիւնս և ոչ ըստ Թարգմանութեանն Եւթանասնից։ «Եւ հրաման առեալ ի տեսլեան»(7)· յումէ՞ առին հրաման, ոչ է գրեալ· յայտ է, թէ ինքն

(1) Ես. է. 14։
(2) Երկ. Օր. ԻԲ. 23. տ. աղիկ քո. դուստր։
(3) Մատթ. Բ. 2։
(4) Մատթ. Բ. 5։
(5) Մատթ. Բ. 6։ տ. ոչինչ կրասեր ես, գ. եւ յառաջնորդս, գ. քանզի, ելցէ ինձ, զժողովուրդ իմ զիսրայէլ։
(6) Միքիա. ե. 2. տ. աշխարհի, գ. երկնից յաւիտենից, հերրայեցերէնի համեմատ։
(7) Մատթ. Բ. 12։
(*) Զ.ուսմ՝ սակաւոր։

Տէրն հրամայեաց։ Հրաման առնուն ոչ պատնալ յետս զոչ խաղաղական ճանապարհ հրէականէն։

«Եւ բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս, ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս»(1)։ Ոսկի մատուցանէին գիտացեալ թէ թագաւոր է· կնդրուկ, քանզի աստուած է, զմուռ[ս], զմահն նշանակելով, զոր կրելոցն էր վասն մերոյ փրկութեան։ «Չի լցցի ասացեալն ի Տեառնէ, թէ յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ»(2)։ Ի Յովհէ ըստ Եւթանասնից գրեալ է այսպէս. «Տգա[յ] եղիւ, սիրեցի [եր. 225բ] զնա և յեգիպտոսէ կոչեցից զորդեակս նորայ»։ իսկ Ակիւղաս, առ աւետն լսելոց Թագաւորն Իսրայէղի եւ սիրեցի զնա, եւ յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ, վասն զի Մա[տ]թէոս երբա[յ]եցերէն գրեաց զաւետարանս, եւ որ Թարգմանեաց ըստ հերրայականին եղ զվկայութիւնդ։ «Եւ յղեալ կոտորեաց զամենայն մանկունսն ի Բեթղէեմ»(3)։ Որք կամաւ վասն անուանն Քրիստոսի մեռանին, կատարեալք, եւ յաղագս նորայ իսկ տգա[յ] մանկունքն էին փոխանակ նորա, զնոյն հասակս ունելով Քրիստոսի, եւ զնոյն տեղի ծնելութեան միայն։

«Ձայն ի Հռամա լսելի եղեւ, եւ ողբումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ· Հռաքել լայր զորդիս իւր եւ ոչ կամէր մխիթարել, զի ոչ էին»(4)·— Յերրայականին այսպէս է· ձայն ի բարձրութենան լսելի եղեւ, լան զորդիս, եթէ ոչ են. այնոքիկ որք անդիտանան գխորհուրդ յարութենանն, իսկ որք ուսանին ի Քրիստոսէ, եթէ ինեւ յարիցեն, այնպիսիքն ոչ լան եւ կոծին։— «Չի լցցի ասացեալն ի ձեռն մարգարէին, թէ Նազովրացի կոչեսցի»(5) — բայց մինչեւ ցաւետն բաւիղ սուրբ է, բազումք ասացին զՔրիստոս ի մարգարէից։—

Գ.

«Յաւուրսն յայնոսիկ գա[յ] Յովհաննէս Մկրտիչ»(6)·— Յովսէպոս յուդայեցասնեւորդ պատմութենան վկա[յ]է յաղագս Յովհան-

(1) Մատթ. Բ. 12։
(2) Մատթ. Բ. 15, տես Ովսէէ ԺԱ. 1։
(3) Մատթ. Բ. 16 տ. առաքեաց գ. եւ յղեալ։
(4) Մատթ. Բ. 18 տ. ձայն գուժեաց ի Հռամա. համ. երեմ. ԼԱ. 15 նման մեր բնագրին, միայն «գուժումն» գ. աշխարհումն յոյժ, այսեղ գ. «ի վերայ օրղոց իւրոց», նման երրայեցերէնին։
(5) Մատթ. Բ. 23։
(6) Մատթ. Գ. 1-2։

նու, իսկ Յովհաննէս քարոզելով յանապատին Հրէից [եր. 226ա] ասէր. ապաչխարեցէք զի հասեալ է արքայութիւնն երկնից։ Արդ թուի ինձ, թէ անապատ Հրէից զՀրէաստան ասէ, և կամ զբոլոր երկիրն որ վիպանեալ(s) էր յաստուածպաշտութենէ, որպէս ի վերոյ իսկ ածէ։

«Զայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհն Տեառն և ուղիղ արարէք զշաւիղս նորա»(1)։ Զայն Յովհաննէս, բարբառ Քրիստոս, վիպան զնա ևս յաստուածպաշտութենէ երկիրս, քանզի որպէս ձայնիւ գրանն իմանամք և գբարբառ, նոյնպէս և ի ձեռն Յովհաննու գրանն Աստուծոյ և գբարբառ կենաց— «Մերձեալ է արքայութիւնն երկնից»(2)· միթձեալ է գալուստն Քրիստոսի· առանց Յովհաննու և ոչ պատրաստի ճանապարհ Քրիստոսի· իսկ յանապատի ճանապարհ ի նոցանէ ոչ գնա[յ] բանն Աստուծոյ· և որոց ոչ է ուղիղ շաւիղք, ոչ կարէ տանել գուղիղն զՔրիստոս։ «Զայն գոչելոյ յանապատի»(3)·— ի նոցանէ որ է անապատ ի մարդկային գթասիրութենէ, և ի խոտորութենէ, և միայնացեալ յԱստուած ըստ ասացին· եղէ ևս որպէս ձնձղուկ միայնացեալ ի տանիս(4)· ձայն գոչմանն Յովհաննու լինէր· թէպէտ և երեւելեացս ձայնիւ ոչ ազաղակէր, որպէս և Քրիստոս կոյր, ասէ, և աղաղակէր(5), եւ ցմահս ասէր Աստուած, զի՞ դուն առիս(6)· և Դաւիթ, ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի(7)·

[եր. 226բ] «Եւ ինքն Յովհաննէս քարոզէր, և էր զգեստ նորայ ի ստեւս աւղտու, և գաւտի մորկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նորա մարախ և մեղր վայրենի»(8)·— Ստեւս աւղտու էր զկնգեալ, բառնալով չինքեան զկաւրութիւն այնոցիկ, որ զուգաս կլանէին և մերկացեալ էին ի գաւանէն ի գհաւատն Քրիստոսի, եւ որպէս յողբալն Յակովբ զՅովսէփ գորձ մատնիչն էր եղեալ ի վերա[յ] միջոյն, նոյնպէս եւ Յովհաննէս կաչուվն որ էր եղեալ ի վերա[յ] միջոյն իսրայէլի և զմեռելութիւն անձնընդականութեան ոգւոց նոցա, որպէս եղիան այն

(1) Մատթ. Գ. 3։ ես. Խ. 3։
(2) Մատթ. Գ. 3։
(3) Մատթ. Գ. 3 ս. և վերև բարբառոյ փ. գոչելոյ։
(4) Սաղմ. ճԲ. 8։
(5) Յովհ. Է. 37։
(6) Ելք ԺԴ. 15։
(7) Սաղմ. Գ. 5։
(8) Մատթ. Գ. 4։

ողբայր զԺողովուրդն։ Իսկ կերակրիլ ասեմ մարախով, ցուցանելով զկերակուր նոցա· եթէ ոչ ունէին հիմնացեալ հաւատսն ի վերա[յ] վիմին, այլ աւդապնոց և չարժուն որպէս մարախ։ Ուստէր և զմեղր վայրենի, այլ ոչ ընտանի, նշանակելով զնոցա ամպարշտութենէն վայրագութիւն, որ թողեալ զ[ը]նտանի(s) բարեպաշտութենէն քաղցրութիւն, վայրենակ ամպարշտութենէն քաղցրութեամբ, որ ոչ էր գործեցեալ ի Մովսէսեան և ի մարգարէիցն վարդապետութենէ· ընտանի մեղուցն անխայթիկ, այլ յատաքին պիծառանցն, որ առ ժամանակ մի քաղցր թուի քմային, իսկ յետ սակաւուց դառնագոյն քան զլեղի։ [եր. 227ա] և զի վարքն Յովհաննու ողբութիւն էր, որ կոչէր ի կոծել, ասեն մանկունք· ողբացաք և ոչ կոծեցարուք(1), զՅովհաննու զգալուստն եւ զվարս նշանակելով։

«Յաստուածանելով զմեզս իւրեանց»(2)· Որք խոստովանին ի մկրտութեանն, արձակին ի մեզս իւրեանց, քանզի արդարեւ ինքն ինքեան ամբաստան լինի, և ասա դու նախ զմեղս քո, զի արդարասցիս· և զմեղս իմ ծանուցի և զյանցանս իմ ոչ թաքուցի(3)։

«Տեսանել զթագուհի ի փարիսեցւոցն և ի սադուկեցւոյն(s), զի գային առ նա մկրտել, ասաց նոցա· ծնունդք իժից, ո՞յ(s) եցոյց ձեզ փախչել ի բարկութենէն, որ գալոցն է»(4)· ի յանդրեւայն թշնամին և ի նորին սպասաւորքն· զի նոքա են որդիք և ծնունդք իժից, որք նորա վարդապետութեանն գհետ երթան և վարժին· արդ տեսանել Յովհաննու եթէ թեւր և կամակոր մտաւք մերձենան ի նա ոչ խոստովանելով զմեղս իւրեանց, իժից որդիս և ծնունդս զնոսա անուանեաց։ Ուստի՞ գիտացէք, ասէ, եթէ բարկութիւն գալոց է և հարկ է փախչել ի բարկութենէն, զի՞ ցուցանէք խոստովանել զմեղս, որ ոչդ խոստովանիք։ «Արդ արարէք պտուղ ապաչխարութեան»(5), և մի՛ միայն զերեւն, որպէս թզենին, զոր անիծանէ Քրիստոս, [եր. 227բ] որ ցուցանէր բերել պտուղ և բերէր միայն տերեւս։ «Եւ մի համարիսջիք ասել յանձինս, թէ հայր ունիմք զԱբրահամ, ասեմ ձեզ, զի կարող է

(1) Մատթ. ԺԱ. 17։
(2) Մատթ. Գ. 6. ս. խոստովան լինէին։
(3) Հս. ԽԳ. 26 և Սաղմ. ԼԱ. 5։
(4) Մատթ. Գ. 7։
(5) Մատթ. Գ. 9. ս. Արարէք այսուհետև պտուղ արժանի ապաչխարութեան։

Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու»(1)։ Որք ըստ մարմնոյ պարծեին Աբրահամու, մարգարէանա[լ] նոցա քարանալն և զլուծանելն, և զհեթանոսաց կոչումն, և փխանակ քարիզէն սրտին առնուլ մարմին հոգևին(*), որ նման անզգայից քարանց և փայտից ծառա[յ] լինի։

«Արդ ահաւասիկ տապար առ արմին ծառոց»(2).— Եւ ավ ինչ տապարաւորն, որ կարէ զանհաւատութիւնն. զոնն Քրիստոսի ասէ, զազգով եւ զհատող քան զամենայն սուր երկայրի, յորմէ կոճղեցան ոստք ծառոց իմանալոց հնազանդելոք նորա վարդապետութեանն, զի պատուաստեսցին ի վզնջիկ ձիթենին։ «Ես մկրտեմ զձեզ ջրով յապաչխարո[ւ]թիւն»(**). իմ մկրտութիւնս մարմնական է, նման է սրբոյն հոգւոյն, իսկ որ ասացն յապաշխարութիւն, յայտնապէս է, թէ ուսուցանէ զայնոսիկ, որք բարի կամաւք եւ ուղիղ մտաւք մնջենան եւ դատապարտէ զայնոսիկ, որք կամակորութեամբ մկրտին։ «Պարտ զկնի իմ զաւրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւական կօշիկս տալոյն քառնալ»(3) [եր. 228ա] յետ իմ յայտնելոց է, զորս չեմ արժանի զրան երկուց կաւչկաց նորա զմարմնանալոյն եւ ի պժոխս իջնելոյն մեկնել և մտաւք իմովք(***) իմանալ, կամ զրան եւ զկաւրութիւն հին և նոր կտակարանաց։ «Նա մկրտեսցէ զձեզ հոգւով և հրով(4).— զի մի միայն մեղացն թողութիւն չնորհեսցէ, այլ և ամենեւին ջնջումն և ծախումն. թողութիւն հոգւոյն է; ջրով ծախումն, հրով իմանալեաւ։ «Որոյ հնծանոցն ի ձեռին իւրում սրբել զկալ իւր»(5).— Հնծանոց զաւրութիւնն է Քրիստոսի, ընտրող և որոշող ցորենոյ և յարդի, արդարոց և մեղաւորաց։ կալն երկիրս, որպէս և ի պատուիրան գրեալ է(6), ի դնել Գեդեւոնի զգեղմն ի կալին, որ յառաջագոյն զաւրութիւն (!) ունէր

(1) Մատթ. Գ. 9. ա. մի համարիցիք, թէ ունիմք մեք հայր զԱբրահամ։

(2) Մատթ. Գ. 10. ա. զի փ. արդ։

(3) Մատթ. Գ. 11. ա. բայց որ զկնի իմ գայ, և ես չեմ բաւական բառնալ կօշիկս նորա։

(4) Մատթ. Գ. 11. ա. ի հոգին սուրբ և ի հուր։

(5) Մատթ. Գ. 12. ա. սրբել և սրբեսցէ։

(6) Դատ. Զ. 36–38։

(*) Զ.ի լուսանցքում. հոգի մարնելն(։)։

(**) Զ.ում՝ յապաշխարութիւն։ Մատ. Գ. 11։

(***) Բնագրում «իմաւք», որ ուղղել է լուսանցքում «իմովք»։

աստուածպաշտութեանն. բայց միայն գեղմն ժողովուրդն խրատչէզան. իսկ ի վայրին գ[ը]նդէման(ց!) նշանակէր, զորութիւնն ի վերա[յ] գեղմանն և ի վերայ ամենայն կալոյն գալարութիւն. արդ հնծանոցաւն իւրով ազգով բանիւն վարդապետութեանն զամաւորան, զհաւատացեալսն ի կոլ իւր և զապըստամբեալսն զանհաւատսն այրեսցէ անշէջ հրով։)

«Իսկ Յովհաննէս արգելոյր զնա և ասէր. ի՛նձ պարտ [է] ի քէն մկրտիլ և դու առի՞ս գաս»(1). Գիտէր Յով[հ]աննէս [եր. 228բ] եթէ պարտ է նմա մկրտել ի գառնէն Աստուծոյ, որ բառնա[յ] զմեղս աշխարհի(2). Պատասխանեալ Յիսուս ասաց ցնա. Թոյլ տուր այժմ, զի այդպէս վայել է(*) մեզ կատարել զամենայն արդարութիւնս»(3)։ — Քանզի ոչ եթէ պիտանանամ արդարութեան, որ յապաշխարութենէ և յաղագս այնորիկ մկրտիմ, զի թողութիւն մեզաց լինիցի. այլ այնպէս պարտ է ինձ և քեզ կատարել զամենայն արդարութիւնս, զի եթէ ես որ անմեղս եմ, կարծիմ պիտանանալ մկրտութեան, ո՞րչափ եւս առաւել որ մեղուցեալքն են պիտենայցեն, զի խոստովանել զմեղս ի մկրտութեանն թողութիւն գոյէ։

Դ.

«Յայնժամ Յիսուս ել ի հոգւոյն յանապատ փորձել ի սատանայէ, եւ պահել զքառասուն տիւ և զքառասուն գիշեր և ի վե[ր]ջոյ քաղցեաւ»(4)։ Յովհաննէս աւետարանիչն ոչ գրեաց զփորձութիւնսն, վասն զի աստուածաբանէր ասելով. ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն(5), և քանզի Աստուծոյ և լուսոյ ըստ աստուածաբանութեանն անհնարին է փորձել, այլ ըստ մարդկութեան, զոր էառ ի մեր փրկութիւն, վասն այսորիկ լռեաց Յովհաննէս. իսկ Մատթէոսի գրեալ գծնունդն ըստ մարդկութեան և զմկրտելն ի Յովհաննէ,

(1) Մատթ. Ժ. 14. ա. ինձ պիտոյ է։ Զ.ում՝ ինձ պարտ ի քէն։

(2) Յովհ. Ա. 29։

(3) Մատթ. Գ. 15. ա. Պատասխանի եւ, և ասէ ցնա, լնուլ։

(4) Մատթ. Դ. 1. ա. վարեցաւ Յիսուս յանապատ ի հոգւոյն, ապա փ. ի վերջոյ։ Զ.ում՝ ի վեջոյ։

(5) Յովհ. Ա. 1։

(*) Զ.ի լուսանցքում աւելացրած է «պարտ է»։

որպէս զայլ մարդիկ, [եր. 229ա] գրեաց և ըստ մարմնոյ փոր-
ձելն ի սատանայէ. փորձէ սատանա[յ] զայլս ոչ ջանալով, իսկ
զԲրիստոս այսպէս. վասն զի եթէ ի պահելոյն ոչ էր քաղցեալ,
սկիզբն փորձութեանն ոչ լինէր, իսկ յորժամ քաղցեաւն, կար-
ծեաց, թէ սոսկ մարդ է. և յաղագս այնորիկ մատուցեալ, փոր-
ձէր զնա. – «Եւ մատուցեալ փորձիչն ասէր. եթէ որդի ես Աս-
տուծոյ, ասա զի քարինքս այս հաց լիցին»(1).— Լուեալ արդ
եւք և բանաւարկուն գձայնն, որ ասաց, եթէ դա է որդի իմ սի-
րելի ընդ որ հաճեցա[յ](2). ի ձայնէն թերահաւատեալ, այժմ ասէ,
թէ արդարեւ ճշմարիտ էր ձայնն, և ես որդի Աստուծոյ, ասա,
զի քարինքս այս հաց լինիցին։ Իսկ նորա պատասխանեալ
ասաց. «գրեալ է, ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն
բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»(3)։ Ցերկրորդ աւրէնս
գրեալ է(4), ուսուցանէ զմեզ, յորժամ ոչ միայն որկրոտութեամբ
և չարչարանաւք մարմնոյ փորձիմք, այլ բան քաղցրութեան
ասել, եթէ դու որպէս զաստ կարծիս այդպիսի բանիւք, կամ
հացիւ կենդանանալ հոգւոց։ Իսկ մեք և զԱստուած միայն ունե-
լով կերակուր ոչ պիտոյանամք քոյով կերակրաւք, որպէս առա-
քի Քրիստոսի պատասխանատուքինէն. եթէ որ փորձիւրն մարդ
էր, [եր. 229բ] և եթէ ոք ոչ կերակրի բանիւն Աստուծոյ, ոչ
կարէ ապրել։

«Ցայնժամ առեալ զնա բանաւարկուին, ածէ ի սուրբ քա-
ղաքն և կացուցանէր զնա ի վերա[յ] աշտարակին և ասէ ցնա.
«եթէ որդի ես Աստուծոյ, ընկեաց զքեզ ի վայր»(5).— Բանաւարկու,
ի բանէ ասելդ ընկեաց զքեզ ի վայր, ոչ կարէ զինքն ընկենուլ
զՔրիստոս. քանզի որ ընկենու զինքն ի տաճարէն և ի չինուա-
ծոյ տաճարին, ինքեան զինքն բանաւարկուին պարտեաց. տեսցես
զայս մի գուցէ, որ մեզաւ յաստուածային վարդապետութիւնն,
ընկենուլ զինքն, ասէ, ի տաճարէն Աստուծոյ. իսկ Քրիստոս
ամենեւիմբ ոչ մեղուցեալ, զիա՞րդ ընկենու զինքն ի չինուածոյ

(1) Մատթ. Դ. 3։
(2) Մատթ. Գ. 17։
(3) Մատթ. Դ. 4. տ. Նա պատասխանի ետ և ասէ, թէ ոչ հացիւ
միայն։
(4) Երկ. Օր. Ը. 3։
(5) Մատթ. Դ. 5-6. տ. առեալ ածէ զնա սատանայ ի քաղաքն սուրբ
և կացուցանէ զնա ի վերայ աշտարակի տաճարին, արկ զքեզ ասի ի վայր։

տաճարին։ «Քանզի գրեալ է, եթէ հրեշտակաց իւրոց պատուի-
րեալ է վասն քո և ի վերա[յ] ձեռաց բարձցեն զքեզ»(1), գրեալ է
ի գիրս Սաղմոսացն, և ասէ մանաւանդ վասն արդարոց, քանզի
ոչ ի պիւէ հասարակաւրեա[յ] երկնչի, և ոչ ի նեաէ թուղեցելոյ
ի տունչման(2), և ոչ հրեշտակական աւգնականութեան պիտա-
նանայ, որպիսի հրեշտակաց գոլով. բայց լիցի եթէ յաղագս Քրիս-
տոսի ասացաւ և հիմ արդեւք ոչ ասաց, որ ինչ ի կարգին է.
եթէ «ի վերա[յ] իմ և քարքի գնասցես եւ կոխեսցես զառիւծն
և զվիշապն»(3). քանզի այդ ամենայն ինքն էր, վասն այնորիկ
լռեաց. [եր. 230ա] ասաց նմա դարձեալ. «Մի փորձեսցես զՏէր
Աստուած քո»(4), գրեալ է յերկրորդ աւրէնսն, եթէ բարեպաշտ
արք զինքեանս ոչ մեռուցանեն(*)։ Արդ յասելդ, եթէ մի փոր-
ձեսցես զտէր Աստուած քո, թուի թէ գուցէ յանկանել յաշտարա-
կէն, արձակիցէ զհոգին. և է խնդիրդ սոսկալի, եթէ որ ի վերայ
ալեաց ծովուն գնայր և ոչինչ ախտանայր, այլ և աստէր եւս,
այժմ ի վերայ աւդուս կոխել զանգիտել նշանակէ աւետարանիչդ.
և այդ այդպէս. իսկ որպէս ինձ թուի, կարի վերջին անմտութիւն
է իմանալ զՔրիստոս զգալի մարմնով հետեւիլ զկնի սատանա[յ]ի,
ելանել յաշտարակ տաճարին, և դարձեալ ի լեառն բարձր ելա-
նել նմա, և ի լեառնէն տեսանել նմա զամենայն թագաւորութիւնս.
և յո՞ր արդեւք երեւել ի լեառն հնար էր ելանել, և կամ զիա՞րդ
ցուցանէին նմա ամենայն թագաւորութիւնք երկրի, թէպէտ և
իցէ գլուխ լերինն մինչեւ ցերանական երկնիլ գունդ, բայց որ-
պէս յասել աւետարանչին, եթէ կայր Քրիստոս ի տաճարին և
ողողակէր, և մարդկա[յ]ին լեզուով — զՔրիստոս ողողակել —
իմանալ յեթէ յիմարութիւն է, նոյնպէս ելանել կամ հանել զնա
սատանա[յ]ի ի տեսանելի աչս[եր. 230բ]արակ տաճարին, կամ ի
լեառն և ցուցանել նմա զամենայն թագաւորութիւնս երկրի
ի նմին ժամու, ապա ուրեմն կարծիցէ ոք ասել աւետարանչիդ,
մի գուցէ ասել ասի սատանա[յ]ի ի վեր զանցանել զՔրիստոս, որպէս
զմարդ ի բարձրութիւն գիտութեանց, մինչեւ գիտել նմա և

(1) Մատթ. Դ. 6 և Սաղմ. Ղ. 16։
(2) Սաղմ. Ղ. 6։
(3) Սաղմ. Ղ. 13։
(4) Երկ. Օր. Զ. 16։
(*) Ջ.ի լուսանցքում. «՞րպէս ապա ի[rhuson]» անշուշտ գրչի
կողմից գրուած։

զայնոսիկ, ասան որոյ ասաց. եթէ որդի ոչ դիտէ, բայց միայն հայր(1). քանզի դեռ եւս ոչ էր փառաւորեալ, այլ և փոքրագոյն եւս քան զհրեշտակս ըստ(*) ասելոյն Պաւղոսի(2). արդ վերացեալ յայսպիսի գիտութիւնս, զոր հաւր միայն ասացաւ գիտել, որ դեռ եւս չէրն փառաւորեալ. և որում դեռ եւս չէրն եղեալ հաւր զքշնամիս պատուհասդան ատից նորայ(3). Ծանապատ ասացաւ յաւետարանչէն ելանել, և ցանկալ գիտութեանն, զոր դեռ եւս որպէս մարդոյ ոչ էր և ի բերանոյն Աստուծոյ գիտութիւն նորայ. ուստի և լու եղեալ ի սատանա[յ]է, թէ որդի ես Աստուծոյ, որպէս ասաց երկնա[յ]ին ձայնն, հրամայեալ գիտութեանս այսմիկ, զի կեբակրեացէ զքեզ, որոյ անհնարին է կերակրիլ, բայց միայն որդւոյն Աստուծոյ, որպէս քարիդ անհնար է կերակրիլ մարմնոյ, որում պատասխանէր ասելով. [եր. 231ա] ոչ միայն այդով հացիւ կերակրիմ, որ եղ[է](**) ես մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ. և ինձ գիտել որպէս մարդոյ, և զայդ այդպէս անհնար է կարծել, նոյնպէս և յաչտարակն ելանել, և ի լեառն բարձրագոյն, քան զամենայն լերինս. իսկ զայդ կարծելով զաւաջինն, կարծելի է ոչ միայն իմանալի կերակրոյ ցանկալ, այլ և մարդկապէս քաւասուն աւր մեկուսացեալ, մարմնեղէն կերակրոյ ցանկացաւ, մինչեւ լսել սատանա[յ]ի, որպէս լսել ձայնի աներեւութի. իսկ երկուցն եւս ելանել յաչտարակ տաճարին և ի լեառն բարձրագոյն, քան զամենայն լերինս, երեւելապէս լինել անհնարին, կարծեմ։

«Եւ զայս ամենայն տաց քեզ, եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ»(4).— Հանէր զնա ի լեառն բարձրագոյն թագաւորութեանն ցանկութիւնն, զայս, ասէ, պարգեւեցից քեզ, եթէ հնազանդեալ, ինձ, երկիրպագանիցես։ «Երթ յետս իմ սատանա[յ]»(5). սատանա[յ] ըստ եբրայեցւոցն ընդդիմակայ լսի, ցասմամբ ասացեալ, երթ յետս իմ սատանա[յ]. երկուցեալ ի սաստկոյն, փախեաւ ի նմանէ։

(1) Մատթ. ԻԴ. 36։
(2) Եբր. Բ. 7։
(3) Սաղմ. ՃԹ. 1։
(4) Մատթ. Դ. 9։
(5) Մատթ. Դ. 10։
(*) Ջ.ում՝ ըստ։
(**) Ջ.ում՝ եղ։

«Իբրեւ լուաւ Յիսուս եթէ Յովհաննէս մատնեցաւ ի Գալիլիա, թողեալ զնազարէթ, եկեալ բնակեցաւ ի Կափառնաւում»(1). քանզի Գալիլիայ մեկնի խառնակութիւն, իսկ Կափառնաւում տեղի մխիթարութեան։ Արդ ի մատնելն Յովհաննու, եղեւ խառնակութիւն և չմխիթարիւն վասն այնորիկ ասացաւ. եթէ թողեալ զխառնակութիւնն, եկն ի Կափառնաւում, որ կոչի տեղի մխիթարութեան, վասն -զի պարտ էր ի խառնակութենէն հանդիպել Յովհաննու, ի տեղի մխիթարութեան գնալ։ «Եւ ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմա[յ](2). Զաբուղոնի թարգմանի բնակութիւն զաւրութեան, իսկ Նեփթաղիմ ընդարձակութիւն. վասն զի ընդարձակեցաւ չնորհ վարդապետութեանն Քրիստոսի. վասն այսորիկ ասաց և ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմայ բնակիլ։ Զի լցցի մարգարէին բանն, «Եթէ ժողովուրդ որ նստէր ի խաւարի»(3), այսինքն ի կռապաշտութեան և չանաստուածութեան, եաս լոյս մեծ, որ լուսաւորէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ, որպէս աստուածաբան աւետարանիչն վկայէր։

[եր. 232ա] «Սկսաւ Յիսուս քարոզել և ասել. «ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն Ա[սուծո]յ»(4). քարոզէր այնոցիկ, որք լուսաւորեալքն էին և կոչեցեալք։ «Մինչդեռ գնայր Յ[իսու]ս ընդ եզր ծովուն Գալիլէացւոց, եաս երկուս եղբարս, զՍիմովն զկոչեցեալն Պետրոս, և զԱնդրէաս եղբայր նորա, արկեալ ուռկան ի ծով, քանզի ձկնորսք էին»(5). և յետ գնալոյն ի կափառնաւում և ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմա[յ] և քարոզել բաւընդակապէս զմերձեալ արքայութիւնն երկնից. ապա դնայր ընդ եզր ծովուն Գալիլէացւոց, և յիրաւի ընդ եզր, և ոչ ի ծովու ի ներքս, և ոչ ի նաւ մտեալ, քանզի տեսանէր զՊետրոս զվէմն հաստատութեան, որ ոչ երբէք սասանեցաւ յելկոծութենէն ծովու, այսինքն ի ծփանաց երկրիս այսորիկ վարեալ, որ թէպէտ և էր ի նաւի մարդկա[յ]ին մարմնին, սակայն մարմին և արիւն զնա ոչ ուսուցին գիտել զորդին Ա[սուծո]յ»(6).

(1) Մատթ. Դ. 12. տ. մատնեցաւ, մեկնեցաւ գնաց ի Գալիլիա և թողեալ զնազարէթ, եկն։
(2) Մատթ. Դ. 13։
(3) Ես. Թ. 2։
(4) Մատթ. Դ. 17։ Ջ.ում՝ Ա[սուծո]յ, վ. «երկնից»։
(5) Մատթ. Դ. 18։
(6) Մատթ. ԺԶ. 17։

նշանակ է մարմին և արիւն զմարդկային զբաղական զաւանդութիւնս և զվարդապետութիւնս, ընդ նմին և տեսանէր զանդրէաս զեղբայր նորա, զի արկանէին ուռկան ի ծով, վասն զի դեռ եւս չէին լուսաւորեալ լուսովն վերագունիւ, որ լուսաւորեաց զամենայն մարդ, որ գալոց էր յաշխարհ։ Արկանէին զգործ իւրեանց ուռկան կոչեցեալ ի ծովս յալէկոծութենէ կենցաղոյս, [եր. 232բ] իսկ յորժամ արժանաւորեցան տեսանել զանկոծելի զլոյսն և լուսաւորիլ նովաւ, յայնժամ թողեալ զգործ զանցանել ի լուսոյն հետեւեցան ի մեծն յիմանալի և յանեղանելի լոյսն, յաղագս այնորիկ սրտորդք ոգւոց մարդկան, որսալով զնոսա և կորզելով ցանցաւք իւրեանց վարդապետութ[եամ]բն ի ժանեաց և ի քերտոյ կամակոր վիշապին, որ կամի զամենայն մարդ որսալ և արկանել յիւր ի ցան[ց]ան(*), ի հուրն յաւիտենական։

«Եւ մատուցեալ անտի յառաջ եաւս այլ եւս երկուս եղբարս, զՅակովբոս Զեբեդեա[յ] և զՅովհաննէս եղբայր նորա ի նաւի հանդերձ Զեբեդեւ(ս) հարբն իւրեանց»(1)։— Դիտացեալ ամենագէտ փրկչին, քննողին զագիս մարդկան, հրաւիրէր ի բանականացն ձկնորսութիւն յանբանից և զորդիսն Զեբեդեա[յ], դիտացեալ զկնիռ յորդորութիւն նոցա, զոր ունէին առ Ա[ստուա]ծ, ուսոի և նոցա փարփառութեամբ(?) լուեալ զկենարար ձայնն Քրիստոսի, զամենայն երկրա[յ]ին ցանկութեանս զբաղանս լքեալ, ընթացան փութապէս զհետ կոչողին, այլ և զհայրն իւրեանց, և զբնական հայրենի գուբն ի բաց ընկեցեալ, հետեւեցան Քրիստոսի, քանզի լուան իմանալիաւք զհանդերձեալ ձայնն կենարար, որ դոչելոց էր ի նոսա, «եթէ ոք սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, չէ ինձ արժանի»(2), [եր. 233ա] վասն որոյ յառաւել սիրոյն որ առ Քրիստոս զմարմինն իւրեանց կարեաւքն և ցանկութեամբքն խաչեալ(3), և թողեալ զամենայն, լուան ձայնին Քրիստոսի։

«Եւ չրջէր Յիսուս ընդ ամենայն կողմանս Գալիլիացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա»(4)։— Գալիլիա բարբառ Թարգմանի յերբա[յ]նացւոցն ի հայ լեզու փոփոխումն բնականի, զի փոփոխէր զամպարիշտ գործս մարդկան ի բարեպաշտութիւն,

(1) Մատթ. Դ. 21։
(2) Մատթ. ժ. 37։
(3) Գալ. ե. 24։
(4) Մատթ. Դ. 23։
(*) Զ.ում՝ ցանան։

անցանելով և քարոզելով և բժշկելով ոչ միայն զերեւելի ախտաժեսս և զդիւահարս և զլուսնոտս, այլ առաւել զոգւոյն ուղղութենէն, զդիւահարութիւնն և զլուսնոտութիւնն։ Յաղագս այսորիկ ասի չրջել ի Գալիլիա, այսինքն ի փոփոխման բնակութեանս։ Լուսնոտութիւն(*), որպէս ոմանք ասացին, ախտ է ի մարմնի մղձական, որ հանդիպի ի բարձրանալոյ լուսնին առ արեգակն ի չրջագայութեան իւրում, և զի ի ձեւանալ դորա ձեւով իւրով, զանազան ազգութիւն լինի ի մարմնիս կենդանեաց և բուսոց բազմաց, ոչ անդիտելի է զի բազմաք լինին որպէս դիւահարք ի լնալ և ի պակասել լուսնիդ, և է արդ ե՛ւ իսկ է, որ հրաման առ ուրախանա[յ] ընդ լուսնոյդ և յայտնի ի մարդն։

Ե.

«Եւ տեսեալ, ասէ, Յիսուս զժողովուրդն եւ ի լեառն [եր. 233բ] և իբրև նստաւ անդ. մատեան առ նա աշակերտքն նորա. և նորա բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա և ասէր. Երանի է ալքատաց հոգւով, զի նոցա է արքայութի[ւ]ն երկնից. Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին. Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն վասն արդարութեան, զի նոքա յագեսցին. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն. Երանի սրբոց սրտիւ, զի նոքա զԱ[ստուա]ծ տեսցեն. Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Ա[ստուծո]յ կոչեսցին. Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից. Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածիցեն» եւ որ ի կարգին է(1)։

Ի լեառն ելանէր փրկիչն, զժողովրդոյն ազմուկ թողեալ չինքեանէ, առեալ ընդ իւր զաշակերտսն, զորս արժանաւ[որ]եաց(**) առնել իւր խորհրդակիցս. իսկ ի լեառն, թէպէտ և ելանիցէ ոչ միայն յերեւելիս, այլ մանաւանդ յաներեւոյթն, նորին նմանանալ և Մովսէս, յոր ապա ուրեմն զհանդերձեալ և զաւետեաց երկրէն ասէ, զոր խոստացաւ պարգեւել Աբրահամու և ճշմարիտ որդւոցն

(1) Մատթ. ե. 1-11. տ. զ. վասն արդ... երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, հալածեսցին։
(*) Զ.ում՝ այս հատուածի դէմ գրուած է «զարմանք է»։
(**) Զ.ում՝ արժանաւեաց։

նորա, ո՛չ ըստ մարմնոյ ծնելոցն ի նմանէ, [եր. 234ա] այլ ըստ գործոց արդարութեան, թեպետ եւ ի քարանց իցեն ծնեալ եւ յարուցեալ(1). ասացեալ է յառաջին երանութեանն։

«Երանի է աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից»(2).— Խնդրեսցէ ոք, զի՞նչ է զանազանութիւն աղքատաց հոգւով եւ հեզոց, և վասն է՞ր աղքատացն հոգւոցն ասացաւ լինել արքայութիւնն երկնից, իսկ հեզոցն ժառանգել զերկիրն աւետեաց, եւ եթէ զո՞յ դարձեալ զանազանութի[ւն] արքայութե[ա]ննն երկնից եւ աւետեաց երկրին։— Արդ աղքատ և տառապեալ հոգւով, որ վերագոյն ասացաւ, նա է որ ի բարձ[ր]ութենէ (*) զինքն խոնարհեցոյց, որպէս եւ ինքն Քրիստոս իսկ ուսուցանեալ, զկերպարանս ծառա[յ]ի առնլով, որ է հակառակ ապստամբ վիշապին, որ յաղքատական առեղծմանէն ծառայութե[ա]ն վերացոյց զանձն, զկերպարանս տեառն և արարչին առնլով կամեցեալ. իսկ հեզ հոգւով՝ այնպիսին ասացաւ, որ բնութեամբ իսկ եւ ոչ ի բարձրութենէ խոնարհեալ ունի զհոգւոյն անսրտութիւն. որպէս եւ յաղագս Մովսէսին ասացաւ. եւ այրն Մովսէս, ասէ. հեզ էր քան զամենայն մարդկան որդիս(3). նոյնպէս և երանելին Դաւիթ(4), որ յառաւել հեզութենէն ողբայր և զթչնամեացն կործանումն գիւրոցն(5), և այսոցիկ այսպէս որոշեալք ի միմեանց, հեզոցդ և տառապեալ հոգւոցդ։ [եր. 234բ] վհհագոյն թուի ինձ աղքատն եւ տառապեալն հոգւով, քան զհեզն. քանզի մինն ի բարձրութենէ խոնարհեցաւ եւ կամաւոր յաւժարութեամբ աղքատացոյց զհոգին, իսկ միւսն ըստ բնութեան, մանաւանդ եթէ կամաւորութեամբ երկոքին. Քրիստոս զաղքատութիւնն կամաւորութեամբ, իսկ զհեզութիւնն բնութեամբ. վասն զի եւ մեծագոյն է աղքատութիւն հոգւով քան զհեզութիւն։

Երանէ և զայնոսիկ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութե[ա]ն(6). քաղց եւ ծարաւ լինի մարմնոյ կենդանեացն, յորժամ պակասութիւն լինի չորին կերակրոյն կամ խոնաւ ըմպելոյն. և յորժամ այսպիսի պակասութիւն հանդիպի, ցանկան

(1) Յակովբ. Բ. 21։
(2) Մատթ. ե. 3։
(3) Թիւք ԺԲ. 3։
(4) Սաղմ. ԽԱ. 7։
(5) Բ. Թագ. ԼԸ. 33։
(6) Մատթ. ե. 5։
(*) Ջ.ում՝ ի բարձութենէն։

կենդանիք կերակրով եւ ըմբելով լնուլ զիւրեալ պակասութիւնն. իսկ միածին որդին Ա[ստուծո]յ, ոչ զայս քաղցեալս երանեաց, այլ զնոսա, որք անձկանն արդարութի[ան] հասանել, և այնու կերակրով փութան կերակրել զհոգիս իւրեանց, այնպիսիքն իրաւապէս երանին, քանզի թողեալ զմարմնա[յ]ին կերակրոց ցանկութիւնս, բաղձան արդարութեան ճշմարիտ կերակրոյն, ուստի եւ կերակրեսցին ի բոլորեցունց կերակրաւէրն, գիտելով ուստի զկերակուրն խնդրեն փութապէս. սոքայ ոչ լսիցեն զասացեալ բարբառն, եթէ խնդրէք և ոչ առնուք, զի չարաչար խնդրէք. այլ որք խնդրենն մարդկային կերակուր եւ նոյնպիսի փառս երկրայնոյ, [եր. 235ա] այնպիսիքն լսելոց են զասացեալ բարբառդ։

«Երանի ողորմածոց զի նոքա ողորմութիւն գտցեն»(1). զի մեծագոյն է ողորմութիւն, քան զբազում գործս բարիս. եւ Ղուկաս աւետարանիչ ուսոյց մեզ յասելն վասն կոռնելիոսի(2), եթէ աղաւթքն եւ ողորմութիւնն նորայ ելին առաջի Աստուծոյ յիշատակեալ, այլ եւ ի կախաղիկէին բարձր ի գլուխ պարծի ողորմութիւնն առ գաւառաւանուսն. ասացաւ այս եւ ի ձեռն Եսա[յ]ա[յ] մարգարէի եւ մեծութիւն ողորմութեան զկուցաւ(3). բրեւս քաղցելոց զհաց քո, զաղքատան անյարկս տար ի տուն քո, եթէ տեսանիցես զմերկն, զգեցուցանիցես, եւ յ[ր]ուսանանեաց զաւակի քոց ակն մի արկանիցես. յայնժամ կարդասցես եւ Աստուած լսիցէ քեզ, եւ մինչդեռ չիցէ կատարեալ խնդրուածքն ի շրթունս քո, ասասցէ, եթէ ահա հասեալ եմ։

«Երանէ սրբոց սրտիւ, զի նոքա զԱստուած տեսցեն»(4). որք սուրբ են սրտիւ հաղելինաւ, և մեկուսացեալք յամենայն ազտոյ, այնպիսիքն եւ ի մարգարէութենէ ոչ հեռանան. իսկ մարգարէք հոգւոյն աչուք զԱստուած տեսանեն, որպէս հնար է ստեղծուածոյ զարարիչ տեսանել. եւ այս յայտնապէս ցուցաւ ի մարգարէիցն, որպէս Եզեկիէլ ի քե[ր]ովբէս(*) տեսանել ասի զԱստուած, որ նստէր ի վերայ քերովբէիցին(6). Եսայիաս համբարձեալ զաչէ. ասէ. տեսի զՏէր նստեալ [եր. 235բ] յաթոռ

(1) Մատթ. ե. 7։
(2) Գործք. Ժ. 4։
(3) Եսայի ԾԸ. 7։
(4) Մատթ. ե. 8։
(6) Եզեկ. Ա.
(*) Ջ.ում՝ ի քեռվբէս։

1406-2003

Հայաստանի ազգային դիմադրություն

բարձ[ր]ութեան (տ!) (*) և վերացելոյ, և սրովբէք չուրջ զնովաւ (1)· այլ և ցփիլիպոս ասացաւ ի Փրկչէն. «այդչափ ժամանակս ընդ ի[ս] եղեր փիլիպպէ, և ո՛չ տեսեր զհայր իմ· որ հասս զիս, որպէս պարտ է զմիածին որդի Աստուծոյ տեսանել, հասս նա եւ զհայրն իմ (2)· նոյնպէս եւ Միքիաս ի դիրս թագաւորութեանն ասաց ցԱգաւորն, «Տեսանեմ, ասէ, զերկինս բացեալ եւ զհրեշտակս առաջի Աստուծոյ» (3)։ Բայց խնդրեսցէ ոք, եւ զի՞րդ ասացաւ, թէ զԱստուած ոչ ոք հասս, եւ ասա դարձեալ ասաց, թէ սուրբք սրթիւք զԱստուած տեսցեն։ Այս ասացուք, թէ ըստ բնութեան գոյացութեանն անհնարին է տեսանել զերկրելիսն տեսանել, բայց որք ճանաչեն սրթիւ սրբով, նթէ տեսիլ է երևելիոց և աներևութից, եւ նախախնամէ ամենայն արարածոց, եւ նթէ լայս է հրեշտակս եւ ճշմարտութիւն եւ կենդանութիւն եւ չարութիւն եւ զհրամանս նորայ ամենեւին կատարէ, զայնպիսին, ասէ, տեսանել զԱստուած, տեսանելով զդէմս նորա եւ զգղեցութիւն. զայս զսրբութիւն սրտի մաղթէ եւ սաղմոսերգուն, զԱստուած տեսանել չինքեան, զի բացցին աչք նորա և տեսցէ զաքանչելիս նորա յաւրինաց նորայ։

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (4)· մեծ քան զամենայն խաղա[ղ]րար ասի որդին Աստուծոյ, որ քակեաց զմիջնորմն [եր. 236ա] ցանկոյն, և արար խաղաղութիւն երկնաւորաց ընդ երկրաւորս· ուստի եւ ցչակերտս իւր ասաց· «զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, զխաղաղութիւն զիմ թողում ձեզ» (5)· ի նա գրեցաւ սաղմոսն հեթանոսներորդ առաջնորդ, ուստի սկիզբն արարեալ ասէ· «Աստուած զդատաստանս քո արքայի տուր և զարդարութիւնս քո որդւոյ արքա[յ]ի» (6)· ինքն էր արքայ, այլ և որդի արքայի, զդատաստան ի հաւրէ հայցէր առնուլ, որպէս որդի հաւրն· քանզի հայր, ասէ, զոք ոչ դատի, այլ զամենայն դատաստանն եա որդւոյ իւրոյ (7)· խնդրէր եւ զարդարութիւն ի հաւրէ, որպէս ճշմարիտ

(1) Եսայի Ջ. 1-4։
(2) Յովհ. ԺԴ. 9։
(3) Գ. Թագ. ԻԲ. 19. ոչ բառացի։
(4) Մատթ. ե. 9։
(5) Յովհ. ԺԴ. 27։
(6) Սաղմ. ՀԱ. 2։ Ջ.ում՝ արքի։
(7) Յովհ. ե. 22։
(*) Ջ.ում՝ բարձութեան։

մարդ, այլ ոչ որպէս որդի, քանզի ինքն էր արեգական արդարութեան. արդ վասն այսորիկ յիշեցաւ Սաղմոս, վասն զի ի Սողոմոնի վերագրեալ է, և ոչ եթէ յորդին Դաւթայ (*) ասացեալ է, որ ի Բերսաբէէ, այլ ի մեծն Սողոմոն. յարարիչն ամենայնի, վասն զի Սողոմոնիւ բառդ չկարացեալ խաղաղական մեկնի. վասն այսորիկ ի վեր[յ] Սողոմոնի գրեցաւ. ապա ուրեմն այնոքիկ, որ խաղաղար[ար]ի մեծի Նմանին եւ առնեն խաղաղութիւն մարդկան անջատեցելոյ ի միմեանց խորհրդակցութեամբ բանսարկուին, եւ առեալ այնոքիկ, որ զմարդիկ մեկուսացեալս ի բարեպաշտութենէ՝ վարդապետութեամբ հաշտեցուցանեն ընդ Աստուծոյ, այլ եւ զինքեանս եւս առեալ բարի [եր. 236բ] գործովք և արտասուաւք խմանալեաւք (**) եւ այլ առաքինութեամբք, զի՞րդ ոչ կոչեսցին որդիք Աստուծոյ։

«Երանի, որ հալածեալ իցեն վասն արդարութեան. զի նոցա է արքայութիւնն երկնից» (1)· — Բազումք յաղագս Քրիստոսի արեգական արդարութեան հալածեցան ի բանաւորաց յայրս եւ ի փոպարս, եւ բազումք սրով եւ տանջանաւք, եւ ի մարմնոց իւրեանց հալածեցան, որ իսկապէս հալածումն վասն սիրոյն Քրիստոսի. որպէս նմանողք երանելոյն Գաւդոսի, զորս ոչ սուր եւ ոչ հալածանք եւ ոչ մահ, եւ ոչ սէր կենդանութեան երկրայնոցս, եւ զթողումն կարեաց կարէ մեկնել ի սիրոյն Քրիստոսի (2)· ասացեալ է արքայութիւնն երկնից, հանգոյն աղքատացն հոգւով, որք վասն Քրիստոսի նմանելոյն աղքատութեամբ, ժառանգեն զարքայութիւնն երկնից։

«Երանի է ձեզ, յորժամ նախատեսցեն զձեզ եւ հալածեսցեն և ասասցեն զամենայն չար զձէնջ սուտ վասն իմ» (3)· — Երանէ զառաքեալսն, յորժամ նախատիցին եւ հալածիցին, և լսիցեն զամենայն բան չար, եւ ոչ որ վայրապար հալածիցի, երանելի է այնպիսին· քանզի բազումք վասն կախարդութեան սրտաքեցան եւ նախատեցան և լսեան զամենայն բան չար, այլ զի յաղագս արդարութեան եւ բարեպաշտութեան ոչ հալածեցան, քէպէտ եւ լսեան զամենայն բան չար, այլ ճշմարիտ և ոչ սուտ,

(1) Մատթ. ե. 10։
(2) Հռոմ. Ը. 35-36։
(3) Մատթ. ե. 11. ս. զամենայն բան չար։
(*) Ջ.ում՝ Դաւդայթ։
(**) Ջ.ում՝ արտասուաւք խմանալեաք։

սոքայ ոչ երանին, այլ մանաւանդ նախատին եւ հերքին արժանապէս, [եր. 237ա] իսկ որ յաղագս Քրիստոսի հալածին եւ նախատին եւ լուիցեն զամենայն բան չար, նոքա են երանելիք. է եւ հալածանք եւ նախատանք (!) յիմար մարդկանէ, այլ ոչ է ճշմարիտ հալածանք, նոյնպէս եւ բան չար եւ սուտ։

«Դուք էք աղ երկրի, եթէ աղն անհամեսցի, ի՞ւր յալեսցի»(1)։ Աղ չափաւորապէս խառնեալ ի կերակուր, զանհամութիւնն ի համաւորութիւն դարձուցանէ, և զդառնութիւնն ի քաղցրութիւն, իսկ եթէ չափաւորապէս անգիտանայցէ ոք խառնել, այլ առաւելի(!) կամ պակաս, անհամութիւն յանհամութեան ինա[յ], եւ դառնութիւն ի դառնութեան. նոյնպէս աղ երկրի անուանեցան աշակերտքն ի վարդապետէն, վասն զի գնդեցիկ եւ չափաւոր վարդապետութեամբ, որպէս և հանդուրժէին լսելիք մարդկան լսել, զամպարշտութիւն երկրայնոցս և զդիւապաշտութիւն, որ են անհամութիւն եւ դառնութիւն հոգւոց՝ ի բարեպաշտութիւն եւ յառաքինութիւն եւ յանուշութիւն եւ ի քաղցրութիւն փոխեցին, կարծեմ զայս աղ նշանակելով Եղիսիոս մարգարէ, զդառնութիւն ջրոյն երիքովի քարոյրութիւն փոխեաց(2)։ այս աղ վարդապետութեան եթէ անհամեսցի և վարդապետեսցի, բայց եթէ արտաքս ընկեսցի եւ կոխան լիցի ի մարդկանէ, աղ էր եւ Ցուդա մի յերկոտասանից, բայց անհամեալ ի սատանայէ դառն[եր. 237բ]ացեալ եղև, արտաքսեցաւ ի Քրիստոսէ, եւ եղեւ կոխան ի մարդկանէ. բարեպաշտաց էր աղ, և սպասնայ որ դառնացեալ յիւրմէ չարութենէն, անկաւ ի հրեղէն փառացն, ի քերովբէէ և եղև ծաղր և խաղալիկ(!) հրեշտակաց, և կոխեցաւ ի վարսաւորէ և եղև ծաղր և խաղալիկ(!) հրեշտակաց, և կոխեցաւ ի սրբոց սրանց, որք հրամա[յ]նացան ի վերա[յ] իւրից և քարբից աներեւութից գնալ և կոխել նմանապէս Քրիստոսի գիմանալի առեւծն եւ գվիշապն(3)։ և գի՞րդ արդեաք ոչ կոխեցան որք ի սուտերէն Պետրոսի(4) եւ ի քրտանէ վարշամակացն Պաւղոսի փախուցեալ արտաքսէին(5)։ այլ եւ ինքն իսկ Փրկիչն խոստացաւ իշխանութիւն պարգեւել սրբոց իւրոց, կոխել զաւձս եւ զվիշապս առերեւոյթս(*) եւ զամենայն զաւրութիւն սատանայի։

(1) Մատթ. ե. 13. տ. անհամ ի՞ւր յալեսցի։
(2) Դ. Թագ. Բ. 21։
(3) Սաղմ. Ղ. 13։
(4) Գործք. ե. 15։
(5) Գործք. ԺԹ. 12։
(*) Ջ.ում՝ արերեւոյթս։

«Դուք էք լոյս աշխարհի, ոչ կարէ քաղաք թաքչել, որ ի վերա[յ] լերին կայցէ»(1)։— Լոյս հակառակ և հալածիչ եւ կռուսիչ է խաւարի, որպէս ամենեցուն յայտնի է. ի ծագիլ լուսաւորացուլ, խաւարն հալածեալ կորնչի եւ լոյսն ծաւալի. նոյն սուրինակ եւ լոյս իմանալի վարդապետութիւն սուրբ առաքելոցն ծագեալ, գխաւարեալ ոգիս մարդկան ի խաւարէն, որ էր ի վերա[յ] անդրնդոց, մթին վարդապետութեամբն արտաքսեցոյց, և գճշմարիտ լոյսն Քրիստոսի ծաւալեցոյց։

«Ոչ կարէ քաղաք թաքչել որ ի վերա[յ] լերին կացցէ»(*)։— Քաղաք անուանեաց զառ[եր. 238ա]աքելսն, ոչ զայս երեւելի քաղ[աք]ս(**), որ ի պարապաց եւ յայլ հողմէն նիւթից ունի գչինութիւն, գի այսպիսի քաղաք, որ ի վերա[յ] լերին չինեալ է, թէպէտ և մեծ իցէ, կամ յաղագս հեա[ւտու]թեան(***) հայոցին և կամ վասն բարձրութեանն լերինն թաքչի չերեւելի անասնելեացս, այլ լեառն, գինքն անուանեաց, որպէս ասացաւ յաշխարհանան սաղմոսերգին. Համբարձի գաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ աւգնութիւն(2)։ եւ քաղաք զառաքելսն զորդիս վերին քաղաքին ե[րուսաղէ]մի. այսպիսի քաղաք, որ չինեալ է ի վերա[յ] իմ լերինս և վիմիս, ոչ կարէ թաքչել, և գի ոչ թաքեան առաքելքն քաղաքն ի վերա[յ] լերինն. և վարդապետութիւն նոցա ի մարդկանէ. և սաղմոսերգուն վկայէ ասելովք. Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա եւ ի ծագս տիեզերաց բանք նոցա»(3)։ այն երանելի լոյս ընդ գրեանսս եւ ընդ չափալ աշխարհիս այսորիկ, որ իշխանն անուանեցաւ խաւարիս այսորիկ՝ ոչ ծածկեցաւ. վասն գի ելոյց զճրագն գայն, ոչ եա իշխանութիւն գրեանսին այնորիկ ծածկել գնա, այլ ի վերա[յ] աչառնակի իւրոյ իշխանական գոյացութեանն. և գի լոյս տացեն բոլորովին աշխարհիս. ասի գրեան սատանայ, եւ այսու սուրինակաւ, գի ի պարիսպ իւրում զամենս ուսուցոյս ի վարդա[եր. 238բ]պետութենէն Քրիստոսի, գգիտութիւն և գառաքինութիւն, հարկաւորեցուցանէ ոչ վարդապետել այլոց, այլ թաքուցանել, որ առաքեալ գտապանդն եւ հրապուռ

(1) Մատթ. ե. 14։
(2) Սաղմ. ճԻ. 1։
(3) Սաղմ. ԺՀ. 5։
(*) Ջ.ում՝ կացէ։
(**) Ջ.ում՝ քաղս։
(***) Ջ.ում՝ «հեռութեան»։

րեալ ի նորա ուսուցանելոյն եւ թագուցանել, ասի, յերկրի, յիւր մարմնական ախոյն. ուստի եւ անթծեալ ելանէր ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց եւ կրճել ատամանց. իսկ որ զինիգն առ եւ չահաւարեաց, նորա ոչ թագուցեալ ընդ գրուանաւ խորշախաւքեան խաւարանային, այլ լուսաւորեցուցեալ եւ զայլս, լուսաւ. «Ժառա[յ] բարի եւ հաւատարիմ, մուտ յուրախութիւն տեառն քո»(1). նոյնպէս եւ որ զերկուան, եւ զինչ նշանակէ հինգն կամ երկուան. կամելով Աստուծոյ յիւրաքանչիւր անգուղ ըստ կարողութեան պատմեացուք։

«Մի համարիք եթէ եկի լուծանել զաւրէնս կամ զմարգարէս, ոչ եկի լուծանել, այլ լնուլ»(2)։— Այլ զի՞որդ լուծումն աւրինացն ոչ կարծիցի ոմանց ի պարզամտացն. «Մովսէսի հրամայեաց Աստուծոյ աւրինադրել հանգիստ լինել ամենայն գործուածոց յուսուր եւթնեւրորդի. ուստի եւ զիսյան, որ քաղէր ի շաբաթուն, քարկոծեալ սատակիւր. այլ և ծառա[յ]ից ազատութիւն և հաւասին պարտուց. և Քողումն եւթնեւրորդ տարւոջ, և յ[ի]անեւրորդումն, որ կոչիւրն ավրիւղիոն հրամայեցաւ լինել(3)։ Առ այսոքիւք եւ ի չորքոտանեաց և ի թռչնոց [եր. 239ա] եւ ի ջրայնոց յոմանց մնկուածոյց մովսէսական աւրէնքն(s!) կերպրել(4), նաև ի քահանայական աշխիճանն անհնարին էր մերձենալ միականոյ, կաղի կամ գաւաճանին, կամ այլպիսի ինչ ախտացեալ մարմնով. արդ եթէ այդ ամենայն այժմ անխտրութեամբ լինեն ի քրիստոնեայս, ոչ ի չաբաթս պատարել ի գործոյ գործուենայց. եւ զամենս ի կենդանեացն կերակուր առնել, եւ ի ձեռնադրութիւն քահանայութեան ոչ արգելուլ զամենց ի բծուորց. և ծառա[յ]ից ազատութիւն և պարտուց Քողութի[ւն] ըստ հրամանի սահմանեալ ժամանակին ոչ լինի. և այլ բազմաց ոչ հրամայելոյ ի մովսէսականին լուծանիլ, որ այժմ ոչ կատարի. զի՞որդ ասէ. «Ոչ եկի լուծանել զաւրէնս կամ զմարգարէս, այլ լնուլ». զայդ ամենայն խնդիրս լուծցուք։

«Ամէն ասեմ ձեզ ոչ սպառեսչիք զքաղաքս Ի[սրայե]ղի, մինչեւ եկեսցէ որդի մարդոյ»(5)· — ո՞ր իցեն արդեւք քաղաքք Ի[սրայե]ղի զոր ոչ կարէին առաքեալքն սպառել մինչեւ ի գալուստն

(1) Յովհ. ԺԳ. 22։
(2) Մատթ. ժ. 9։
(3) Մատթ. ժ. 10։ Տպ. «Զի արժանի է մշակն կերակրոյ իւրում»։
(4) Մատթ. ժ. 14։ Տպ. «Թօթափեսչիք զվնչին յոտից ձերոց»։
(5) Մատթ. ժ. 23։
(*) Զ.ուսմ՝ «միմեանց», «ի» կր պակասէ։
(**) Զ.ուսմ՝ «մի գուցէ» առանց հարցականի։

Ք[rիստոս]ի· զի նիա քազաքս Ի[սրայել]ի ասիցէ զերկիրն զոր քաժանեաց Ի[սրայել]ազգացոցն Յեսու որդին Նաւեա[յ], զայնասիկ զիւրազգին էր սպառել իւրաց(**) առաքելոց ի սարբս երիս կամ չորս, ուստի եւ որք Քաղեբին զժոզաւորդն Ի[սրայել]ական ըստ հրամանի Քագաւորին, եւ ոչ առրի մի յամեցին ի չրջագայութեանն· [ես. 260ա] Իսկ նիա քազաքս Ի[սրայե]ի ասէ զամենայն երկիրս անառնողի զԱ[ստուա]ծ նախկին յամենայն քազաքս Ք[rիստոս]ի, ոչ հասին առաքեալքն, լայց միայն եւ ասյցիմք զայդ նիա հասին, ըստ ասացողին «Յամենայն երկիր ել բարբառ նոցա, եւ ի ծագս սիևզկրաց(*) խաւսք նոցա»(1)· սակայն յերկսասանիցն ո՛չ ոք չրկնաւ ի քազաքս Ի[սրայե]ի մինչև ցգալուստն Ք[rիստո.]ի· արդ, որպէս ինձ Քաւի, այսպէս իմանալի է· քազաքս Ի[սրայե]ի զքազաքս Ք[rիստոս]ի· քանզի Ք[rիստոս]ս Ի[սրայե]ղ կոչեցաւ ի մարգարեեն· «Յակովք ծառայ իմ ուզնական եղեց նմա· Ի[սրայե]ղ ընտրեալ իմ, զոր ընկալա՛ անձն իմ, եմա՛ զոգի իմ ի վերա[յ] նորայ, եւ իրաւանս հեթանոսաց պատմեսցէ»(2)· զայսոսիկ Ի[սրայե]ի քազաքս, այսինքն է զամենայն բնակիչս երկրիս ոչ կարել սպառել· լուսաւորիալ վարդապետաւթ[եամ]ք ամենայն աշակերտելք երկոյասանիցն վարդապետաւթ[եամ]ք՝ մինչև ի գալուստն Ք[rիստոս]ի փառաւք իւրովք·

«Ոչ է աշակերտ առաւել քան վարդապետ իւր և ոչ ծառա[յ] քան զՏ[ե]ր»(3)· Աշակերտ մինչդեռ եւս յաշակերտաւթե[ա]ն է, անհնարի՛ն է լուսաւոյն լինել քան զվարդապետն· եւ ծառայն յորժամ ի ծառայութե[ա]ն առաւել քան զո[ե]ր· քայց ասացեալ է յինքն եւ յառաքեալսն· վ[ա]ս[ն] զի ասաց, նիա հալածիցին զձեզ յայս քազաքէ յայլ քազաք նրիայք, և նիա յայնմանէ, ի միւս յայլ· այժմ որպէս մխիթարելով զնոսա վ[ա]ս[ն] փախըստեանն, ասէ մի՛ արամիցիք նիա վախուցանիցին զձեզ [ես. 260բ] զի ոչ նիա դուք ծառայքդ եւ աշակերտքդ լուսաւոյն էք քան զո[ե]րս եւ զվարդապետս· արդ նիա զիս սեր աշխարհս, եւ ասնս, քնեզդեզուզ կոչեցին եւ անուանեցին, զի՛նչ արդեւք զձեզ ընտանիսդ իմ·

(1) Սաղմ. ԺԸ. 5·
(2) Ես. ԽԲ. 1·
(3) Մատթ. ժ. 24·
(4) Մատթ. ժ. 26·
(*) Տպ. «աշխարհի»·
(**) Ձեռմ՝ «երուց»(s!)·

«Մի երկնչիք ի նոցանէ· քանզի ոչինչ է ծածկեալ որ ոչ յայտնեացի, և գաղտնի, որ ոչ գիտասցի»(1)· Թեպեա եւ ի մարդկանէ ծածուկ ինչ գործեցեալ եւ գաղտնի՝ ոչ յայտնեացի մարդկան, սակայն ի ժամանակի, յորում գասի Ա[ստուա]ծ զգաղտնիս մարդկան՝ ամենայն յայտնեալ յանդիմանի, յորժամ եկեսցէ Տ[ե]ր որ լուսաւորեսցէ զգաղտնիս խաւարի, եւ յայտնեսցէ զխորհուրդս սրտից·

«Զոր ասեմ ձեզ ի խաւարի, ասացէք ի լոյս, եւ զոր լսէք յունկանէ, քարոզեցէք ի վերա[յ] տանեաց»(2)· Զոր այժմ առանին եւ առակաւք ուսուցանեմ, քարոզեցէք համարձակաւթ[եամ]ք և յայտնապէս, և զոր ասեմ յունկան եւ գաղտնի, զայդ ի վերա[յ] տանեաց, այսինքն բարձր ձայնիւ զամենեսեան կամեցդս ուսուսցէք·

«Մի երկնչիք յայնցանէ, որ զմարմինն սպանանեն եւ զոգին ոչ կարեն սպանանել»(3)· Ուսուցանէ այժմ, նիա որ սպանին, ո՛չ է հոգի, այլ մարմին, ի զգայութենէ յանզգայութի[ւն] փոփոխեալ· իսկ մահ հոգւոյ, է փոփոխիլ յառաքինութենէ ի չարութի[ւն], եւ յանմեղութենէ ի մեղս· եւ հոգի որ մեղանչէ, նայն և մեռցի, ասաց մարգարէն յառաջագոյն(4)· [ես. 261ա] «Երկերուք առաւել ի նմանէ, որ կարող է զհոգի և զմարմին կորուսանել ի գեհենի»(5)· կորուստ հոգւոյ եւ մարմնոյ զտանջանսն գառն և զյաւիտեանական ասէ, ընդ նմին զհակուցանէ նիա հոգի եւ մարմին ի միասին տանջին·

«Ո՞չ սպաքէն երկու ճնճղուկ[ի] դանդի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ ոչ անկցի յերկիր առանց հաւր ձերոյ· իսկ ձեր եւ հար գլխոյ Քուեալ իսկ է»(6)· Զի նիա ճնճղուկ մի ոչ անկցի յերկիր առանց հրամանի Ա[ստուծո]յ Հաւր ձերոյ· զի՞ արդեւք ի ձէնջ մատնեսցի ի ձեռս Քագաւորաց կամ դատաւորաց՝ առանց հրամանի Ա[ստուծո]յ Հաւրն ձերոյ երկնաւորի, այդ ըստ

(1) Մատթ. ժ. 26· Տպ. «Մի այսուհետև երկնչիցիք ի նոցանէ. զի ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի և գաղտնի, որ ոչ ծանիցի»·
(2) Մատթ. ժ. 27·
(3) Մատթ. ժ. 28· Տպ. «եւ մի... սպանանեն զմարմինն»·
(4) Եզեկ. ԺԸ. 4 և 20· Տպ. «Անձն վ. «հոգին»·
(5) Մատթ. ժ. 28· Տպ. «Այլ երկերուք դուք... յայնմանէ» վ. «ի նմանէ»·
(6) Մատթ. ժ. 29· Տպ. «յերկիր ոչ անկցի... այլ ձեր և ամենայն իսկ հար...»·

ճառիք ասացի, իսկ ըստ վերաբերութե[ան] առակի, ճնճղուկ կոչէին մարդիկ վերամբարձեալք, ոչ մեծամիծք որպէս զարծուխս, և ոչ արժանիս անգանոյն՝ որպէս առատակ եւ ագռաւնի. երկուք վաճառին դանդի միոյ. զի որպէս թիւդ երկու պատչաճ է անարգոց կենդանեաց, նոյնպէս և յանարդս եւ ի նուազս գոյի. քանզի անարիմիզ(*) ձախազութե[ան] նշանակ է։

«Ձեր, ասէ, և հեր գլխոյ թուեալ է»։ Ձեր, աչակերտացդ թմոց, եւ նմանազոյց ձերոց եւ հեր գլխոյ թուեալ են, այսինքն ոչ մեծամեծք գործք այլ և նուազ, կարծեցեալ աւելորդ ի բազմոց, համարեալ են առաջի Ա[սուծո]յ։

«Մի՛ երկնչիցիք, լաւագոյն էք քան զբազումս ճնճղուկս»(1)։ Բազում ասաց եւ ոչ զամենեսեան. քանզի քան զամենայն ճընճղուկս ոչ էին լաւագոյն [եր. 261բ] առաքեալքն, զճնճղուկսն ցոյն, որ միայնացաւ ի տանիսն յոյն։

«Մի՛ համարիք եթե ակն խաղաղութի[ւն] առնել(**) յերկիր, ոչ ակն արկանել խաղաղութի[ւն], այլ սուր. քանզի ակն քակել զորդի(***) ի հաւրէ, և զդուստր ի մաւրէ եւ զնարան ի սկեսրէ իւրմէ, և թշնամիք առն ընտանիք իւր»(2)։ Ոչ ակն Որդին Ա[սուծո]յ զերկրաւոր խաղաղութի[ւն] արկանել, որ լինի ի սիրոյ զբազմանց աչխարհիս այսորիկ, որ ոչ իցէ արժանի նմա, այլ որ առնուցու զխաչ իւր եւ երթիցէ զկնի նորայ, որպէս երանելին Պաւղոս ասէ. «ինձ աչխարհ ի խաչ ելեալ է, եւ ես աչխարհի»(3). այսինքն[ն] թէ աչխարհիս գործք մեռեալ են յիս եւ ես մեռեալ եմ եւ ագռաւեալ յաչխարհիս և ի մարմնական ցանկութե[ան]ց. եւ եթե մեկնեսցուս հրամայէ զորդի ի հաւրէ և զդուստր ի մաւրէ, զայս բազում արարին ի ք[րիստո]սական գնդէ վ[ա]ս[ն]

(1) Մատթ. ժ. 31։ Տպ. «նե արդ մի՛... զի լաւ էք...»։
(2) Մատթ. ժ. 34-36։
(3) Գաղ. Զ. 14։
(*) Ասարիովն, թնագրի դանգ բառի համաղօր գրամ է. գործադրում են Ոսկեբերան, Մատթէոսի Մեկնութեան մէջ, վենեսիկ, Ա. հատոր, էջ 129։ Տիմոթէոս կուզ, Լյմ. եր. 286։ Շիրակացի, Գատկանեան, եր. 33, եւայլն։ Հետաքրքրական է, որ Շիրակացու և Սիւնեցու բացատրութիւնների մէջ նմանութիւն կայ. Շիրակ. «քոս երայեցւոց ասարիոն՝ նուագութիւն կոչի»։ Տե՛ս և Աբրահամեան, «Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը», 1944, եր. 254։ Ամառեան, տե՛ս ասար կամ ասարիոն բառը։
(**) Տպ. «արկանել»։
(***) Տպ. «զայր ի հօրէ իւրմէ, և զդուստր ի մօրէ իւրմէ»։

սիրոյն, որ առ Ա[սուա]ծ, քակցին դինքեանս յորդւոց եւ ի դստերաց, ի հարց և ի մարց, և յամուսնս այսորիկ ի միմեանց և մեկնեսանելոյս եւ մերձենալոյս առ Ա[սուա]ծ՝ լինէին առն թշնամիք ընտանիք իւր, ըստ թշնամութե[ան] երկնայնոցս. ապա ուրեմն, ոչ ակն նա զայս խաղաղութի[ւն] արկանել յերկիր, այլ զերկնային խաղաղութիւնն զայն, զոր խոստացաւ առաքելոցն. «Խաղաղութի[ւն] զիմ տամ ձեզ, զխաղաղութի[ւն] զիմ թողում(*) ձեզ»(1), զայն խաղաղութի[ւն], զոր որոյ երկնայնոցն ընդ երկրային, քակել զմիջնորմ ցանկոյն, որպէս և [եր. 262ա] հրեչտակաց գունդն ի ծնանելն նորա գոչէին ասելով. «փառք ի բարձունս Ա[սուծո]յ և յերկիր խաղաղութի[ւն] և ի մարդիկ(**) հաճութի[ւն] ընդ երկնայինսն(2)(***)։

«Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ չէ(†) ինձ արժանի, եւ որ սիրէ զաւստր կամ զդուստր առաւել քան զիս, չէ ինձ արժանի։ Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի»(3)։ Ոչ ասաց, եթե ոչ պարտի սիրել զհայր կամ զմայր, զաւստր կամ զդուստր, այլ առաւել քան զԱ[սուա]ծ ոչ է պարտ սիրել. զի որ սիրէ ոք զինչ առաւել քան զԱ[սուա]ծ, զկին կամ զորդիս կամ զդստերս կամ զկերակուր, զսակի կամ զարծաթ, ա՛յն է նորա Ա[սուա]ծ, որպէս առաքեալ[ն] ասաց. «Որոց Ա[սուա]ծ որովա՛յն իւրեանց է եւ փառք, ամաւթն իւրեանց»(4). իսկ որ ի վերայդ ած, «եթե ոք ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի», յառաջագոյն ըստ կարգութե[ան] մեկնեցաւ։

«Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վ[ա]ս[ն] իմ, գտցէ զնա»(5)։ Որ սիրէ ոք զաչխարհս և զինչս աչխարհի, այնպիսին կորուսանէ զհոգի իւր, իսկ որ յաղագս սիրոյն ք[րիստո]ի կորուսանէ եւ մեռուցանէ զանձն իւր ի ցանկութիւնեն աչխարհի, այնպիսին գտցէ զնայ. և որ ընդունի զվարդապետութի[ւն] առաքելոցն, զվարդապետութիւնն ք[րիս-

(1) Յովհ. ԺԴ. 27։
(2) Ղուկ. Բ. 14։
(3) Մատթ. ժ. 37-38։
(4) Փիլիպ. Գ. 19։
(5) Մատթ. ժ. 39։
(*) Ձուտ՝ «թողուն»։
(**) Ձուտ՝ «հարկիկ»։
(***) Տպ. չիք «ընդ երկնայինսն»։
(†) Տպ. «ոչ է»։

տոս]ի ընդունի։ Եւ որ ընդունի զմարգարէ, որպէս պա՛րտ է զմարգարէ ընդունել, հաղորդակից [եր. 262բ] լինի վարձուց մարգարէին(1)։ Եւ որ ուսուցեալ միւսմ ի փոքրկանցս յայտնէ, որ փոքր եւ նուազ է գիտութ[եամ]բ և առաքինութ[եամ]բ, զնշմարիտ դիտութիւնն և զառաքինութիւնն, զոր նշանակեաց ցուրտ ջրով(2), վ[ա]ս[ն] որոյ ոչ ասաց պարզապար ջուր, այլինքն զնշմարիտ վարդապետութիւնն։ Եւ մի՛ բաժակ ասաց, և ո՛չ երկուս կամ երիս, քանզի մի վարդապետութի[ւն] Հոգւոյն Սրբոյ, թեպետ եւ բազում յղանակաւք իմանի(*)։

Է.

«Իսկ Յովհաննէս ի բանտին իբրև լուաւ զգործսն Յ[ի.ուս]ի, առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց եւ ասե ցնա. Դո՞ւ ես որ գալոցն ես, թե այլուստ ակնկալցուք»(3)։ Տեսեալ Յովհաննու զՀոգին Ս[ուր]բ՝ ի տեսիլ աղաւնոյ իջեալ ի վերա[յ] Ք[րիստոս]ի, լուեալ եւ զձայնն ի յերկնից «Եթե Դո՛ւ ես Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»(4), եւ զարձեալ տեսեալ զՅ[իսուս]ս եւ ասացեալ «Ահա գառն Ա[ստուծո]յ, որ բառնա[յ] զմեզս աշխարհի»(5), զի՞րդ այժմ թերահաւատեալ եթե նա իցե Ք[րիստո]ն, առաքէ զաշակերտան իւր հարցանել զնա, «Դո՞ւ ես որ գալոցն ես, եթե այլուստ ակն ունիմք»։ Առ այս ասացուք կարճառաւտիւք. ոչ եթե ինքն թերահաւատեալ առաքեաց առ Յ[իսուս]ս հարցանել զնա, այլ վ[ա]ս[ն] աշակերտացն իւրոց թերահաւատութի[ւն]. զի հաւատացուսցէ զնոսա ի նորին բերանոյ Ք[րիստոս]ի, եթե նա՛ է որ գալոցն է եւ ոչ է պարտ այլուստ ակն ունել, ուստի և ասացեալ Ք[րիստոս]ի յետ նշանակաց ցուցան[եր. 263ա]եալոյ զա[ստուա]ծաբանութիւնն իւր. «Երանի որ ոչ գայթակղեսցի յիս»(6), և արձակեալ զաշակերտան Յովհաննու, ապա ասէր ցժողովուրդն վ[ա]ս[ն] Յովհաննու այսպէս.

(1) Մատթ. ժ. 41։
(2) Մատթ. ժ. 42։
(3) Մատթ. ԺԱ. 2-3։ Տպ. «Իբրև լուաւ ի բանտին» «Քրիստոսի» վ. «Յիսուսի»։
(4) Մատթ. Գ. 17։
(5) Յովհ. Ա. 29։
(6) Մատթ. ԺԱ. 6։
(*) Մուսայուածք է նշանակել Զ.ով սկսուած հատուածը, եր. 40, պարբերութիւն չորս, «Եւ իբրև էլ նա ի լեռնէն»։

«Զի՞նչ ելէք տեսանել յանապատի, եղէ՞գն չարժուն ի հողմոյ, այլ զի՞նչ ելէք տեսանել. մա՞րդ ի հանդերձս փափկութ[ան] զարդարեալ»(1)։ Այս ամենայն ըստ հարցման ասացաւ, վ[ա]ս[ն] զի յառաջագոյն ասացեալ Յովհաննու, եթե «Ահա գառն Ա[ստուծո]յ, որ բառնա[յ] զմեզս աշխարհի»։ Եւ զարձեալ առաքեալ զաշակերտան հարցանել զնա, թե նա՞ իցէ Ք[րիստո]ն. կարծեաց ժողովուրդն(*) եթե չարժեցաւ Յովհաննէս եւ թերահաւատեաց. վ[ա]ս[ն] այսորիկ ասաց, մի՛ կարծէք եթե որպէս եղեգն երե[ի]լի չարժի ի հողմոյ, նոյնպէս եւ Յովհաննէս յաներեւոյթ հողմոյն չարժեցաւ եւ գայթակղեցաւ յիս. և յաղագս այնորիկ առաքեաց հարցանել, այլ վ[ա]ս[ն] գայթակղութի[ւն] աշակերտացն իւրոց. զի լուեալ յինէն «Երանի որ ոչ գայթակղեսցի յիս», ի լոյս ընկեցցեն զգայթակղութիւնն։

Այլ զի՞նչ ելէք տեսանել զՅովհաննէս, մթեթ ա՞յր ի հանդերձս փափկութի[ան]։ Ոչ է վայր Յովհաննու զփափկութիւնէ մտածել, այլ պատեալ է յամենայն զբազմանց աշխարհս։ Այլ մարգարէ՞ կարծիցէք դնա, այլ մեծ եւս քան զմարգարէ, վ[ա]ս[ն] զի ոչ միայն մարգարէացաւ վ[ա]ս[ն] իմ, այլ և մերոց արժանաւորեցաւ զիս, վ[ա]ս[ն] որոյ եւ մարգարէն հրեշտակ անուանեաց զնա։

[եր. 263բ] «Ահաւասիկ առաքեմ, ասէ, զհրեշտակ իմ առաջի քո, որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո»(2)։

«Ամէն ամէն(**) ասեմ ձեզ, ոչ է(***) յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ, բայց փոքրիկն յարքայութի[ան]ն երկնից, մեծ է քան զնա»(3)։ Ծնունդ կանանց որ ի սերմանէ առն ծնանի, որպէս ի սերմանէ առն ծնեալ է, որպէս մեծ մարգարէքն Մովսէս, Եղիա, Եղիսէոս, և որպէս առաքեալքն՝ Պետրոս, Յակովբոս, Յովհաննէս, յայտ իւրաց ոչ ոք մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ, թէպետ և հանգոյն ոք կարծիցէ զնոսա։

(1) Մատթ. ԺԱ. 7-8։
(2) Մատթ. ԺԱ. 10, Մարաք. Բ. 2։ Տպ. «Ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց»։
(3) Մատթ. ԺԱ. 11։
(*) Զ.ում՝ «ժողովուրդն»։
(**) Տպ. երկրորդ «ամէն»ը կը պակասէ։
(***) Տպ. «չէ» վ. «ոչ է»։

«Բայց փոքրիկն յարքայութե[ա]նն երկնից մէծ է քան զնա»։ Փոքրիկ կա՛մ զիւրմէ ասէ, քանզի կր[s]ներագոյն էր քան զՅովհաննէս եւ փոքրագոյնս կարծեալս, ի կուսէ մեծ եմ քան զնա, կա՛մ՝ որպէս ամենք մեկնողքն, եթե բազում դասք են երկնաւորացն, որ ասին յերկնից յարքայութեան՝ քրովբէք, սրովբէք, աթոռք, պետութիւնք, իշխանութիւնք, հրեշտակք, հրեշտակապետք, յերկնաւորացս յայսոցիկ, որ թուի փոքրագոյն, մեծ է քան զՅովհաննէս. քանզի եթե Ց[իսու]ս փոքր ասացաւ քան զերեշտակս վ[ա]ո[ց] չարչարանաց և մահուն, ո՛րչափ եւս առաւել Յովհաննէս. կարծեմ ես, եթե փոքրագոյն ոք ասացէ զա[sուա]ծածինն քան [եր. 264ա] զՅովհաննէս, ոչ ժամանակաւ, այլ վասն զի որս պատուականագոյն է քան զեզ, ոչ կարի հեռանայր ի մեծութենէս, զի թուի ինձ ա[sուա]ծածինն մեծ գոլ քան զՅոհաննես։

«Բայց յաւուրսն Յովհաննու Մկրտչի մինչեւ ցայժմ արքայութիւնն ա[sուծո]յ(*) բռնադատի եւ բռնութք յափշտակեն զնա»(1)։ Աւուրք Յոհաննու եւ աւուրք Ք[rիsոս]ի ոչ ժամանակաւ չափին, որպէս աւուրք Աքազու թագաւորի եւ Սողոմոնի և այլոց թագաւորաց և մարգկան, այլ կարգաւորութեամբ հոգւոց. «Ծագեսցէ, ասէ, յաւուրս նորայ արդարութիւն և բազում խաղաղութիւն մինչև սպառեսցի լուսին»(2). արդ որ խրատեալն է յառաջագոյն ի բանից Ք[rիsոս]ի և Յոհաննու և գնայ զխոտ և զառապար ճանապարհ, նոյնպիսին յափշտակէ բռնութեամբ զարքայութիւնն ա[sուծո]յ. և բռնութեամբ վասն այնորիկ ասի յափշտակել, վասն զի բռնաւոր է զմարմին իւր զմարմնային ցանկութիւնս ի բաց կարելով։

«Աւրէնք և մարգարէք մինչև ցՅոհաննէս մարգարէացան, և եթէ կամիք ընդունել, նա՛ է եղիա, որ գալոցն է. որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ»(3)։ Զի թէ մարգարէք և Մովսէս յաղագս [եր. 264բ] Ք[rիsոս]ի մարգարէացան և նմա ակն ունեին, նոյնպէս և Յովհաննէս, և եկեալ Ք[rիsոս]ի և ժառանգեալ զհայրենի ժառանգութիւնն. «Տաց քեզ, ասէ, զազգս ի ծառայութիւն և

(1) Մատթ. ԺԱ. 12։
(2) Սաղմ. ՀԱ. 1։ Տպ. «կատարեսցի» փ. «սպառեսցի»։
(3) Մատթ. ԺԱ. 13-15։ Տպ. «Քանզի ամենայն օրէնք և մարգարէք...»։
(*) Տպ. «երկնից»։

ժառանգութի[ւն] քեզ զամենայն ծագս երկրի»(1)։ իրաւապէս լրացաւ(*) մարգարէութի[ւն] ամենայն, որ վ[ա]ո[ց] գալոտեան և գործոյն Ք[rիsոս]ի. իսկ որ ասաց, եթէ նա՛ է եղիայ որ գալոցն էր, ոչ եթե զհոգին եղիայի թեղբացոյ ունէր Յովհաննէս. քանզի զիոխոխումն հոգւոց յա՛յլ մարմինս(**), եկեզեցի ոչ ընդունի. այլ վ[ա]ո[ց] զի զՀոգին Ս[ուր]բ, որ էր ի վերա[յ] եղիայի, նմանութ[եամ]բ ունէր Յովհաննէս. և որպէս գալոց է յառաջագոյն եղիայի յերկրորդում գալստեանն Ք[rիsոս]ի, նոյնպէս և յառաջնումն եկեալ Յովհաննու(***), պատրաստանաց ճանապարհ ձայնիւ քարոզութ[ա]նն, վ[ա]ո[ց] այնորիկ կոչեցաւ եղիաս։ և ասս, գուցէ Մովսէս է յանն զագաձայն Մովսէսի, եղիաս կամ ա՛յլ ոք ի մարգարէիցն, մինչև ցՅովհաննէս, որ եցոյց զկատարեալ բանն որ ի մեզ է և մեր յաւժարութ[եամ]բ ընդունել և ոչ ընդունել. վ[ա]ո[ց] որոյ եւ ասաց, եթե կամիք ընդունել, նա՛ է եղիաս, այլ եւ վհատգոյն եւ փառաւորագոյն այնպէս ի լերինն երեւեցան ընդ Ք[rիsոս]ի Մովսէս և եղիաս, ուստի եւ ի վերայդ ասէ, «Որ ունիցի ականջս(†) լսելոյ, լուիցէ»։

[եր. 265ա] «Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման են մանկտւոյ որ նստիցին ի հրապարակս»(2)։ Մանկտւնք երեւեցան նմանեալ մանկա[ւ]ոյ յիմարութ[եամ]բ. որպէս մանկտւնք նախատին զիւրեանց նմանողս, որ ոչ սգակից լինին և ոչ ուրախակից, նոյնպէս և այն ազգ ոչ սրամտակից եղեն Յովհաննու, որ էր ի սրամտութեան վ[ա]ո[ց] յանցանաց նոցայ, և ի միջի իւրեանց զմեռելութի[ւն] նոցայ, այլ և ոչ Ք[rիsոս]ի ուրախակից, որ ակն և երարձ զմեզս ամենայն աշխարհի։

«Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն, յորս եղեն բազում զաւրութիւնք նորայ և ոչ ապաշխարեցին. վա՛յ քեզ, Քուրազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, զի թէ ի Տի[ւ]րոս և ի Սիդովն եղեալ էին զաւրութիւնքն որ եղեն ի ձեզ»(3), որ ի կարպին է։ Նախատէ որպէս սակաւիկ յառաջագոյն ասացաւ, զքաղաքսն, յորս բազում

(1) Սաղմ. Բ. 8։ Տպ. «Տաց քեզ զհեթանոս ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ զամենայն...»։
(2) Մատթ. ԺԱ. 16։ Տպ. «..., նման է» փ. «նման են»։
(3) Մատթ. ԺԱ. 20-21։ Տպ. «որ ի ձեզ եղեն» փ. «որ եղեն ի ձեզ»։
(*) Ձ.ում՝ «լուեցաւ»։
(**) Գիրք թղթոց, «Կամմիտասի վասն հաւատոց» եր. 216։
(***) Ձ.ում՝ «Յովհաննու»։
(†) Ձ.ում՝ «ականջս»։

նշանս և զաւրաւթի[ւ]նս տրար, եւ նախատինքն են վերրանական յիշեցուցանող յանցանաց, մանաւանդ ի վերայ անչնորհին և մոռացողին(sic)։ Բարեպին թարգմանի ասա, խորհուրդ իմ, յերրայեցւոց անուանց թարգմանութի[ա]ն. բայց Բիթասյիպայ, որ է ի գաւառ Պետրոսեանց և Յովհաննեանց, թարգմանի [եր. 265բ] տուն որոզայ. եւ կափառնաւուժ՝ անդ մխիթարութի[ւն] է. Տի[ւ]բոս, որ է Ծուր, ըստ եբրայականին թարգմանի պնդութի[ւն]. Սիդոն(sic) որ է Ծայգան, թարգմանի որսալք. Սոգոմ՝ կաւրութի[ւն] կամ ամլութի[ւն]. ապա ասելին որպէս կարծեմ, մխիթարելք, յորդորելք, եւ որսացեալք երթեալն վարդապետաւութ[եամ]ք ա[ստուա]ծային բանին, եւ յետ այնորիկ մեղսակալք ի վարդապետաց հեթանոսաց . . . . . (*) որք ոչ պիտան լաւագոյն են։

Իսկ այն որ ասաց, եթէ ընդարձակագոյն լինելոց է Սպասմայ և Գամորայ յաւուր յայնմիկ(1), նշանակէ մեզ եթէ զանազանութի[ւն] զոյ և որչափն առնջանացն։

«Յայնժամ պատասխանեաց Յ[իսու]ս և ասաց. Գոհանամ զքէն, Տ[է]ր և երկրի, որ ծածկեցեր զայս յիմաստնոց և ի խորհրդականաց և յայտնեցեր սպասաց»(2)։ Նախասէր զկոփառնաւուժ և զքաղաքն, յորում աւելորդն եղեն նշանքն և զաւրութի[ւն]ք Ք[րիստո]ի. այժմ ասէ. գոհանալով զՀաւրէ, «Գոհանամ զքէն Հայր», և թէպէ ամանց անյարմար չարագրութի[ւն]ս։ [եր. 265ա] վ[ա]ս[ն] է՞ր արդեաք ասացեալ նախատանաւք յազգս ասացելոց քաղաքացդ, ի վերայ է[նա](**) առնել. «Գոհանամք զքէն, Տ[է]ր» եւ որ ինչ ի կարգին է. այլ այդպէս յամանց կարծի. իսկ ինձ թուի, եթէ յազգս այսորիկ ասաց զգոհարանութիւնդ զՏ[եառն]է Հաւրէ, զի ծածկեցաւ յիմաստնոց աչխարհիս. եթէ վ[ա]ս[ն] է՞ր արդեաք եղեն նշանքն յա՛յս նիշ քաղաքս եւ ո՛չ յայս նիշ, և յայտնեցաւ սպասոյ, ա՛յնոցիկ՝ զորս կոչեաց երանելին Պաւղոս՝ յիմարս Ա[ստուծո]յ. յիմարն Ա[ստուծո]յ ասէր, իմաստնագոյնք են քան զմարդիկ(3)։

(1) Մատթ. ԺԱ. 21–24։ Տպ. «դիւրագոյն» վ. «ընդարձակագոյն»։

(2) Մատթ. ԺԱ. 25։ Տպ. «Յայնմ ժամանակի, պատասխանի եաս Յիսուս և ասէ. Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց...»։

(3) Ա. Կորնթ. Ա. 25։

(*) Ձ-ի մէջ այնչ չգրեաւած 3/4 տող. հաւանօրէն բնագիրը գրի համար անընթեռնի է եղել կամ փչացած։

(**) Ձ.ուժ՝ «զի վերայէ եաս»։

«Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հաւրէ իմմէ, եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, եւ ոչ [զ]Հայր ոք ճանաչէ, եթէ ոչ Որդի»(1)։ Տուաւ Որդւոյն ամենայն, քանզի Որդին մատնեցաւ եւ տուաւ վ[ա]ս[ն] ամենեցուն, տուաւ նմա որպէս իմաստութի[ան] Ա[ստուծո]յ, զի աւտար իմաստութի[ւն] խափանեսցէ, որպէս զաւրութի[ան] Ա[ստուծո]յ զի հալածեսցէ զանաւրէնութի[ւն], որպէս ճշմարտութեան զնոր ասացէ . . . (*) տուաւ[ն]։ «Ոչ ոք ճանաչէ զՈրդի եթէ ոչ Հայր, և ոչ զՀայր ոք գիտէ(**) եթէ ոչ Որդի և ում կամիցի Որդին յայտնել»։ Ոչ ասէ զայս եթէ ոչ հաւատաս[յ] ի Հայր բայց յՈրդւոյ, և ոչ ոք հաւատաս[յ] յՈրդի և գիտէ [եր. 265բ] զՈրդի, բայց միայն Հայր, այլ զԵսաի[ա]ն Ա[ստուծո]յ գրուածս[ւն] ոչ ոք գիտէ կարէ, զի նմին ընդ հայելի աւրինակաւ և առակաւ և փոքր ի չատէ գիտամբ և մարգարէսնամբ ասաց առաքեալն(2), ապա աւրինն ճշմարտութ[եամ]ք ո՞չ ոք գիտէ զԱ[ստուա]ծ և ոչ զՈրդի, եթէ ոչ Հայր յայտնեսցէ ումնք զՈրդւոյ գիտութի[ւն], որպէս ասացաւն Պետրոսի, «Եթէ մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ երկնաւոր»(3)։

«Եկայք առ իս ամենայն աչխատեալք և որք բարձեալ էք բեռինս»(4)։ Բեռինս ոչ միայն զմարմնոյ սխալս և աչխատութի[ւն]ս ասէ, այլ և զհոգւոյն չանգստութիւն եւ զանիրաւութի[ւն]ս. հաւատացէք յիս, ասէ, եւ գիտացէք զՀայր՝ իմ ձեզ յայտնելով, եւ ես հանգուցից զձեզ եւ ազատեցից յամենայն սխալից եւ աչխատութի[ան]ց։ «Զի լուծ իմ քաղցր է եւ բեռն իմ թեթև»(5), որ լուծ անաւրէնութի[ան] ընկենուն եւ մատնն ընդ լծալ ծառայութի[ան] Ք[րիստո]ի. սակս թեպետ եւ առժամանակ մի ծանրագոյն էր եւ ի բեռն եւ խաւսգոյն լուծն, սակայն յաւտար բարւոցն «Զար ոչ հանս ակն և ոչ լուաւ ականջ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ»(6), այսուհետեւ պատրաստելոց եւ յաւտար

(1) Մատթ. ԺԱ. 27։

(2) Ա. Կորնթ. ԺԳ. 9։

(3) Մատթ. ԺԶ. 17։ Տպ. «Հայր իմ որ յերկինս է» վ. «Հայր իմ երկնաւոր»։

(4) Մատթ. ԺԱ. 28։ Տպ. «վաստակեալք և բեռնաւորք» վ. «աչխատեալք և որք բարձեալ էք բեռինս»։

(5) Մատթ. ԺԱ. 30։ Տպ. «բեռն իմ՝ վոքրոգ» վ. «բեռն իմ թեթև»։

(6) Ա. Կորնթ. Բ. 9։ Տպաւածի մէջ եաս առաջաբանիներով։

(*) Ձ.ուժ՝ մի բառի տեղ քերած. օրինակը եղծաւա՞ծ է եղել։

(**) Տպ. «ճանաչէ» վ. «գիտէ»։ «Եւ ում Որդին կամիցի յայտնել»։

ակնկալութ[եամ]ք, լծայս այսոյ եւ բեւռնս ծանրութ[ե]ն եւ խոտութ[ե]ն քաղցրագոյն [եր. 267ա] լինի զամենայն քաղցր եւ քնչնեւաղոյն քան զամենայն թեթև, որպէս ի հանդէս ոք մատնիցէ եւ հաստատապէս պահին ակն ունիցի. այսպիսւոյ զաւրութ[ե]ն հակառակորդին անզաւրութ[ե]ն եւ ակարութ[ե]ն համարի։

«կամ որպէ՞ս կարիցէ ոք մատնել ի առն հզաւրի և զզէն նորայ(*) յափշտակել, եթե ոչ նախ կապիցէ զհզաւրն»(1)։ Հզո՛ւր, զ[ը]նդիմակացն Ա[ստուծո]յ ասէ, զոր նոքա բեւզզեռուզ կոչէին, իշխան դիւաց, եւ զէն նորայ եւ առն զպաշտաւնեայս նորա, յորս բնակեն. որպէս առն Ք[րիստոս]ի եւ առաքար զայնոսիկ, յորս բնակէն Ք[րիստո]ս. «Բնակեցայց ի նոսա եւ գնացից ի նոսայ»(2) ասացաւ. եւ երանելին Պաւղոս, որոյ առնն մե՛ք իակ եմք, ասէ, եթե ոչ նախ կապեալ էր իմ զբեռզզուզ, ոչ կարէի զզէնն նորայ եւ զառն յափշտակել եւ աւար առնել։

«Եւ որ ոչ ընդիս, հակառակ իմ, եւ որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ»(3)։ Որ ոք ժողովէ բանիւ եւ ճշմարտութ[ե]ն[ամ]ք եւ զաւրութ[ե]ն[ամ]ք եւ լուսով, որ է Ք[րիստո]ս, այնպիսին ոչ կորուսանէ, իսկ որ առանց բանի և լուսոյ և իմաստութ[ե]ն[ա]ն ժողովէ, այնպիսին իրաւացպէս ցրուէ։

«Ամենայն մեզք եւ հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զհոգւոյն հայհոյութ[ե]ն մի՛ թողցի [եր. 267բ]· եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ, թողցի նմայ, բայց որ զՀոգւոյն Սրբոյ ասիցէ, մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհիս եւ մի՛ ի հանդերձեալսն»(4), վ[ա]ս[ն] զի Հոգւով Ա[ստուծո]յ հանիմ զդեւս եւ ոչ իշխանաւն դիւաց. իսկ նոքա զՀոգին Ս[ուր]բ հայհոյեցին եւ բեւզզեռուզ կոչեցին. մի՛ թողցի պատ այդ հայհոյութիւն. եւ վասն իմ թե որպէս զՈրդ[ւ]ոյ մարդոյ ասիցին, նեղաւմն ունին, եթե գայցեն յապաչխարութ[ե]ն, որպէս բազումք, և վերջոյ զլսեալ առաքելոցն(**)· իսկ որ զՀոգին Ա[ստուծո]յ իշխան դիւաց կոչեցէ,

(1) Մատթ. ԺԲ. 29։ Տպ. «կամ պիո՞րդ կարէ ոք մատնել ի առն հզօրի և զգործիան նորա յափշտակել...»։
(2) Ռ. Կորնթ. Ջ. 16։
(3) Մատթ. ԺԲ. 30։ Տպ. «Որ ոչ ընդ իս է, հակառակ իմ է»։
(4) Մատթ. ԺԲ. 31-32։ Տպ. «Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ»։
(*) Ջ.ուամ՝ «պղէնն գործոյ»։
(**) «Եւ վերջոյ գլսեալ առաքելոցն» բացատրութիւնը բնագրի մէջ հասկանալի չէ։

նմայ ո՛չ ներիցի թողութ[ե]ն, մի՛ յայսմ յաւիտենիս ասէ, եւ մի՛ ի հանդերձեալսն։

«կա՛մ արարէք զծառն բարի եւ զպտուղ նորա բարի, եւ կամ արարէք զծառն չար եւ զպտուղն նորայ չար»(1)։ Ծառ բարի զՀոգին Ա[ստուծո]յ ասէ, և պտուղ բարի զվարդապետութ[ե]ն նորա. ծառ չար զսատանայ ասէ, եւ պտուղ չար զվարդապետութ[ե]ն սատանայի. որ ըստ առաքինութ[ե]ն[ան] կեայ, եւ գործէ եւ ճշմարտապէս վարդապետէ, այնպիսին ի Հոգւոյն Սրբոյ բարբառեալ, եւ զծառն բարի առնէ եւ զպտուղն նորայ. իսկ որ հակառակն ուսանի և աւրութ[եամ]ք զմարդիկ ուսուցանէ, այնպիսին ծառ չար անուանեաց եւ [զ]պտուղ դառն(*)· [եր. 268ա] զայս այսպէս ասելով ո՛չ այլ ինչ ասէ, այլ եթե կա՛մ Հոգւոյն Սրբոյ հզաւրութ, և պղտերներցէք զպտուղ բարի և կամ հակառակորդին, եւ մի՛ կեղծաւորութ[եամ]ք ուսուցանէք. քանզի մեղաւորին եւ կեղծաւորին ասէ Ա[ստուա]ծ. «Դուք ընդէ՞ր պատմես զարդարութ[ե]ն իմ և առնուս զուարթ իմ ի բերան քոյ»(2)։

«Յայնմ ժամանակի պատասխանի եաւն ոմանք ի դպրացն եւ ի փարիսեցւոյն և ասեն. վարդապետ, կամիմք նշան ինչ ուսանել ի քէն յերկնից. նա պատասխանի եաւ եւ ասէ. Ազգ չար եւ չնացող նշան խնդրէ»(3), եւ այլն։ վ[ա]ս[ն] զի ոչ կամէին ուսանել, այլ նենգութ[եամ]ք փորձել· վ[ա]ս[ն] այսորիկ, կոչեաց զփարիսեցիան ազգ չար եւ չնացող· չար ազգ, վ[ա]ս[ն] զի չար վիշապին խորհրդով մոլորեցան. և չնացող, զի թողեալ զայր իւրեանց զբանն ճշմարտութ[ե]ն[ան], այսինքն զՔ[րիստո]ս, աւրինազանցեցին. նշան լսի յ[ա]ս[ու]ծո[յ]ին գիրս որպէս լեալ է եւ պատմի ի հին կտակարանս ի հանդերձելոց իրաց, ի լինելն Քրիստոսի ի սիրտ երկրի երեքաւրեայ. է՛ նշան եւ ի Նոր կտակարանս, որ նշանակէ զհանդերձեալ յա-(**) փոփոխումն, որպէս երանելին Պաւղոս, «Մեք եմք, ասէ, թլփատութ[ե]ն»(4), նշանակ

(1) Մատթ. ԺԲ. 33։ Տպ. «կա՛մ արարէք» վ. «Եւ կամ արարէք»։
(2) Սաղմ. Խթ. 16։ Տպ. «Իսկ դու ընդէ՞ր բնաւ պատմես..., կամ առնուս...»։
(3) Մատթ. ԺԶ. 38-39։ Տպ. «Յայնժամ պատասխանի եաւն նմա... տեսանել ի քէն։ Նա պատասխանի եաւ և ասէ ցնոսա...»։
(4) Փիլիպ. Գ. 3։ Տպ. «Զի թլփատութիւնն մեք եմք»։
(*) Ջ.ուամ՝ «պտուղ դպաւն»։
(**) Մեր արտագրութեան ժամանակ բառը կիսատ է մնացած։

յարութի[ա]ն, այլ և ա[usուա]ծպաշտութի[ան]ն, որպէս Քլիմաեան Աբրահամու եւ որդւոցն նորայ։

«Աւրք նինուէացիք յարիցեն ի դատաստանին ընդ ազգիս այսմիկ եւ դատապարտեսցեն զսա»(1), և այլն։ Բազմապէս յա[usուա]ծային գիրս ցուցանի յարութի[ւն] մեռելոց, առաւել եւս ի սէրբունեան ձայնէս. եւ յիրաւի դատապարտեսցին. զի նոքա սպաշխարեցին լուեալ ձայնին Յովնանու ծառա[յ]ի Ա[usուծո]յ· իսկ ազգս այս լուեալ ձայնի Որդւոյ[ն] Ա[usուծո]յ, ոչ ապաշխարեցին. զնոյն է իմանալ յաղագս Թագուհւոյն(*) հարաւոյ, սկսելոյն լսել զիմաստութի[ւն]ն Սողոմոնի»(2)։

«Այսո՛ պիղծ յորժամ լինի ի մարդոյն, գնա[յ] ընդ անջրպի տեղիս դառնալ հանդիսա. իբրև ոչ գտանէ, յայնժամ ասէ, դարձայց ի տուն իմ, ուստի ելիւ. և [ներ]եալ(**) գտանէ պարապարդ, մաքրեալ եւ յարդարեալ»(3) և այլն։ Տեղի անջրդի՛ է՛ հոգիք մարդկան, յորս ոչ գտանէ սատանա[յ] հանդիսա. եւ տուն մաքրեալ և յարդարեալ մեղաւք՝ հոգիք յորս հանդիսա և բնակութի[ւն] առնէ սատանայ եւ պաշտաւնեայքն նորայ. նմանեցուցանէ զազգն գայն պիսբիսական(s!) մարդոյն այնմ, որ զարդարէ զհոգին իւր տաճար դիւաց եւ բնակութի[ւն] նոցայ։

«Մինչդեռ խաւսէր ընդ ամբոխին, անա մայրն նորայ և եղբարք կա[յ]ին արտաքոյ և խնդրէին խաւսիլ ընդ նմայ»(4)։ Մայր Ի[իսուս]ի յայտնապէս կայսն Մարիամ է. և եղբարք նորայ՝ ո՛չ սատուգապէս որդիքն Յովսեփու, քանզի եւ ոչ նա որդի Յովսեփայ ճշմարտապէս. Թեպետ և կարծեցաւ ամանոց, որք անդիտացան զխորհուրդ ծննդեան կուսին։

Ը.

«Յաւուրսն յայնոսիկ ելեալ Յ[իսուս]ս ի տանէն, նստէր առ

(1) Մատթ. ԺՒ. 41։ Տպ. «ընդ ազգիս ընդ այսմիկ»։

(2) Մատթ. ԺՒ. 42։

(3) Մատթ. ԺՒ. 43–44։ Տպ. «Այլ յորժամ այսո պիղծ ելանէ ի մարդոյ, չրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանդիսա և ոչ գտանէ. ցայնժամ ասէ, Դարձայց ի տուն իմ ուստի ելի. և եկեալ գտանէ զնա...»։

(4) Մատթ. ԺՒ. 46։ Տպ. «Մինչդեռ նա ընդ ժողովրդոն խօսէր, անա մայր նորա և եղբարք նորա...»։

(*) Ջ.ում՝ «Յագուրնոյն»։

(**) Ջ.ում՝ առաջին վանկը ամենևին չի երեւում, բայց տեղը բաց է։

ծովեզերն, և ժողովեցան առ նա ամբոխ բազում»(1)։ Յաղագս բազում մարգարէութի[ա]ն ի տանէն ելանէր, ոչ միայն յերեւելոյն, այլ որպէս Թաւի ինձ և յաներեւութէն, և անփոյթ արարեալ իւրոյ քնութի[ա]ն իմանալոյն եւ երկնաւորին, նստէր առ ծովեզերն. ի ծովային ծփական կենցաղոյս այսորիկ, զի ցածուացէ և խաղա[ղա]ցուսցէ զծովս մարդկան զալեկածեալ կենցաղս, այլ և ի նաւ մտանէր վ[ա]ս[ն] նորին մարգարէութի[ա]ն ի մարդկային և ի մահկանացու մարմինս և ապականացու, զի ազատեսցէ ի մահաւանդ և յապականութենէ և արասցէ անմահս և անապականս։

«Եւ խաւսէր ընդ նոսա առակաւք»(2)։ Որք կային առ ծովեզերն, ընդ նոսա առակաւք խաւսէր, զի դեռ եւս ոչ էին կարողք յայտնապէս լսել զբանն Ք[րիստո]ի. իսկ աշակերտացն ասաց որպէս կարաւղաց։ «Լուարուք դուք զառակ սերմանողացն»(3)։ իսկ զայժմեան զառակս ինքնին իսկ մեկնէ, վ[ա]ս[ն] որոյ ոչ է պարտ յերկարաբանել։

«Զկնր երանի աչաց. զի տեսանեն եւ ականջաց զի լսեն. ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք եւ արդարք ցանկացան(*) տեսանել զոր տեսեքդ և ոչ տեսին, և լսել զոր լուայքդ և ոչ լուան»(4)։ Աչս և ականջս, զի ոչ ասէ զերեւելիսս, կարծեմ ամենեցուն յայտնի է. [եր. 268բ] վ[ա]ս[ն] զի երեւելի աչաւք և փառիսացիքն տեսին զՔ[րիստո]ս և այլ ամբոխն հրէական(**) մարդկան. նոյնպէս լըզդալի և մարմնական ձայնն Ք[րիստո]ի լսեան ամենեքեան մերձակայքն. ապա ուրեմն երանէ զաչս եւ զլսելիս առաքելոցն զի այնպէս տեսին զՔ[րիստո]ս, որպէս պարտ էր զՈրդի[ն] Ա[usուծո]յ տեսանել, և այնպէս լսեան նմայ որպէս պարտ էր և պատշաճ Որդւոյ[ն] Ա[usուծո]յ լսել։ Ոմանք կարծեցին եթե վ[ա]ս[ն] յարութի[ա]ն և դատաստանին խաւսեցաւ ընդ նոսայ, և յաղագս այնորիկ երանեցան. բայց ինձ Թաւի առաջինն պատշաճագոյն. բազում մարգարէս ասաց և արդարս և ոչ զամենեսեան, քանիս

(1) Մատթ. ԺԳ. 1–2։ Տպ. «Յաւուր յայնմիկ . . . նստէր առ ծովեզերբն։ . . . ժողովուրդք բազումք»։

(2) Մատթ. ԺԳ. 3։ Տպ. «բայց առակօք և ասէր»։

(3) Մատթ. ԺԳ. 18։ Տպ. «Եւ արդ լուարուք դուք զառակ սերմանացանին»։

(4) Մատթ. ԺԳ. 16–17։ Տպ. «Բայց ձեր երանի է աչացդ... և ականջաց ձերոց... զոր տեսանէքդ... զոր լսէքդ...»։

(*) Ջ.ում՝ «ցանկացան» լուսանցքում։

(**) Ջ.ում՝ «հրէական» լուսանցքում։

ամանք ի մարդարէիցն և յարդարոցն տեսին իմանալի աչաւք զաբր զաւետեանն Ք[rիստոս]ի, որպէս ինքն իսկ ասաց Ք[rիստոս]. Աբրահամ հաւս եմք մարգանալ ունիմ եւ ի ժոխս իջանել եւ հանել զկապեալսն ի վիշապէն կամակարէ և ուրախ եղև ընդ այս տեսութի[ւն]։

«Որ(*) ունիցի ասցի նմա և յաւելցի և որ ոչն ունիցի քա[r]ձցի ի նմանէ»(1)։ Գտաք ի մեկնութի[ան] Իւրդինի ի Մա[s]թէոս աւետարանիչ յԱիերտրտ պիրան, եթե ամենայն առնկ զոր անկաց Հայրն Միածնի Որդւոյն Ա[ստուծո]յ, ի յայն առնկ Միածնին վարդապետութի[ւն]ն առաւելեացի. և մի՛ ոք կարծեսցէ զառնկն Պաւղոսի, և զաճելն Պաւղոսի արտաքոյ զալ անկացն Ա[ստուծո]յ, զի ամենայն որ ըստ հաճոյիցն Ա[ստուծո]յ է անկեալ, առնկ Ա[ստուծո]յ կոչի. [եր. 270ա] և յաւելոյ յայդպիսի առնկ. զայդպիսի առնկ որ ունի յաւելցի այնպիսւոյն, քայց որ ոչ անկաց Հայրն երկնաւոր, այլ ընդդիմակացն ի հոգւոջ, և զայն զոր ունի, բարձցի ի նմանէն։ Զայդ Ուրիգինես այդպէս մեկնեաց, և ես ոչ ընդդիմանամ, քայց կարծեմ ըստ այժմեան մեկնութեանս, եթե որ ունիցի զսերմն բարի, հոգին որ բարի է, երկիր անուանեցաւ, նմայ առաւելեացի և յաւելցի. իսկ որ անկաւն առ ճանապարհաւն և ի վերա[յ] վիմաց, և զայն որ ընկալաւն ի վարդապետութենէն Ք[rիստոս]ի, եկեալ չարին, ի քաց բառնա[յ], վասն զի չէր հաստատեալ ի սրտի, ի քաց բարձաւ ի նմանէ զոր ունեին։

«Այլ առակ եդ առաջի նոցայ ասելով. Նման է արքայութիւնն երկնից մարդոյ, որ սերմանեաց սերմն բարի յանդաստանի իւրում, իսկ ի ննջել մարդկան՝ եկն թշնամի նորա և սերմանեալ սերմն ի մէջ ցորենոյն և գնաց»(2)։ Սերմանողն Ա[ստուա]ծ ամենայն բարւոյ և արդարութի[ան] մարդկան, անդաստանն աշխարհս և ննջեալ մարդիկ, որք ծուլանան և անփոյթ առնեն զհրամանեն Ա[ստուծո]յ. թշնամի է Ա[ստուծո]յ բանսարկուն, ցորեան արդա-

(1) Մատթ. ԺԳ. 12։ Տպ. «Զի այր գուցէ՝... և այր ոչն գուցէ՝ և զոր ունիցին...»։

(2) Մատթ. ԺԳ. 24-25։ Տպ. «...արկ առ նոսա և ասէ, նմանեցաւ... առն, որ սերմանիցէ... յագարակի... և ի քուն լինել... ցանեաց ի վերայ...»։

(*) Մեկնութիւնը այս համարի և ամբողջ հատուածի կանոնաւոր չէ ընթանում, այլ յետ ուրեմն առաջ ընկած։ Գուցէ այստեղ Զ.ը պակասաւոր է այն մեկնութեան հետ, որ կապուած էր Որոգինեսից մէջ բերուած հատուածի հետ։

բութի[ան] պատուղ, որումն անիրաւութիւնն, իսկ Թողուչն և ոչ փակուչն զորումն մինչև ցհունձսն՝ երկուս Թուի ինչ նշանակել ինձ. կա՛մ ի ժողովել զորումն հնձողացն հրեշտակաց և այլոց զաւրութեանց խլիլ և ցորենոյն՝ յաղագս անգիտութի[ան] և պի անգիտանան յայտնի մարգարէեն եղեկիելի. [եր. 270բ] «Յորս, ասէ, նման իցէ ի նոսայ մի՛ մերձենայցէք»(1). և յելիցն, ի տալ հրամանն զնամս երբա[յ]եցի[ացն](s!) նշանակել արեամբն զի մի՛ մոցէ անդ սատակիչն(2). արդ կա՛մ վասն այդորիկ ասացաւ Թողի կացցէ(s!) մինչև ի հունձս կամ ցվախճան(*) որոմանն. եթե ոչ փափխիցի և լինիցի ցորեան, ապա ի վախճանի աշխարհիս այսորիկ այրեացի անչեջ հրովն որումն, և ցորեանն ժողովեսցի յիւրեանմարանս իւր։

«Այլ առակ ասաց նոցա. Նման է արքայութիւնն երկնից հատու մանանխոյ, որ է վոքրագոյն քան զամենայն սերմանիս»(3) և որ ինչ ի կարգին։ Հատի մանանխոյ նմանեցուցանէ, որպէս Թուի ինձ, ոչ բնաւն իւրոյ քաղցր և Թեթև վարդապետութեանն լինելոյ, Թեպետ և առ ժամանակ մի երեւի խստագոյն և ծանրագոյն, այլ յորժամ կատարիցի յոք և բերիցէ պտուղ, ծառ լինի ի մեծագոյն քան զամենայն մարդկա[յ]ին հիւանդութի[ան] բանջարս. «Որ հիւանդն է, ասէ, բանջար կերիցէ»(4) յաղագս ոչ հանդուրժելոյ հատատառն կերակրոց և Թողին յայնպիսի ծառ Թռչունք հոգիք մարդկան, և կամ հատ մանանխոյ ասէ զինքն, վասն զի վոքրացաւ և ազքատացաւ, առեալ զկերպարանս ծառա[յ]ի. իսկ յորժամ փառաւորեցաւ և բարձրացաւ, ձգեաց առ ինքն զամենեսեան(**), և ժառանգեաց զազգս և իշխեաց ամենայն ծագաց երկրի. ծառ եղև մեծ, յոր հանգեան ամենայն Թռչունք երկնաւորք, այսինքն հոգիք առաքելոց եւ մարգարէից և ամենայն արդարոց։ [եր. 271ա] . . . (***) *Ք[rիստոս]ի յաղագս արքայութե[ա]ն Ա[ս-*

(1) Եղեկ. Թ. 6։ Տպ. «Բայց յորոյ վերայ նշանն իցէ մի՛ մերձենայցէք»։

(2) Ելք. ԺՒ. 12, 23։

(3) Մատթ. ԺԳ. 31-32։ Տպ. «Այլ առակ արկ առ նոսա և ասէ... մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում, որ փոքր է քան զամենայն սերմանիս»։

(4) Հռոմ. ԺԴ. 2։

(*) Զ.ում՝ «ըցվախճան»։

(**) Զ.ում՝ «զամենիսեան»։

(***) Զ.ում՝ պակասաւոր։

տուծո]յ· քան փոքր էր յառաջագոյն և անարգ երեւէր· և աճեաց և քան զամենայն քան, որ սերմանեալ էին ի մարդիկ, մնծացաւ յոյժ և այնչափ զաւրացաւ, զի ա[usուա]ծային և երկնաւոր զաւրութի[ւն]ք հանդէպ էին յոսոս նորայ· ոսաքն նորա կարծելի են, որք մնծացան բանիւ նորա, առաքեալքն և նմանողք առաքելոցն։

«Այլ աւակ խաւսեցաւ ընդ նոսա· Նման է արքայութի[ւ]նն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ՝ թաքոյց ի գրիւս երից, մինչեւ խմորեցաւ բոլորն»(1)։ Խմոր վարդապետութի[ւ]նն Ք[rիստոս]ի, կին հոգի մարդոյ, գրիւ երեք երեք մասունք հոգւոյն՝ բանական, սրտմտական, ցանկական, և կամ երեք մասունք ժամանակիս՝ անցեալն և առաջիկայս և հանդերձեալն· որ ոք յորրեակ ժամանակ յայսմիկ պահեացեն յինքեանս զվարդապետութի[ւ]նն(*) Ք[rիստոս]ի, այնպիսին բոլոր զինքն լուսաւորեաց։

«Յայնժամ թողեալ զամբոխն եկն ի տունն»(2)։ Տուն Ք[իսուս]ի է դիտութի[ւն] բազմացեալ որ յաւետարանն ասացեալ է, վ[ա]ս[ն] նորայ զինչ խաւսեցաւ և կամ զինչ գործեաց։

«Որ սերմանէ է Որդի մարդոյ զսերմն բարի· և ագարակն(**) աշխարհս է, բարի սերմ որդիք արքայութե[ա]ննն»(3)։ Որք ընդ զալան զսերմ բարի զվարդապետութիւնն Ք[rիստոս]ի, եղեն բարի սերմանք որդիք արքայութե[ա]ն Ա[usուծո]յ։ [նր. 271բ] Իսկ որք ընկալան զվարդապետութի[ւն] չարին և ի բաց ընկեցին զսերմն Ք[rիստոս]ի, սոքա եղեն որդիք չարին որոմն դեհենին հրոյ· քաւզութի[ւն](***) Ք[rիստոս]ի հակղեցի է, և բանք ա[usուա]ծա[յ]ինք· ուսոի գայթագղութի[ւնք, այսինքն այլ ազանդք որ առնեն զանաւրէնութի[ւն], ժողովեսցին և անկցին ի հնոց հրոյն։

«Անդ լալ եւ կրճել ատամանց»(4)։ Հոգի իւրոյ կերակրոյն գործոց բարեաց, և ճշմարիտ գիտութե[ան] մանրուզ և ծամուզ, սա ի ժամանակի յանդիմանութեանն գտեալ արհամարհուզ դարձո[ղ]բարեաց և ճշմարիտ գիտութե[ան] ի նոյն ի ճշմարիտ գիտութենեն յանդիմանեալ կրճռել ասի զատամունս, ինքն զինքեան ամբաստանեալ առնլի։

«Յայնժամ արդարքն ծագեսցեն առաջի Ա[usուծո]յ որպէս զարեգակն»(1)։ Զանբաւ պայծառութի[ւն] ասէ և համարձակութի[ւն] ընդ ատի նեզութե[ա]նս, զոր վայելելոց են ի հանդերձեալ յաւիտենին ի թագաւորութեանն հաւրն իւրեանց։

«Դարձեալ նման է արքայութի[ւ]նն Ա[usուծո]յ գանձի ծածկելոյ յանդի»(2)։ Անդաստան ա[usուա]ծա[յ]ին և մարգարէական գիրն, որ ասի զանազանութի[ւն] անկոց ի բառն· իսկ գանձ մտացն ծածկելոյ զաւրութի[ւ]նն և իմաստութի[ւն] ի բառն՝ և այլապէս անդաստան Ք[rիստո]ս, յորում ամենայն գանձ գիտութե[ան] և իմաստութե[ան] ծածկեալ կան, զգանձս գաղտնիս և զծածուկս նա ոչ սրկանէ առաջի չանց և խոզոց, զմարգարիտ եւ զարբութիւն։

«Դարձեալ նման է արքայութիւնն երկնից վաճառականի, որ խնդրեսցէ գեղեցիկ մարգարիտ»(3), և որ ինչ ի կարգին է։ Բազում զանազանութի[ւն] են մարգարտաց գեղեցկաց, և հնդիկն և պարսկականն, նոյնպէս և յարեւմտեան ծովուն ի բրետանիկան(!) յովկիանոսի լինին և Բոսպորն· լինին և յակառնական ծովուն(!)· այդ յազագս երեւելի մարգարտաց· իսկ որ խնդրէ զգեղեցիկն զիմանալի մարգարիտն, որ ո՛չ խնդրէ զայլափառիցն և զազանդաւորացն բանս, զաղջամղջին և զսեւաթոյրս, այլ զճշմարիտ աւրէնս և զգեղեցիկ ճրագունս, զհազարապատս խորհրդոցն Ա[usուծո]յ, զառաքեալն և զմարգարէս, և ի նոսա ամենեսեան զբազմագինն Ք[rիստո]ս, և որ խնդրէ զայս մարգարիտ զամենայն ինչս իւր առգանեայ(!), զի զինքն չսհեսցի, և զփոքրն խափանէ, զի զվհնագոյն գիտութիւնն յինքն ընկալցի։

«Դարձեալ նման է արքայութիւնն երկնից ուռկանի արկեալոյ ի ծով և յամենայն ազգաց ժողովելոց»(4)։ Ծով ալեկոծեալ՝ կենցաղս է մարդկային՝ յամենայն ազգէ ժողովեալ ուռկանաւն

(1) Մատթ. ԺԳ. 33։ Տպ. «...ընդ նոսա և ասէ... երիս ալեր մինչեւ ամենայն խմորեցաւ»։

(2) Մատթ. ԺԳ. 36։ Տպ. «Յայնժամ թողեալ Ցիսուս զժողովուրդն՝...»։

(3) Մատթ. ԺԳ. 37-38։ Տպ. «Որ սերմանէ զսերմն բարի՝ է Որդի մարդոյ,... սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են»։

(4) Մատթ. ԺԳ. 42։ Տպ. «եղիցի» կը պակասէ։

(*) Ձ.ուսմ՝ «վարդապետութի[ւ]նն»։

(**) Ձ.ուսմ՝ «ակարակն»։

(***) Ձ.ուսմ՝ նաև «արքայութիւն»։

(1) Մատթ. ԺԳ. 43։ Տպ. «...ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից»։

(2) Մատթ. ԺԳ. 44։ Տպ. «...երկնից գանձի ծածկելոյ յագարակի»։

(3) Մատթ. ԺԳ. 45։ Տպ. «...առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս»։

(4) Մատթ. ԺԳ. 47։ Տպ. «Ժողովելոյ» փոխան «Ժողովելոց»։

աներեւութիւ, կամ զզանազան և բազմապիմի մարդկան յաւժ[եր. 272բ]արութիւն կամ կռնւմն հեթանոսաց. զարծաւղք ուռկանին տ[է]րն և հրեշտակք, որ սպասաւորեն նմա, և ոչ եղանէ ուռկանն, եթե ոչ լրումն հեթանոսաց մտցէ, այսինքն ոչ պատարէ վարդապետութիւնն ℟[rխusnu]ի մինչեւ ի վախճան աչխարհիս։

«Ասէ ցնոսա Ց[խուս]ս, իմացարո՞ւք զայս ամենայն»(1)։ Ոչ յանդիմանելով հարցանէր, քանզի ճշմարտապէս գիտէր եթե իմացան կամ չիմացան. այլ հասատատապէս. ս'չ ապաքէն իմացարուք զայդ ամենայն։

«Եւ ասէր ցնոսա. վ[ա]ս[ն] այդպրիկ ամենայն դպիր աչակերտեալ ի յարքայութի[ւն] երկնից, նման է տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ հին և նոր»(2)։ Աչակերտեալ արքայութե[ան]ն երկնից կոչի, որ ի Հրէաստանեն առնու զ℟[rխusnu]ի ուսուցիչն. իսկ խորագոյն ասել, որ ի գրոյն ելանէ ի հոգեւորականն. արդ որ առաւելեալն է անսուտ գիտութ[եամ]ք, լինի երկնային բազմութե[ա]նն յարքայութե[ա]նն տանուտէր, և ս'չ միայն ի ծառայութենէ, այլ եւ յաղքատութենէ ազատեալ լինի որպէս ℟[rխusn]ս, իսկ որ սորա նման դպիր հանէ ի գանձէ իւրմէ զհին և զնոր կտակարանս, ցուցանէ եթե ս'չ միայն չէ պարտ, այլ եւ անհնարին է բաժանել զնորս ի հնոց կտակարանացն։

Թ.

«Եւ եղեւ յորժամ կատարեաց Ց[խուս]ս զառակս զայս, փոխեցաւ անտի, եւ ՛ելեալ ի գաւառն իւր ուսուցանէր ի ժողովուրդսն»(3)։ [Ար. 273ա] Խնդրելի է ըստ բառիդ զոր ասէ գաւառ զնազարեթ եթե զԲեթղեեմ(*)։ ԵՒ կարծեմ եթե խորհրդապէս լռեաց աւետարանիչդ. վ[ա]ս[ն] զի ամենայն Հրէաստան յորում անպատուեցաւ, գաւառ նորա անուանի։ «Եւ գայթակղէին ի նա»(4)։

(1) Մատթ. ԺԳ. 51։

(2) Մատթ. ԺԳ. 52։ Տպ. «Եւ նա ասէ ցնոսա, վասն այսորիկ ամենայն դպիր աչակերտեալ արքայութեան երկնից նման է առն տանուտեառն, ...զնոր և զհին»։

(3) Մատթ. ԺԳ. 53-54։ Տպ. «...իբրեւ կատարեաց Ցիսուս զառակս զայսորիկ... զնոսա ի ժողովրդեանն նոցա»։

(4) Մատթ. ԺԳ. 54։ Տպ. «Մինչեւ զարմանալ նոցա և ասել»։

(*) Ձ.ում՝ «Բեթեեմ»։

Զի՞նչ գայթագղէին արդեաք, բայց է զաւրութ[եամ]ք իւիք դիւականաւ ուսուցանել նմա և ոչ հոգւով Ա[սուծո]յ. զի եթե հոգւով Ա[սուծո]յ կարծէին ոչ կրէր անպատուէի[ւն], և ոչ ասէր Ց[խուս]ս, «եթե ոչ է մարգարէ անարգ, եթե ոչ ի գաւառի իւրում և ի տան իւրում»(1). քանզի եթե տեսանէս զՑ[խուս]ս ի հրէից եւ դեռ եւս անարգեալ, իսկ ի հեթանոսս քարոզեալ և պատուեալ, գիտասցես եթե յիւրում գաւառի պատիւ ոչ ունի, այլ յաւտարից։ Հնար է և զայդ իմանալ և ի վերայ այլոց մարգարէիցն. որպէս անարգեցան՝ Երեմիա՝ յԱն[ա]թովթ, Եղիա յԵնթեզբոն, Եղիսեոս յԵնեբաղմաւղաք, Սամուէլ յԵնեբմաթէ, Մովսէս յիւրմէ ժողովրդենէն. քանզի եթե հաւատային Մովսեսի, հաւատային ℟[rխusnu]ի. Թուի եթէ վ[ա]ս[ն] այնորիկ Պաւղոս ի Տարսոնի ոչ քարոզեաց և այլ աւաքեալքն Խոլեալ զՀրէաստան գաւառն իւրեանց, եւլին ի հեթանոսս։

«Ցայնժամ լռեաւ Հերովդէս չորրորդապետ զլուրն Ց[խուս]ի և ասէ, սա է Յովհաննէս մկրտիչ, սա յարեաւ ի մեռելոց, և յաղագս այսորիկ զաւրութի[ւն]ք ապդին նովաւ»(2)։ Զաւրութի[ւն]ք ի հաւատացեալս, «Քանզի որ ուն[եր. 273բ]իցի տացի նմա և յաւելցի»(3)։ յաղթե զաւրութի[ւն] զանհաւատութի[ւն], ուստի լինին զաւրութի[ւ]նք և յանհաւատս. Քեպետ և ոչ բազում, և տես դու և ընդդիմակաց զաւրութի[ւ]նք, նախ զՀերովդէս չարժեցին ի վերայ Յովհաննու, գիտացեալ զնա յաւտաչըճութց Որդւոյն Ա[սուծո]յ, եւ ապա զՑուէդա և զքահանայապետսն։

«Քանզի Հերովդէս կալաւ զՑովհաննէս, կապեաց զնա և եդ ի բանտի վ[ա]ս[ն] Հերովդիադա[յ] կնոջ Փիլիպպոսի»(4)։ Չեւ եւս էր մեռեալ Փիլիպպոս, այլ դեռ եւս կենդանի էր. եւ հանեալ լինէր ի կնոջէն և ի չորրորդապետութենէն յիւրեւրէն, վ[ա]ս[ն] որոյ անաւրէն էր այնպիսի կին։

«Եւ տրտմեցաւ թագաւորն. բայց յաղագս երդմանն եւ բարձակացն հրամայեաց տալ»(5)։ Այժմ պարտ էր երդմնալանեցել մանաւանդ, քան թէ պահել զերդումնն։

(1) Մատթ. ԺԳ. 57։ Տպ. «Զիք մարգարէ անարգ եթէ ոչ յիւրում գաւառի և յիւրում տանն»։

(2) Մատթ. ԺԴ. 1-2։ Տպ. «Ցայնմ ժամանակի... և ասէ ցծառայս իւր, Նա է... Նա յարեաւ... և վասն այնորիկ... լինին...»։

(3) Մատթ. ԺԳ. 12։ Տպ. «Զի որ գոյցէ՝ տացի նմա և յաւելցի»։

(4) Մատթ. ԺԴ. 3։ Տպ. «Հերովդիայ, կնոջ Փիլիպպոսի եղբօր Նորա»։

(5) Մատթ. ԺԴ. 9։ Տպ. «...բայց վասն երդմանցն... տալ նմա»։

«Եւ լուեալ Յ[իսուս]ա գնաց նաւուս անտի յանապատ տեղիս առանձինն»(1)։ Յետ սպանելոյ մարգարէին, բանն գնայ ի հեթանոս, որք զհետ նորա երթան. յորս գթայց և բժշկաց զհիւանդս նոցա. իբրեւպէս նախ բժշկաց զհիւան[դ]ս ամբոխին և ապա կերակրեաց հացիւ և ձկամբ, զի մի լուծցին ի ճանապարհի։

«Եւ ելեալ անտի Յ[իսուս]ի, գնաց ի սահմանս Տի[ւ]րոսի և Սիդոնի, և ահա կին մի քանանացի ի սահմանացն այնոցիկ ելեալ աղաղակէր»(2)։ Յ[իսու]ս գայր ոչ ի սահ[եր. 274ա]մանս Տի[ւ]րոսի, այլ ի կողմանս Տի[ւ]րոսի և Սիդոնի, իսկ քանանացին ելանէր ի սահմանացն, զի երեւ ունացեալ էր ի սահմանն ոչ կարէր աղաղակել առ ա[ք]րն։

«Ոչ առաքեցա[յ], եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Ի[սրայե]ղի»(3)։ Ընդրեսցին, որո՞յ Ի[սրայե]ղի իցեն ոչխարքն մոլորեալք, Ի[սրայե]ղի արդեւք ըստ մարմնոյ, և վ[ա]ս[ն] է՞ր ի սիրեաս հեթանոսաց տարածեցաւ փրկութի[ւ]ննն, ապա ուրեմն առ մոլորեալ հոգիս Ի[սրայե]ղի տեսցի զԱ[սուա]ծ։

«Եւ Յ[իսուս]ի կոչեցեալ զաշակերտան ասէ ցնոսա, ողորմիմ ամբոխիդ, զի այս երեք աւուրք են որ ունան առ իս և ոչ ունին ինչ կերակուր»(4)։ Յառաջագոյն յաղագս հինգ հազարացն աշա-կե[ր]տքն աղաչէին զնա, իսկ այժմ վ[ա]ս[ն] չորից հազարացս յինքենէ առանց ուրուք աղաչելոյ, և նոքա մի աւր կացեալ երեկուն(s!) կերակրին. իսկ սոքա վկա[յ]եցան երիս աւուրս ունել. և զի մի լուծցին խնամաւորին(!) և անդ հինգ հաց և երկուս ձկունս ասացին ունել աշակերտքն, ասա հարցեալ պատասխանեցին եւթն հաց ունել եւ սակաւիկ ձկունս, և անդ ի վերա[յ] խոտոյ բազմէին, իսկ ասա ի վերայ երկրի անկանէին։

«Եւ մատուցեալ փարիսացիքն եւ սադուկեցիքն փորձելով հարցին զնա զնչան ինչ յերկնից ցուցանել նոցա»(5)։ Փարիսացիքն և սադուկեցիքն զանազանին և հակառակին միմեանց առնուաւ, այժմ միաւորեցան փորձել զՔ[rիստո]ս։ [Եր. 274բ] Միա-

(1) Մատթ. ԺԴ. 13։ Տպ. «Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գնաց անտի նաւուս յանապատ տեղի առանձինն»։

(2) Մատթ. ԺԵ. 21-22։ Տպ. «Ի սահմանաց անտի նոցա ելեալ...»։

(3) Մատթ. ԺՏ. 24։ Տպ. «Ոչ ուրեք առաքեցայ...»։

(4) Մատթ. ԺԵ. 32։ Տպ. «Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուսի զաշակերտան ասէ, Գթամ ի ժողովուրդդ, զի արդ... զի կան... վինչ ուտիցեն»։

(5) Մատթ. ԺԶ. 1, 4, 5։

բանեցան բազում անգամ եւ հեթանոսաց իմաստունքն հակառակ ինքեանց ունելով հերձուած, միաբանին ի փորձել և ի պարզել զոմանս նոյնպէս և հակառակ ինքեանց զաւրութիւնք միաբանին յաղագս աւծելոյ նորա։ «Եւ թողեալ զնոսա գնաց»(1)։ Եւ զփարձաղան ազգ չար և չնացող ասացեալ, գնաց թողեալ սրպէս փեսայ զեղեալն պատնիկ զքաղաքն հաւատարիմ Սիոնն զերբեցն ժողովրդեան։ «Եւ հկեալ աշակերտացն նորա յայն կողմն, մոռացան հաց առնուլ»(2)։ Յայն կողմ անցին աշակեր[տ]քն Ք[rիստո]ի, ի մարմնաւորացս ի հոգեւորսն փոփոխեալ։

«Զիա՞րդ ոչ իմանայք, եթէ ոչ վ[ա]ս[ն] հացի ասացի ձեզ զդայլ լիրբք ի խմորոյ սադուկեցւոցն եւ փարիսեցւոցն»(3)։ Եթէ հաց վարդապետութի[ւն] է, ապա վարդապետութի[ւն] կերակուր է, և ի որ կեցուցանէ, եւ է որ մեռուցանէ զհոգին. ասա յայտնի եղեւ ասացեալն՝ զհաց երկնից ետ նոցա եւ զհաց հրեչտակաց կերան մարդիկ։

«Երանի է քեզ Սիմոնէ Բարիովնա(*), զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ հայրն իմ երկնաւոր»(4)։ Բարիովնա թարգմանի որդի աղաւնոյ, արիւն և մարմին ոչ յայտնեաց քեզ. երկնայի՛ն վարդապետութի[ւն] է, եւ մարմին ոչ յայտնեաց քեզ, քանզի եւ անհնարին իսկ է. այլ նա որեւմ հայր ծագէ լոյս յոգւոջ, նա կարէ գիտել զՈրդի Ա[սուծո]յ։ [Եր. 275ա] «Դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն զնա»(5)։ Որպէս Ք[rիստո]ս զեւեն արքայութի[ւն] ասէ զինքն, վ[ա]ս[ն] զի նովաւ մատանեն յարքայութիւնն, նոյնպէս ասասանայ եւ հրեչտակք նորա դրունք դժոխոց կոչեցան, զի նոքաւք մատանեն ի խաւարն արտաքին։

«Տաց քեզ զփականս արքայութի[ա]նն երկնից»(6)։ Արքայութի[ւն] երկնից Ք[rիստո]ս, եւ առաքինութի[ւն] նորա և վարդապետութի[ւն] դրունք են ս[ուր]բք, ըստ նմանութե[ան] սոցա իմաստիս եւ զփականսն իմանալիս։

(1) Մատթ. ԺԶ. 4։ Տպ. «Եւ եթող զնոսա...»։

(2) Մատթ. ԺԶ. 5։ Տպ. «Գնացին և աշակերտքն յայնկոյս...»։

(3) Մատթ. ԺԶ. 11։ Տպ. «Աւրդ զիա՞րդ... զգոյշ լինել...»։

(4) Մատթ. ԺԶ. 17։ Տպ. «Երանի քեզ, Սիմոնէ, որդի Յովնանու... Հայր իմ որ յերկինս է»։

(5) Մատթ. ԺԶ. 18։ Տպուածի մէջ հա առաջութեամբ։

(6) Մատթ. ԺԶ. 19։

(*) Զ.ում՝ «Բարիովնա» գրուած է քերուածի վերայ, որ եղել է «որդի Յովնանու». վերջին վանկը նկատելի է քերուածի տեղում։

«Յայնժամ պատուիրեաց աշակերտացն իւրոց, զի մի ումեք ասասցեն, թե նա է ℟[rիսուսն]ն»(1)։ վ[ա]ս[ն] զի դեռ չեւ եւս էր զամենայն հանդէսն կատարեալ, զչարչարելն եւ զխաչիլն եւ զյառնելն ի մեռելոց, զոր պարտ էր ℟[rիսուսն]ի առնել։ վ[ա]ս[ն] այնորիկ ասաց պատուիրելով՝ մի ումեք ասել, թե նա իցէ ℟[rիսուսն]ն. զի մի բազումք գայթագղո[ս]ցին ի նա, եթե զիարդ իցէ սա ℟[rիսուսն]ն, որ ոչ կատարեաց զամենայն ի հանդէսս։ Իսկ նա դարձեալ ասէ ցՊետրոս. «երթ յետս իմ սատանայ, գայթագղութի[ւն] իմ ես, զի ոչ խորհիս զԱ[ստուծո]ն, այլ զմարդկանն»(2)։ Զայս ասելի է ամենայն մարդկան, որ անկանին ի հաւատոցն ա[ստուա]ծայնոյ, և խորհի զմարկիռնէի կամ զայլոյ հերձուածողի, որք ուսուցանեն զմարդկա[յ]ինս խոզեալ զա[ստուա]ծայինն. արդ այժմ ասաց Պետրոսի յաղագս կամացն՝ երթ յետս իմ. իսկ յաղագս հակառակ գիտութե[ա]ն Պետրոսի ասաց, սատանայ, որ է հակառակորդ, [եր. 275բ] զի կարծէր Պետրոս եթե ոչ լինի հայր քաւիչ ℟[rիսուսն]ի, եթե չարչարիցի։

«Յայնժամ ասէ Յ[իսուս]ս ցաշակերտան իւր, եթե կամեսցի ոք զհետ իմ գալ, ուրասցի զինքն և առցէ զխաչ իւր եւ եկեսցէ զկնի իմ»(3)։ Որ մերկանա[յ] զհին մարդն զինքն ուրանայ ասելով, «կենդանի եմ ոչ ես, այլ կենդանի է յիս ℟[rիսուսն]ս»(4)։ առնու զխաչ իւր եւ երթայ զհետ ℟[rիսուսն]ի, որ ասեն «ինձ աշխարհ ի խաչ ելեալ է եւ ես աշխարհի»(5)։

«Ջինչ ա[ւ]գտեսցի մարդ, եթե զաշխարհս ամենայն չահեսցի եւ զանձն իւր տուժեսցի»(6)։ Շահի զաշխարհս ամենայն եւ վնասէ զանձն իւր, որոյ ոչ աշխարհ ի խաչ ելեալ է և ոչ նա աշխարհի. աշխարհ այժմ, ասէ, ոչ զբոլոր արարածս. քանզի ոչ մարթի չահել զերկինս եւ զաստեղս, այլ ասաց զաշխարհ զերկրային իրս։

«Ամէն ամէն ասեմ ձեզ, զի են ոմանք որ աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զորդի մարդոյ եկեալ թա-

(1) Մատթ. ԺԶ. 20։ Տպ. «Յայնժամ սաստեաց...»։ «իւրոց» պակասէ։

(2) Մատթ. ԺԶ. 23։ Տպ. «վԱստուածոյնն» փ. «վԱստուծոյն»։

(3) Մատթ. ԺԶ. 24։ Տպ. «...եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն...»։

(4) Գաղ. Բ. 20։ Տպ. «եւ կենդանի եմ այսուհետեւ, ոչ ես՝ այլ...»։

(5) Գաղ. Ջ. 14։ Տպ. «որով ինձ աշխարհ...»։

(6) Մատթ. ԺԶ. 26։ Տպ. «օգտիցի» փ. «օգտեսցի»։

գաւորութ[եամ]բ իւրով»(1)։ Ոչ ճաշակէ մահ, որ ուտէ զկենդանի հացն, զմարմին ℟[rիսուսն]ի, զձչմարիտ հացն. և ըմպէ զարիւն բանին, զձչմարիտ ըմպելին. իսկ ճաշակէ մահ, որ ուտէ ի վիշապէն. վ[ա]ս[ն] որոյ գրեալ է, «Ետուր զնա կերակուր ժողովրդեանն Ա[ստուա]ծոյ(!)»(2)։ Դարձեալ ոչ ճաշակէ զմահ որ ուտէ ի ծառոյն կենդանութ[ա]ն։ Ճաշակէ զմահ, որ ուտէ ի ծառոյն, զորմէ ասաց. «Ցաւուր յորում ուտիցէք ի դմանէ, մահու մեռանիցիք»(3)։ [եր. 276ա] Արդ ասացեալ փրկչին եթե ոչ ճաշակեսցեն զմահ վ[ա]ս[ն] այնոցիկ, որք ուտեն զմարմին նորա արժանաւորապէս եւ ըմպեն զարիւն նորա. ոչ եթե զայս ասաց եթե կեցցեն եւ ոչ տեսցեն զմահ, քանզի ամենեքեան վախճանեցան։

ժ.

«Եւ յետ վեց աւուր առնու Ց[իսուս]ս զՊետրոս և զՅակովբոս եւ զՅովհաննես զեղբայրն նորա եւ հանէ զնոսա ի լեառն բարձր առանձին և այլակերպեցաւ առաջի նոցա»(4)։ — Ցետ ասելոյ զբանդ, եթե ոմեքն ոմանք ոչ ճաշակեն զմահ, վեց աւր անցանեն, եւ յետ վեց աւուրն ելանէ ի լեառն եւ այլակերպի առաջի նոցա. պատմութ[ւն]դ ճչմարիտ ունելով, վկայութեր այսպիս առակաւ. ի վեց աւուրն եղիւ աշխարհս. եւ վ[ա]ս[ն] զի Պետրոս եւ Յակովբոս եւ Յովհաննէս արհամարհեին զերեւելիսս, անցեալ զաշխարհաւս ընդ ℟[rիսուսն]ի ելանեին ի լեառն եւ հրաշափառագոյն եւ պատուականագոյն տեսանելին զբանն։

«Այլակերպեցաւ առաջի նոցա»(5)։ Ցոչս ունելոյ տեսիլ եւ գեղեցկութ[ւն], յահաւոր ի փառաւոր տեսիլն եւ սոսկալի։ «Եւ փայլեցին երեսք նորա իբրեւ զարեգակն»(6)։ Երեսքն փայլեն որպէս զարեգակն արդարութե[ա]ն, այրել զգործս խաւարի եւ գիշերւոյ եւ լուսաւորել զգործս ա[ստուա]ծայինս։ [եր. 276բ] «Հանդերձն

(1) Մատթ. ԺԶ. 28։ Տպ. «Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ որք աստ կան... արքայութեամբ իւրով»։

(2) Ա[ղմ. ՀԳ. 14։ Տպ. «եւ հասոյր զնա կերակուր զօրացն Հնդկաց»։

(3) Ծնն. Բ. 17։ Տպ. «զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ...»։

(4) Մատթ. ԺԷ. 1-2։ Տպ. «...առնու ընդ իւր Յ[իսուս]ս... ի լեառն մի...»։

(5) Մատթ. ԺԷ. 2։

(6) Մատթ. ԺԷ. 2։ Տպ. «եւ լուսաւորիցան երեսք նորա...»։

նորա ապիտակ իբրև զլոյս»(1)։ Հանդերձն նշանակէ զաւետարանական եւ զառաքելական գիրսն ա[usուա]ծաբանաւորին(!) եւ մեկնողին զմիտս բառից նոցայ։ «Երեւ[ե]ցան նոցայ Մովսէս եւ Եղիա»(2)։ Մովսէս աւրէնքն, Եղիա մարգարէքն, ասս յաղագս ասելոյն ցորդիսն Զեբեդեայ, եթէ «որոց պատրաստեալն է ի հաւրէ իմմէ»(3)։ վ[ա]ս[ն] այսորիկ երեւ[ե]ցան Մովսէս եւ Եղիաս։ Մովսէս յայմէ եւ Եղիաս յահեկէ։

«Պատասխանի եւս Պետրոս եւ ասաց։ բարիոք է մեզ աստ լինել, արասցուք երիս տաղաւարս»(4)։ Անգամանեն ոմանք զՊետրոս, որ ասաց։ բարիոք է մեզ աստ լինել, զի եթէ բարիոք եր այդր լինել, բայց եթէ առներ զբարին Ց[իսուս]ս. եւ դարձեալ վ[ա]ս[ն] ե[՞]ր ասաց երիս տաղաւարս։ զայդ ասելով մեկուսացուցանել կարծի զնոսա ի միմեանց։ միթէ ս[՞]չ եր մի տաղաւարն բաւական երեցուն։ զայս ևլոյծ Մարկոս, թէ ի զարհուրանալն(!) ոչ գիտեր զինչ խաւսէը(5)։

«Եւ մինչդեռ խաւսեր ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ նոցա»(6)։ Փոխանակ երից տաղաւարացն ամպ լուսաւոր հովանի եղեւ նոցայ։ զի հանգուսցէ որ հայեին ի նոյ գաւետարանն, գաւբենս եւ զմարգարէս։ «Եւ ահա ձայն յամպոյն»(7)։ [եր. 277ա] Ձայն եղեւ յամպոյն առ Մովսէս եւ Եղիաս, և մանաւանդ առ աչակերտան։ զի հաստատապես գիտացին, թէ նա և իսկապես Որդին Ա[usուծո]յ։ եւ եր ամպն որպես կարծեմ հոգեւոր։ և բանն Տ[եառ]ն եղեւ նմաւ որպես առ մա[ր]գարեան, եւ որպես լսեմք յնասկայ, եթէ «Որդիս ծնո[յ] եւ բարձրացուցի»(8), ոչ նասկայ ասեմք որդիս, այլ հաւրն երկնաւորի, որ ի մարգարեին։ նոյնպես եւ զձայնն որ ի յամպոյն, ոչ ամպոյն, այլ հաւրն որ յամպին լսեցին ի մերձենալն Ց[իսուս]ի ի նոսա։ «Համբարձեալ զաչս իւրեանց տեսին միայն զՑ[իսուս]ս»(9), այսինքն զաւետարանս, և զաւբենս և զմարգարէս միաբանեալ և մի եղեալ։

(1) Մատթ. ժէ. 2։ Տպ. «եւ հանդերձք նորա եղեն...».
(2) Մատթ. ժէ. 3։
(3) Մատթ. Ի. 23։ Տպ. «այլ որոց տուեալ է...»։
(4) Մատթ. ժէ. 4։ Տպ. «...և ասէ ցՅիսուս, Տէր, բարւոք...»։
(5) Մարկ. Թ. 5։ Տպ. «Քանզի ոչ գիտէր...»։
(6) Մատթ. ժէ. 5։ Տպ. «...Նա խօսէր, ահա... ի վերայ նոցա»։
(7) Մատթ. ժէ. 5։ Տպ. «Ձայն եղեւ յամպոյն...»։
(8) Ես. Ա. 2։
(9) Մատթ. ժէ. 8։ Տպ. «Ամբարձին զաչս իւրեանց և ոչ զոք տեսին՝ բայց միայն...»։

«Եւ յիջանելն նոցա ի լեռնէն, պատուիրեաց նոցա Ց[իսուս]ս. մի ումեք ասիցեք զտեսիլդ մինչեւ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ»(1)։ Որպես յառաջինն ոչ կամի զի գիտացն ամբոխն զհրաշափառադոյնն, զի մի վնասակալ գայթակղո[ւ]ցին ի ժամանակի չարչարանացն. քանզի այդ ամենայն յետ յարութե[ա]ն գիտացեալ աւգտակար են։

«Հարցին աչակերտքն զնա եւ ասեն. զիարդ ասեն գպիրքն, եթէ պարտ է եղիայի նախ գալ»(2)։ Ասեն աչակերտք մեք այժմ զեղիա տեսաք ընդ քեզ, իսկ գպիրքն ուսուցանեն, եթէ եղիա[յ]ի պարտ է գալ յառաջ քան զՔ[rիստո]ս. այլ լսեցաւք եթէ[ն] սուտ ուսուցանեն, [եր. 277բ] եւ նա ասաց նոցա վ[ա]ս[ն] Յովհաննու եւ հաւատացին։

«Եւ ասաստեաց նմա Ց[իսուս]ս եւ ել ի նմանէ դեւն»(3)։ վ[ա]ս[ն] զի գրեալ է եթէ աստուածոց լսանահարին և ոչ պիւին, կարծեմ ի մեզոց եր դիպեալ պատուհասն, զի ընդունելով զաստուածն, ուզտեսցի յելանել դիւին։

«Ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ասիք լերինս այսմիկ փոխեաց և փոխի»(4)։ Քանզի նմանեցաւ սրբոյս[ւ]թի[ւն] երկնից հատոյ մանանխոյ. նմանեցաւ եւ գովելի հաւատս հատոյ մանանխոյ, իսկ որ միոյ իմիք նման են, եւ ինքեանց նմանին. ապա ուրեմն գովելի հաւատ բոլորովիմբ հատոյ յիրաւի նմանեցաւ, զոր պարտ է երկրպագութիւ, զի ածեցեալ եղիցի ծառ մեծ։ «Եւ ոչինչ տկարասցի ձեզ»(5)։ Որ հաւատոյն ճշմարտութ[եամ]ք, նմաւ ոչինչ յիցս անզաւբո[ս]ցի(s!) յաւգուտ իւր, այլ ամենայն գործակից լինի ի բարի։

«Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ գարձջիք իբրեւ զմանկունս, ոչ մտանիք յարքայութի[ւն]ն երկնից»(6)։ Եւ եթէ ամենեցուն որ մտանեն յարքայութի[ւ]ն, պարտ է դառնալ եւ լինել որպես

(1) Մատթ. ժէ. 9։ Տպ. «Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտ... և ասէ, Մի՛ ումեք...»։
(2) Մատթ. ժէ. 10։ Տպ. «Հարցին զնա աչակերտքն և ասեն», մեռացեալը եւս առաջութեամբ։
(3) Մատթ. ժէ. 17։ Տպ. «Ասաստեաց ի նա»։
(4) Մատթ. ժէ. 19։ Տպ. «...ասասջիք... փոխեաց աստի անդր...»։
(5) Մատթ. ժէ. 20։ Տպ. «և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ»։
(6) Մատթ. ԺՀ. 3։ Տպ. «...և լինիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտանիցէք...»։

զմանկունս, ապա վ[ա]ս[ն] ամենեցուն ասացաւ առեալսն որդւոյ· «Ահա ես եւ մանկունք իմ զոր ետ ինձ Ա[usուա]ծ»(1), քանզի ամենեքեան ի մատաց կատարելութենէ ի չարութենէն տգայք են։ [եր. 278ա] «Որ խոնարհեցուցանէ զինքն որպես զմանուկս զայս, նա է մեծ յարքայութ[ա]ն երկնից»(2)։ Ոչ է նոյն զինքն խոնարհեցուցանել և տառապեցուցանել, եւ այլ ի յայլմէ խոնարհիլ եւ տառապիլ· որ զինքն խոնարհեցուցանէ, նա բարձրացի· իսկ որ ի անանկութենէն խոնարհի եւ տառապելոյ(1) կամ ի նախատանաց ուրուք, այսպիսի չէն խոնարհութի[ւ]նք։ Բայց Ք[ր]իսոն հրամայեն ինքն զինքն խոնարհեցուցանել, որ կամաւորութի[ամ]ն խոնարհեցաւ, որպես զմանուկ, որ կացոյց ի միջի նոցա։

«Որ ոք գայթակղեցուցանէ մի ի փոքրկանցս յայսցանէ հաւատացելոց յիս»(3)։ Ոչ կարծեմ զնոյն գալ փոքրիկ եւ մանուկ· քանզի ոչ փոքր, եւ որ գայթակղին, մեծ յարքայութենէն երկնից են· եւ ոչ դարձեալ լինին որպես զմանուկն յարքայութի[ա]ն երկնից փոքրն որ գայթակղեցի, այլ որ ազատեալ և ի վեր քան զգայթագղութի[ւ]նն· «Քանզի խաղաղութի[ւն] բազում որ սիրեն զանուն Տ[եառն] եւ ոչ գոյ ի նոսա գայթագղութի[ւն]»(4)· զայս ասաց որ ոք գայթագղեցուցանէ մի ի փոքրկան[ց]ս յայսցանէ· քանզի փոքունք դիւրաւ գայթագղին, մի անփոյթ արասցուք զնոսա, զի մի ոք առ մեզ կորիցէ ի փոքրկանցն· քանզի փոքր հաւատացեալ տկարահաւատն է [եր. 278բ]։

«Եթէ ոտն քո կամ ձեռն գայթագղեցուցանէ զքեզ, կտրեա զնա եւ ընկեա ի քէն»(5)։ Գործք մարդկան կրկնակի են· կնոք ըստ Ա[usուծո]յ գործին, եւ կնոք ընդդեմ Ա[usուծո]յ· նոյնպես եւ գնացք ոմանք ըստ Ա[usուծո]յ եւ այլք ոչ ըստ Ա[usուծո]յ· արդ որ զերկոսեան գործն գործել և զերկոսեան գնացսն գնալ, եւ ոչ զմինն ճշմարտապես, գհեղինին է արժանի, իսկ որ զմինն ի սոցանէ զհաճոյ[ս]ն Ա[usուծո]յ՝ նա արքայութի[ա]ն երկնից· նոյնպես իմանալի է, եւ վ[ա]ս[ն] աչաց երկուց· վ[ա]ս[ն] այսորիկ

(1) Ես. Ը. 18։ Տպ. «Ահաւասիկ» փ. «ահա»։
(2) Մատթ. ԺԸ. 4։ Տպ. «Արդ որ խոնարհեցուցանէ զանձն իւրեւ...»։
(3) Մատթ. ԺԸ. 6։ Տպ. «եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի ի... յիս հաւատացելոց»։
(4) Սաղմ. ՃԺԸ. 165։ Տպ. «Խաղաղութիւն բազում է այնոցիկ որ սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ...»։
(5) Մատթ. ԺԸ. 8։ Տպ. «եթէ ձեռն քո կամ ոտն... հատ զնա...»։

եւ փեսայն վ[ա]ս[ն] միոյ ոմանէ հարսինն ասէ· «Ոչցուցեր զսիրտ մեր միով ակամբ քով»(1), որ ասէին «Գալով եկիր, զի որք ոչն տեսանեն, տեսցեն եւ որք տեսանենն, կուրասցին»(2), առաջինն ոչն տեսանել վատթարագոյն քան զտեսանելն։

«Տեսէք մի արհամարհէք զմի ի փոքրկանցս յայսցանէ, ասեմ ձեզ, զի հրեշտակք դոցա հանապազ տեսանեն զերե[ս] հաւր իմոյ որ յերկինս»(3)։ Մեծամեծքն ոչ արհամարհին, իսկ փոքունքն արհամարհիլ դիւրագոյնք են, ուստի փոքունքն ի հրեշտակաց պահպանին, «Բանակի հրեշտակ Տ[եառ]ն չուրջ զերկեղածովք իւրաւք»(4)· իսկ կատարեալքն ի Տ[եառ]նէ պահին, որպես ասեն, եթե «Տ[է]ր առաջի իմ յամենայն ժամ, զի մի սասանեցայց»(5), և դարձեալ, «կարդա[ս]ցե առ իս եւ ես լուայց նմա եւ առ նմա եղեց ի նեղութեան»(6)։ [եր. 279ա] Բայց զի՞նչ է տեսանելն ի յերկինս հրեշտակացն զերեսս Ա[usուծո]յ· զերեսս Ա[usուծո]յ անհնարին է տեսանել, զի բնութ[եամ]ք անտեսանելի է· ինձ թուի զերեսս Ա[usուծո]յ տեսանել, առնել եւ զիսել զկամս Ա[usուծո]յ է։

«Զի՞նչ ձեզ թուի, եթե մարդոյ ուրուք լինիցի ճ· ոչխար»(7)։ Մարդոյ ուրուք Ք[ր]իսոս[ի], որ եր ի պատկերի Ա[usուծո]յ յառաջագոյն, սորա թողեալ զիննսունն ոչխարսն ի լերինն և եկն զկորուսեալ ոչխարն խնդրել, զնոզիս մարդկան։

«Դարձեալ ասեմ ձեզ եթե երկու ի ձենջ միաբանեսցին յերկրի յաղագս ամենայն իրի, զոր խնդրեսցեն, եղիցի ի հաւրէ իմմե, որ յերկինս»(8)։ Միաբանեցան Պետրոս եւ Սոսթենես զմի թուղթ գրեալ։ Պետրոս եւ Սիղվանոս եւ Տիմոթեոս, և որդիքն կորնթ[ա]ցւոց Դաւթի ի քառասներորդ առաջներորդ սաղմոսին։ «Զոր աւրինակ փափագի եղջերու յաղբեւրս(*) ջուրց, այնպես փափագին

(1) Սրբ երգոց Դ. 9։ Տպ. «Սրտակաթ արարեր զմիզ միով...»։
(2) Յովհ. Թ. 38։ Տպ. «Ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի որ...»։
(3) Մատթ. ԺԸ. 10։ Տպ. «Զգուշ լերուք, մի՛ արհամարհիցէք... նոցա յերկինս հանապազ... որ յերկինս է»։
(4) Սաղմ. ԼԴ. 8։ Տպ. «Բանակ հրեշտակաց Տեառն չուրջ է...»։
(5) Սաղմ. ԺԵ. 8։ Տպ. «Յառաջագոյն տեսանէի զՏէր... զի է ընդ աջմէ իմմէ զի մի՛...»։
(6) Սաղմ. Ղ. 15։
(7) Մատթ. ԺԸ. 12։ Տպ. «Զի՞րդ թուի ձեզ. եթէ լինիցի մարդոյ հարեւր ոչխար»։
(8) Մատթ. ԺԸ. 19։ Տպ. «... միաբանիցին յերկրի վասն ամենայն իրաց, զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա ի Հօրէ իմմէ որ յերկինսն է»։
(*) Ջուր՝ ւը վերուց գրած, բայց նոյն գրչով և թանաքով։

անձինք մեր առ քեզ Ա[usուա]ծ»(1)· միաբանին եւ որ կատարեալք են նովիմբ մտաւք եւ միով կամաւք· եւ միաբանիլ երկուց յերկրի եւ լինել ընդ Ք[rիusnu]ի ոչինչ զանազանին, եւ երկուք եթե միաբանեսցին հոգի եւ մարմին, զի մարմինն հնազանդիցի, եւ հոգին տացէ զկենդանուԹի[ւն]· եւ զարձեալ երկու կատարանք միաբանեալ, յորոց ի մէջ է Ք[rիusn]ս եւ ծանուցանի յերկոցունց [եր. 279բ]։

«Վասն այսորիկ նմանեցաւ արքայուԹի[ւն] երկնից առն Թագաւորի»(2), եւ որ ի կարդին է։ Միթէ առակիս այս են. ուստի սուրացանել մեզ Թէ պարտիմք զյանցանս մարդկան, որ առ մեզն լինին, Թողուլ նոցա, պարտական ամենայնի մարդկան նեռն, եւ յետ սորա յարտաքինան բանսարկուն. եւ կամ որ ունի ինչ ի յաւիտենից յայսմանէ քանքար բարի մարդիկ, որով մեծանուն լիներ Աբրահամ եւ այլ սուրբք· քանքար չար որ ի կապարոյ, յորոյ վերա[յ] նստեր կինն անիրաւ, զոր հաւս Զաքարիաս(3)· «Հրամայեաց գնա վառմանել տ[է]ր եւ զկին նորա եւ զորդիս»(4)։ Հրամայ Ա[usուա]ծ հրեշտակաց եւ այլոց սպասաւորաց տալ ցտանջսն. տանջսքն հրեշտակք ի դատաստանի հանդերձելումն։

«Եւ մատեան առ նա փարիսացիքն փորձել զնա եւ ասէին եթե պարտ է մարդոյ արձակել զկին իւր ըստ ամենայն պատճառս»(5)։ Փորձին զնա կարծելով, եթե մի յերկուց պատասխանեսցէ, կամ ոչինչ իւիք պատմէ լուծանիլ զամբաստանուԹի[ւն] եւ կամ մեղաւք են յամբաստանուԹե[ան]· իսկ նորա պատասխանեալ ասէ ցնոսա. «Ոչ ընթերցայք, եթե որ արարն ի սկզբանէ արու եւ եգ արար»(6)։ [եր. 280ա] Ի յարուցածին ո՛չ յԱ[usուծո]յ կարծի ասացեալ, այլ յԱդամայ· վ[ա]ս[ն] այսորիկ Թողցէ այր զհայր իւր եւ

(1) Ծննդ. Բ. 24։ Ե Մատթ. ԺԹ. 5։ Տպ. «... զհայր իւր և զմայր իւր...»։

(2) Մատթ. ԺԹ. 6։

(3) Մատթ. ԺԹ. 8։ Տպ. «... հրամայեաց ձեզ արձակել...»։

(4) Ելից. Ե. 33։ «զի իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ իբրեւ զիւր անձն...»։

(5) Մատթ. ԺԹ. 10. 11։ Տպ. «Ասեն ցնա... իւր... և նա ասէ ցնոսա, ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի...»։

(6) Մատթ. ԺԹ. 12։ Տպ. «Զի են ներքինիք... և են ներքինիք... եղեն ներքինիք, և են ներքինիք որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն... երկնից»։

(*) Զուտ Ա[usուածայ]ին։

(1) Սաղմ. ԽԵ. 2։ Տպ. «Որպէս փափաքէ եղջերու յաղբերս... փափաքէ անձն իմ առ...»։

(2) Մատթ. ԺԸ. 23։

(3) Զաքր. Ե. 7։ Տպ. «Եւ ահա կշիռ մի կապարեայ ամբարձեալ, և կին մի նստեր ի մէջ չափոյն»։

(4) Մատթ. ԺԸ. 25։

(5) Մատթ. ԺԹ. 3։ Տպ. «Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա, և ասէին եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ամենայն վնասուց»։

(6) Մատթ. ԺԹ. 4։ Տպ. «Զիւղ՞ ընթերցեալ ձեր թէ՝ որ հաստատեացն...»։

ներքինանալ ասի, ժուժկալութ[եամ]ք եւ սգաստութ[եամ]ք կեալ ի պառնկութենն եւ յաղտեղի գործոց, փրկիչն պատրաստեր եւ պատուիրեր զամենայն ինչ բանիւ եւ կարգաւ եւ հոգեւոր ուսմունք[եամ]ք գործել, զի կարիցեմք արժանաւորապէս տեսանել զհայրն երկնաւոր։

«Դարձեալ ասե. դիւրագոյն է մալխոյ ընդ ծակ ասղան մտանել քան մեծատանն յարքայութիւնն Ա[ստուծո]յ»(1)։ Ի յուներնէն յուզտ գրեալ է, եւ նշանակ զքեւրս եւ զկորո[ւ]սեալս գործով վտխարուք. այսպիսւոցն դիւրագոյն է ապաշխարութ[եամ]ք եւ ուղղութ[եամ]ք մտանել յարքայութիւնն քան մեծատան այսպիսւոյ։

«Նման է արքայութիւնն Ա[ստուծո]յ(*) մարդոյ տանուտեառն»(2)։ Մարդ Ա[ստուա]ծ ասի ի բազում գիրս ա[ստուա]ծայինս, վ[ա]ս[ն] զգենլոյն Որդւոյն Ա[ստուծո]յ զպատկեր մարդկան, և տանուտեր է տանս այսմիկ, զորմէ առաքեալն ասաց, «Մովսես հաւատարիմ է յամենայն տան նորա, այլ Ք[րիստո]ս իբրեւ որդի ի վերա[յ] տան իւրոյ, որոյ տուն մեք եմք»(3)։

«կարեք ըմպել զբաժակն զոր ես ըմպելոց եմ»(4)։ Բաժակն փրկութե[ան], որ ասացաւ «Պատուական է առաջի Տ[եառ]ն մահ սրբոց իւրոց»(5) [եր. 281ա]։

ԺԱ.

«Եւ որպես մատա եղեն յե[ռուսաղէ]մ եւ եկին ի Բեթփագէ մատա ի լեառն ձիթենեաց, յայնժամ արձակեաց Ց[իսուս] երկուս յաշակերտաց իւրոց»(6), եւ որ ի կարգին գրեալն է։ Արձակեաց զի ածցեն զեչն եւ զյովնանակ նորին. եչն նշանակե զհին յիմար ժողովուրդն, զի այնչափ նշանս արարեալ եր ի միջի նոցայ եւ ոչ ծանեան զնա. եւ դարձեալ մինչեւ ցայսաւր անգիտանան զմավսեսեան եւ զմարգարեական զգրոցն զմիտս և զնշաւերութիւն. եւ զյովնանակն հեթանոսական ժողովուրդն, զի դեռ եւս անփորձ եին ա[ստուա]ծպաշտութեան. նշանակ լուծումն իչոյն զհին կտակարանս, որ եին կապեալ կապանաւք անյայտութե[ան] եւ գժուարապատմութե[ան](!), զոր լուծին աչակերտք Ք[րիստո]ի. իսկ զյովնանակ զնոր կտակարանս, յորոց վերա[յ] հանգեաւ Ք[րիստո]ս առաքելոցն յաւերնիմամբ, այս է ձորձելն։

«Բազում ժողովուրդք զհանդերձս իւրեանց տարածանէին»(1) եւայլն։ Բազմութի[ւ]նք ազգաց, որք ճանապարհ եւ գնացս չինքեանս արարին կենարար բանին։ «Այլք հատանէին ոստս ի ծառոց»(2)։ Զկապեալ բանս եւ զանյայտս հնոյ գրոյն, զոր հոգւոյն սրբոյ ազդմամբ ի Ք[րիստո]ս վերայթերեցին նոր վարդապետք, իսկապես գիտացեալք, եթե վ[ա]ս[ն] նորա ասացան։ «Իսկ ամբոխն որ առաջոյ երթայր եւ վերջոյ»(3)։ Առաջին ամբոխն մարմարեիցն հոյլքն, վերջինն առաքեալքն, [եր. 281բ] որք միաբանապես հայցեին յորդւոյն Ա[ստուծո]յ ապրիլ բոլորիցս, այս է ովսաննայն։

«Եւ տեսեալ թզենի մի ի վերա[յ] ճանապարհին, եկն ի նա եւ ոչինչ եգիտ, բայց միայն տերեւս»(4)։ Թզենի խլփատեալ ժողովուրդն, որ եկն Ք[րիստո]ս քաղցեալ եւ ոչ եգիտ պտուղ, այլ միայն ցնորական կենդանութի[ւն], ուստի ի գալն նորա գաւառացան։

«Զինչ խուճ ձեզ, այր մի սուներ երկուս որդիս»(5)։ Այրն Ք[րիստո]ս և երկու որդիքն երկու ժողովուրդք, հրեայք եւ հեթանոսք, որ ասաց եթե երթամ ա[ն]ր, հրեական ժողովուրդն, որ ասաց եթե երթամ յայգին, ի գործ ուրախութե[ան], եւ ոչ գնաց. եւ երկրորդն(*) հեթանոսական ժողովուրդն, որ ասաց ոչ երթամ,

---

(1) Մատթ. ժԹ. 24։ Տպ. «Դարձեալ ասեմ ձեզ, Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան... մտանել»։

(2) Մատթ. Ի. 1։ Տպ. «Քանզի նման... երկնից առն...»։

(3) Եբր. Գ. 5-6։ Տպ. «Մովսէս հաւատարիմ է յամենայն տան նորա իբրեւ ծառայ առ ի վկայութենէ բանից ասացելոց. Այլ Քրիստոս իբրեւ որդի ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ եմք»։

(4) Մատթ. Ի. 22։ Տպ. «կարէ՞ք...»։

(5) Սաղմ. ՃԺԵ. 15։

(6) Մատթ. ԻԱ. 1։ Տպ. Իբրեւ մօտ... մերձ ի լեառն... Ցիսուս արձակեաց երկուս...»։

(*) Ջ.ում՝ «Ա[ստուծո]յ» փոխարէն լուսանցքում նաեւ «երկնից»։

---

(1) Մատթ. ԻԱ. 8։ Տպ. «տարածեցին զհանդերձս իւրեանց»։

(2) Մատթ. ԻԱ. 8։

(3) Մատթ. ԻԱ. 9։ Տպ. «եւ ժողովուրդն, որ առաջին և զկնի երթայինն»։

(4) Մատթ. ԻԱ. 19։ Տպ. «...եգիտ ի նմա...»։

(5) Մատթ. ԻԱ. 28։ Տպ. «Բայց ինչ՞ դու թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք»։

(*) Ջ.ում՝ երկրորդորն։

եւ յետոյ զղջացեալ գնաց յայգեստանն։ «Այլ առակ լուարուք, այր տանուտեր տնկեաց այգի եւ չրջապատեաց ցանգ եւ փորեաց հնձան»(1), եւ որ ի կարգին է։ Այգի առաջին ժողովուրդն, ցանգ պահպանութի[ւ]ն Ա[սուծո]յ, աշտարակ տաճարն, հնձան տեղի պատարագացն եւ նուիրացն, մշակք հրեայքն եւ իմաստունք ժողովրդականն, գնալ Տ[եառ]ն ոչ եւս երեւիլ նոցա ի հրեղէն ամպ, ժամանակ մերձեցեալ եւ ծառայք, մարգարէից առաքումն, և որդի Ք[րիստո]ս. «Սա է ժառանգն եկայք սպանցուք զսա և կալցուք ժառանգութի[ւ]ն սորա»(2), որպես Հերովդես լուեալ վ[ա]ս[ի] գալստեան նորա կոտրեաց զմանկտին Բեթղահեմի, կամելով զնա կորուսանել(3), գնեցաւ Մրքիա, սպատակեալ ի Աեդեկիայէ(4)։ [եր. 282ա] Սպանին Զաքարիաս ի մէջ տաճարին եւ սեղանոյն(5), քարկոծեցին զերեմիաս(6) և զՋաքարիաս զորդի Բարիդայայ(7)։

«Դարձեալ պատասխանեալ Յ[իսու]ս ասե նոցա առակաւք. նմանեցաւ արքայութի[ւն]ն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրոյ»(8)։ Յառաջին առակիդ առն տանուտեառն ասաց, իսկ այժմ առն թագաւորի. վ[ա]ս[ի] զի յառաջնումն ոչ եր յիշելոց զառաքումն զաւրականացն, իսկ աստ յիշելոց եր։ Հարսանիս արար հայր Ա[սուա]ծ որդւոյ իւրոյ փեսայի Ք[րիստո]ի եւ հարսին եկեղեցական հոգւոյ, որ ոչ ապականի, այլ զանապականութի[ւն] ի նորա մխաւորութիւնեն եւ ի հաղորդութիւնեն ընկալաւ. ծառայս կոչե զմովսես և զմարգարեան։ «Եւ նոքա ոչ կամեցան գալ»(9), ամանք վ[ա]ս[ի] փութոյ կենցաղոյս այսորիկ եւ ապերախտութի[ւն]։ «Նե դարձեալ առաքեաց այլ ծառայս»(10), զամենայն վարդապետան և զհայրապետան։ «Ահա ճաշ

(1) Մատթ. ԻԱ. 33։ Տպ. «Այր մի էր... որ տնկեաց այգի և ցանգով պատեաց զնա, և փորեաց ի նմա հնձան»։

(2) Մատթ. ԻԱ. 38։

(3) Մատթ. Բ. 16։

(4) Բ. Մնաց. ԻԸ. 23։

(5) Մատթ. ԻԳ. 35։

(6) Երեմ. ԼԸ. 6։

(7) Բ. Մնաց. ԻԴ. 20-21։ Զեռագրի «զՋաքարիասն» տպագրուածի մէջ «Ազարիաս» գրուած է։

(8) Մատթ. ԻԲ. 1։ Տպ. «... պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա... Նմանեցաւ... իւրում»։

(9) Մատթ. ԻԲ. 3։ Տպագրուածի մէջ «նոքա» կը պակասէ։

(10) Մատթ. ԻԲ. 4։ Տպագրուածի մէջ «եւ» կը պակասէ։

իմ պատրաստեալ է, զուարակք եւ պարարակք իմ զեննեալ»(1)։ Ճաշ սեղան իմաստութի[ւն] եւ գիտութի[ւն] ա[սուա]ծայնոյ, ցուլք մեծ, ա[սուա]ծպատուութի[ւն]ք ուրախարարք, պարարակք, քաղցր վարդապետութի[ւն]ք որ պարարէ զոգիս։

«Լուեալ թագաւորին բարկացաւ, յղեալ զաւրականս կորոյս զսպանողսն զայնոսիկ եւ զքաղաքն նոցա հրկեզ արար»(2)։ Զաւրական Ա[սուծո]յ հրէշտական(!) զաւրութի[ւն]ք և ապա վհասպեսիանոս, և զաւրականն որ եկեալ կորոյս ի[եր. 282բ]Հրեաստան յետ խաչելութի[ւն]ն Ք[րիստո]ի եւ զքաղաքս նոցա հրով վիպանեաց(տ!)։

«Յայնժամ ասե թագաւորն ծառայից իւրոց»(3)։ Ծառայ առա առաքեալքն և հրեշտակք կարգեալք ի կոչումն հեթանոսաց. ասացին իսկ առաքեալքն ցՀրեայսն, ձեզ հարկաւոր եր նախապատմել զբանն Ա[սուծո]յ, բայց զի անարժան զձեզ արարեք յաւիտենականի կենացն, վ[ա]ս[ի] այնորիկ երթամք ի հեթանոսս(4)։

«Եւ ելեալ ծառայիցն ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան, զորս գտին չարս եւ զբարիս»(5)։ Չարս ժողովեցին զի մոռացին չարութի[ւն] իւրեանց եւ զգեցան հանդերձ հարսանեաց եւ զկերակուր ա[սուա]ծային ուտիցին. եւ զբարիսն կոչեցին եւ հեթանոսք եին. ապա զի՞րդ բարիք։ Բարիս զայնպիսիսն լսելի է, որք մեղմագոյն եին ի չարութե[ա]ն եւ բնութե[ամ]ք զաւրինացն(տ!) գործեին։ «Եւտես անդ այր մի որ ոչ եր զգեցեալ հանդերձ հարսանեաց»(6), վ[ա]ս[ի] զի չեր մերկացեալ զչարութի[ւ]ն եւ զգեստ ամպարշտութե[ա]ն, այլ դեռ եւս զգեցեալ ուներ եւ միայն նենգութի[ւ]ն եւ խորամանգութի[ւ]ն մեռեալ եր, այսինքն անա[սուա]ծութի[ւ]ն եւ ամպարշտութի[ւ]ն ոչինչ բերելով ի պատուիրանեն Ք[րիստո]ի եւ յաւաքինութենե, վ[ա]ս[ի] այնորիկ եւ կարկեցաւ, զի ոչ ուներ պատասխանի։ [եր. 283ա] կապեն հրեշտակք զձեռս եւ զոտս եւ հանեն ի տանջանն.

(1) Մատթ. ԻԲ. 4։ Տպ. «Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ և պարարակք զեննեալ են»։

(2) Մատթ. ԻԲ. 7։ Տպ. «Իսկ թագաւորն իբրեւ լուաւ, բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն զայնոսիկ և զքաղաքն նոցա այրեաց»։

(3) Մատթ. ԻԲ. 8։ Տպ. «Յայնժամ ասէ ցծառայս իւր»։

(4) Գործք։ ԺԸ. 6։ Ո՛չ բառական, այլ իմաստով։

(5) Մատթ. ԻԲ. 10։ Տպ. «Եւ ելեալ ծառայքն...»։

(6) Մատթ. ԻԲ. 11։

զոտս զդնացս, զոտս զազդողական զաւրութիւնն։

«Առաքեն առ նա զաչակերտան իւրեանց հանդերձ հերիւդիանոսաւքն»(1)։ Հերիւդիանոսքն ի հերովդիոս, որք ասէինն չե պարտ պատերազմել ընդ կայսեր։ «Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես»(2)։ Նենգութ[եամ]ք գովեին յուժարեցուցանելով յասել, եթե ոչ ե պարտ հարկատու լինել կայսեր, զի մատնեացնն հերոդիանոսացն. իսկ փրկիչն պատասխանեաց ա[usուա]ծապես, եթէ «երթայք, ա՛ւք զկայսերն կայսեր եւ զԱ[usուծո]յն Ա[usուծո]յ»(3)։ Նոքա կարծեին, եթե պատասխանե մեզ մի՛ տալ ինչ կա[յ]սեր, զի Ա[usուծո]յ ծառայիցեք եւ ոչ մարդկան։

«Յաւուրն յայնմիկ մատեան առ նա Սադուկեցիքն եւ ասեն. վարդապետ, Մովսես ասաց, եթե մեռցի ոք՝ ոչ ունելով որդի, առցե զկինն նորա եղբայր նորին»(4) եւ այլն։ Սադուկեցիքն յաւրութ[ւն] ոչ խոստովանին եւ ոչ զհոգւոց անմահութ[ւն], նոյնպես եւ Սամարացիքն. արդ նախատելով զայնոսիկ, որ ասէինն յարութ[ւն] լինել, հարցին ցՔ[rիստո]ս, եթե ևեթանեքին յաւնեն ո՛ւմ լինիցի կինն կին։ «Պատասխանեալ Յ[իսուս]ս ասե ցնոսա, մոլորեա՛լք»(5). և քանզի զմարգարեն ոչ ընդունեին բայց ի Մովսես, և զգաւրութիւն գրոյն անգիտանային, և միայն ի բառն հայեին, զի եթե գիտեին, ես եմ Ա[usուա]ծ Աբրահամու եւ Սահակայ [եր. 283բ] եւ Յակովբայ և Ա[usուա]ծ կենդանեաց, այլ ոչ մեռելոց(6), ապա զիտեին անմահ զհոգիս նոցա, և խոստովանեին զյարութ[ւն]։

«Յարեանն Աբելի արդարոյ մինչեւ յարիւն Զաքարիայի, որդւոյ Բարեքեայ»(7)։ Յալսևպես եբրայեցի չարտգիր, յիշեաց եթե Յովաս թագաւոր սպան զՁաքարիաս ի մէջ տաճարին և սեղանոյն։

---

(1) Մատթ. ԻԲ. 16։ Տպ. «եւ առաքեն... հերովդիանոսաքն հանդերձ»։

(2) Մատթ. ԻԲ. 16։

(3) Մատթ. ԻԲ. 21։

(4) Մատթ. ԻԲ. 23-24։ Տպ. «Յայնմ աւուր... Սադուկեցիքն որ ասէին թէ չիք յարութիւն, հարցին ցնա և ասեն... եթէ ոք մեռցի անորդի, արասցէ զկին... իւր, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում»։

(5) Մատթ. ԻԲ. 29։ Տպ. «Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ, Մոլորեա՛լք»։

(6) Մատթ. ԻԲ. 32։ Տպ. «ես եմ... Աստուած Իսահակայ և Աստուած Յակովբայ. և չէ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց»։

(7) Մատթ. ԻԴ. 35։ Տպ. «մինչեւ ցարիւնն» փ. «յարիւնն»։

«Եւ յաղագս բազմանալոյ անաւրենութ[եա]ն բազմաց ցամաքեսցի սէր»(1)։ Բազմաց ասաց եւ ոչ ամենեցուն, քանզի այնոցիկ որ գնանն զնեզ եւ զանձուկ ճանապարհն, այնպիսեացն ոչ ցամաքեսցի։ «Եւ քարոզեսցի աւետարանս արքայութ[ւն] ընդ ամենայն տիեզերս ի վկայութ[ւն] ամենայն ազգաց եւ ապա լուկեսցե կատարած»(2)։ Զայս տեղի մեկնեալ ուրուն ասաց, եթե որչափ պակասիկ են ազգք որոց ե քարոզեալ աւետարանս, նոյնչափ ե ժամանակ մինչեւ ցկատարած։ «Յորժամ տեսանիցեք զպիղծն անապատի»(3)։ Բանն Դանիելի այսպես գրեցաւ. ի կես եւթներորդին բարձցի պատարագն եւ նուեր և ի տաճարին պիղծն անապատի իցե մինչեւ ցկատարած ժամանակին(4)։ կատարած տացի յանապատն. Հրեայք կարծեն պիղծ ի տաճարն մտանել, զոր յղեցին Հռոմա[յ]եցիք զգլուխ խոզին. [եր. 284ա] իսկ Պաւղոս ուսուցանե զմեզ պիղծ գնեան գալ, որ եկեալ յանապատ և յապականութ[ւն] աչխարհի։

«Ջանզի ուր գեչն ե, անդր ժողովեցին արծուիք»(5)։ Գեչ եւ անկուած անասնոց զմարմին իւր, վ[ա]ս[ն] զի չարչարեցաւ եւ մեռաւ։ Զմեռեալ մարմինն իւր անկած անասնոց, որ անկաւ վ[ա]ս[ն] փրկութ[ան] մերոյ, իսկ արծուիս՝ զհաւատացեալս ի նա, որք թագաւորապես և արժանաւորապես կերակրին ի նմանե։ Զայսպիսիս արծուիս անասնոց և ոչ ագռաւս կամ անգղս, եւ ա՛յլ ինչ մեռելակեր հաւս, այլ արծուիս. վ[ա]ս[ն] զի հաւս այս որպես ասեն զպատրաստ որս եւ զմեռեալ մարմին զարժանաւորաց ուտել, բայց ինքն վաստակի եւ ջանայ եւ զկենդանիս որսացեալ, կերակրի. եւ զայս գիտելի ե, զի ի յանապարինին չասե գեչ, այլ անկած ասե։

«Յայնժամ որ ի Հրեաստանի իցեն փախիցեն ի լերինս»(6)։ վ[ա]ս[ն] է՞ր որ ի Հրեաստանի իցեն փախիցեն ի լերինս. որք կարծեցին պիղծ անապատի լինել զպղծութ[ւն] տաճարին ի հո-

---

(1) Մատթ. ԻԴ. 12։ Տպ. «եւ վասն... ցամաքեսցի սէր բազմաց»։

(2) Մատթ. ԻԴ. 14։ Տպ. «...ի վկայութիւն ամենայն հեթանոսաց...»։

(3) Մատթ. ԻԴ. 15։ Տպ. «Արդ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն»։

(4) Դանիէլ Թ. 27։ Տպ. «... և կէս եւթներորդի բարձցին զոհք և նուէրք. և ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ, և մինչեւ ի վախճան ժամանակի կատարած տացի ի վերայ աւերածոյնն»։

(5) Մատթ. ԻԴ. 28։ Տպ. «Զի ուր գէշն իցէ... ժողովեսցին...»։

(6) Մատթ. ԻԴ. 16։

ոմոց կամ ի Պիզատոսէ, իրաւապես ասէ ասէն ԵՒ որք ի Հրեաստանի են փախիցեն ի լերինս. վ[ա]ս[ն] զի այնպիսի դառնութ[իւն] չեր եղեալ Հրեից, որպես ի վեսպասիանոսէ. իսկ ԵՒ պիղծ անապատի երկրիս նեռն եր, որ առաւել [եր. 284բ] անապատ առնել զհաւատացեալս ի Ք[րիստո]ս ակն, եւ վ[ա]ս[ն] ե[՞]ր արդեւք որ ի Հրեաստանին են միայն փախիցեն ի լերինս. այլ արդեւք ասիցէ ոք ԵՒ եղիցի պիղծ նեռնն եւ ի Հրեաստանի թագաւորէ. վ[ա]ս[ն] այնուհետեւ նոքա միայն փախչին ի լերինս, և յաղագս յայժ անաբեկութ[ե]ան եւ երկիւղին։

«Եւ որ ի տանիս ե, ոչ կարէ իջանել ի տունն եւ առնուլ ինչ ի տանէն իւրմէ և որ յանդաստանին, չժամանէ դառնալ առնուլ զնորթս իւր. վայ ե յղեացս եւ ծնդուացս»(1). վ[ա]ս[ն] զի ոչ կարեն փախչել, եւ պարտ ե ազաւթել, «զի մի՛ լինիցի փախուստն այն ի չաբաթու կամ ի ձմերան»(2)։ ի ձմերան վ[ա]ս[ն] աւգտին խոտութ[ե]ան եւ ի չաբաթու, քանզի հրեական ազգն եւրիս ասպարէզս միայն ճանապարհորդելոյն ի չաբաթու. այլ այլպես մնկնի ըստ ոմանց. իսկ ԵՒ որպես զամենայն առակս խաւսեցաւ վերկիչն, ապա ուրեմն այլով աւրինակաւ ե իմանալ։ Հրեաստան անուանեաց զառաւելս նոցա պաշտամանն, զերեւ[ե]լի գիրն աւրինական. յորմէ փախչել հրամայե ի վեհագոյն ի միտս աւրինացն եւ մարգարէիցն. ի նոր վարդապետութ[ի]ն առաքեալսն, եւ որ ի տանէն բարձր կատարեալ առաքինութ[ի]ն եւ պատակ չինուածոյ ա[ստուա]ծպաշտութ[ե]ան։ մի՛ իջցես առնուլ ինչ ի տանէ իւրմէ. ի մարմնաւորացս, եւ որոց Թողեալն ե զհանդերձս իւր՝ մարմնական ցանկութ[ի]ն[ս], [եր. 285ա] մի՛ գարձցի յետս ի նոյն ցանկութ[ի]ն[ս]։ վա՛յ ի ժամանակին յայնմիկ այնոցիկ, որ յղացան չարութ[ի]ն[ս] եւ որ դիեն կաթն ազուէրի՝ զանառակութ[ի]ն[ս] իւրեանց. յորդորե և ազաւթել, զի մի՛ այն(*) ձմերան եւ չաբաթի եղիցի փախուստ հոգւոյս ի մարմնոյս։ ի ձմերանի՝ յաւելկոծութ[ե]ն[ս] մեզաց եւ ի խռովութ[ե]ն[ս]ց քոց ամպարշտութ[ե]ն[ս]ց, իսկ ի չաբաթու, զի մի՛ ի գառաւկութ[ե]ն[ս] եւ ի պղերգութ[ե]ն[ս] եղիցի վախճան, այլ ի գործս բարիս եւ առաքինիս։

---

(1) Մատթ. ԻԴ. 17–19։ «Եւ որ ի տանիս կայցէ, մի՛ իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ. և որ յանդի իցէ, մի՛ գարձցի յետս առնուլ զհոգս իւր։ Բայց վա՛յ իցէ յղեացս և ծնդուացս»։

(2) Մատթ. ԻԴ. 20։ Տպ. «... ձեր ձմերան և մի՛ ի չաբաթու»։

(*) Ձ.ում՝ «միայն» միացած է։

«Արեգակն խաւարեսցի եւ լուսին ոչ ածցէ զլոյս իւր և աստեղք անկցին յերկնից»(1)։ Ճառդ յայտնի ե, քանզի որպես ասէ Եսա[յ]իաս, «Երկինք գալարեսցին որպես զմազտաթ»(2), եւ եղիցին երկինք նոր և երկիր նոր։ Յայտնի ե, զի այս լուսաւորքս անկանին եւ խաւարին։ Իսկ ըստ առակի վերադանութ[ե]ան, արեգակն իմանայցես զառաջնա[յ], զի կերպարանի հրեշտակ լուսոյ, այլ եւ գնեռնն, զի Ա[ստուա]ծ զինքն անուանե. լուսին՝ զեկեղեցիս հերձուածողաց եւ զժողովարանս Հրեից, որք կարեին լուսաւորիլ ի ճշմարտութ[ե]ն[ն] Ա[ստուծո]յ, եւ ի նմանէն ոչ լուսաւորին, այլ ի սատանայէ, որ ասէն զինքն Ա[ստուա]ծ. եւ աստեղք նոցին վարդապետք, որպես եւ գրեալ ե ի կաթողիկեին Յուդայի. «Աստեղք մոլարք որոց խաւար ազգամղձին պահեալ կայ»(3)։ Նշան որդւոյ մարդոյ իմանայցես զիմաստութ[ի]ն[ս]; զլան եւ զճշմարտութ[ի]ն[ս] նորա երկնաւոր ըստ առակին. «Ճշմարտութ[ի]ն[ս] յերկրի լուսաւ, արդարութ[ի]ն[ս] յերկնից երե[ե]ցաւ»(4)։ [եր. 285բ] Զաւրութ[ի]ն[ք] երկնից՝ իմա՛ զբանական գաւս երկնաւորացն, որք տեսին զնա յառաջին գալստեանն այնպիսի անարգութ[ե]ամ[ք], իսկ յերկրորդումս այնպես հրաշափառ, ուստի հիացեալ չարժին դողութ[ե]ամ[ք]։

Եւ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ի վերա[յ] ամպոց զաւրութ[ե]ամ[ք](5), որպես ի համբառնալն ասացաւ. «Ամպն կալաւ յաչաց նոցա»(6), և գարձեալ «Զայն եղեւ յամպոյն»(7)։ Ի վերայ նորին ամպոյ գալոց ե Ք[րիստո]ս. այսինքն բանական երկնաւոր զաւրութ[ե]ամ[ք]քն իմանայցեմք գալ զՔ[րիստո]ս։ «Եւ առաքեսցե զհրեշտակս իւր փողով մեծաւ»(8)։ Յետին եւ ի թիւսն եւ յառաքեալ փողոյդ անուն զմեծամայնութ[ի]ն[ս] նշանակե ա[ստուա]ծային խորհրդոյն։

«Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն»(9)։ Թզենի այժմ կամ զամենայն աշխարհս աւրինակեալ նշանակե, որուհ կատարած

---

(1) Մատթ. ԻԴ. 29։

(2) Ես. ԼԴ. 4։ Տպ. «և գալարեսցին երկինք իբրեւ...»։

(3) Յուդայ 13։ Տպ. «աստեղք մոլարք, որոց վիհ խաւարին յաւիտեանից պահեալ է»։

(4) Սաղմ. ՁԴ. 12։

(5) Մատթ. ԻԴ. 30։ Տպ. «...երկնից զօրութեամբ...»։

(6) Գործք Ա. 9։ Տպ. «և ամպն կալաւ զնա...»։

(7) Մատթ. ԺԷ. 5։

(8) Մատթ. ԻԴ. 31։

(9) Մատթ. ԻԴ. 32։

լինել մարգարէանայ, ըստ երանելի կենդանութե[ա]ն եւ ցանկա[յ] տեսանել զբանն Ա[ստուծո]յ, զի ուրախասցի. քանզի որպես թզենիդ ի ձմերանի զաւրութ[եամ]ը ունի յինքեան զծաղկելն, նոյնպես եւ առաքինութ[եամ]ը զարդարեալն ի յանցաւոր աշխարհիս. վ[ա]ս[ն] զի դեռ եւս չէ հասեալ աւետեաց պսակին, այլ յուսայ եւ որպես ընդ հայելի տեսանէ զբարիսն խոստացեալ. իսկ ի գալըստեան արդար դատաւորին՝ յորժամ հասանէ աւետեացն, յայնժամ յայտնապես եւ ոչ յուսով, [եր. 286ա] որպես թզենւոյն պտուղն որ ի ձմերանի աներեւոյթ է, իսկ յամարանի երեւելի ամենեցուն: «Ցորժամ նորա ոսկքն(*) կակղացին եւ տերեւն ցցուեսցի»(1): Մինչդեռ ձմեռնային ժամանակ է եւ ոստն խոտոտցեալ է եւ տերեւն ոչ է ցցուեալ, իսկ յորժամ ձմերայնւոյս յաճառնային երթայ, յայնժամ ոսկքն կակղանան եւ ցցուին, նոյնպես եւ որ յաշխարհես յառնի, ի խռովութիւնս յալեկոծեալ, ճանապարհորդք ի խաղաղական յաւիտեանն. բերե ոստս կակղացեալ զսիրտն մարմնոյն եւ ոչ քարեղէն տերեւս եւ ապա պտուղ կատարեալ: «Ամէն ասեմ ձեզ, ոչ անցանէ ազգս այս, մինչեւ այդ ամենայն եղիցի»(2): Ազգս այս լսելի է որպես Նոյոյ կատակարատացին, ազգս այս ասէ, մի՛ անցցէ եւ ոչ եկեսցէ յաւետիսն խոստացեալ, եթե ոչ այդ ամենայն, զոր խաւսեցայդ, եղիցի, նեռինն գալուստն, կատարած եւ կորուստ ամենայն աշխարհիս այսորիկ ի լաւագոյն տեսակս:

«Վասն աւուրն այնորիկ եւ ժամուս ոչ ոք գիտէ. ո՛չ հրեշտակք երկնից եւ ո՛չ որդի, բայց միայն Հայրն»(3): Զաւրն եւ զժամն, յորում լինիցի կատարած աշխարհիս, ոչ ոք գիտէ: Եւ զժամն, որում անհնազանդելի է, զի՞րդ ոչ գիտէ որդի, զոր գիտեն հայրս: Ոմանք ասացին, եթե յառաջ քան զչարչարելն մինչդեռ եւ մարմնով չէր փառաւորեալ ասաց, որպես ասաց. Ո՞ւր եդիք զՂազարոս(4), զի ցուցցեն զինքն ճշմարիտ մարդ. իսկ յորժամ փառաւորեցաւն եւ [եր. 286բ] Ա[ստուա]ծ զնա առաւել բարձրացոյց եւ շնորհեաց նմա անուն որ ի վեր է քան զամենայն անուն(5), ապա մարմնական

(1) Մատթ. ԻԴ. 32: Տպ. «... ցցուիցի»:
(2) Մատթ. ԻԴ. 34: Տպ. «... ձեզ եթե ոչ ... այս ամենայն...»:
(3) Մատթ. ԻԴ. 36: Տպ. «Բայց վասն...»:
(4) Յով. ԺԱ. 34: Տպ. «Ո՞ւր եդիք զնա»:
(5) Փիլիպ. Բ. 9: Ոչ բառական, այլ իմաստով:
(*) Ջ.ուսմ «ոստքն» կրկնուած է:

ախտս ի բաց ընկեց, եւ զամենայն ինչ զոր գիտեր հայր, գիտեր եւ որդի: Իսկ ոմանք ասացին, եթե որպես ասաց Պաւղոս. Ցայնժամ եւ որդի հնազանդեսցի հաւր(1). Եւ երբ եր անհնազանդ, գլուխ եկեղեցւոյ եւ մեք մարմին եմք նորա եւ անդամք յանդամոց եւ դեռ եւս չեն հնազանդեալ նմա ամենայն անդամք. զանդամոցն անհնազանդութի[ւն] գլուխն իւր համարեցաւ. քանզի եթե վչաանա[յ] ինչ մի անդամն, վչաանան եւ ամենայն անդամք ընդ նմա(2). Նոյն զանգիտութի[ւն] մեր յաղագս աւուրն այնմիկ իւր համարեցաւ: Դարձեալ ասացաւ, եթե որ ոչն գիտեր զմեզս, վ[ա]ս[ն] մեր մեզս արար(3): Ոչ եթե մեզս արար որդին, քա՛ւ լիցի, այլ զմեր մեզսն իւր համարեցաւ եւ զանեծս մեր նոյնպես ընդքան եղեւ, ասե, վ[ա]ս[ն] մեր անեծս, զի գրեալ է, ասե, անիծեալ ամենայն, որ կախի զփայտ(4): Նովին աւրինակաւ իմա՛ եւ վ[ա]ս[ն] ասելոյն՝ ոչ հրեշտակք գիտեն զաւրն եւ ոչ որդի, բայց միայն հայր:

«Ցայնժամ երկուք որ իցեն յագարակի, մինն առցի եւ միւսն թողցի»(5): Ագարակ եւ աշխարհ եւ անդաստան հոգիք մարդկան եւ միաք, որ ըստ մտաց գործեն զանդաստան իւր, որպես Նոյ եւ Աբրահամ եւ ոչ հոգւավս մարմնականաւ, այնպիսին ընկալցի ի յարքայութի[ւն]ն. իսկ միւսն եւս որ մարմնակ[եր. 287ա]ան ցանկութ[եամ]ը գործեն զանդաստանն որպես կային, նայ ի բաց ընկեսցի յարքայութիւնն. նոյնպես եւ երկուքն որ աղան յերկանի աշխարհիս, այսինքն ուսուցանեն եւ գծանրաւթի[ւն] աշխարհիս բառնան, որ բարիքն ուսուցանեն եւ համբերութ[եամ]ը կրեն զլեռն եւ զկարիս աշխարհիս, ընկալցի յարքայութիւնն, իսկ միւսն եւս որպես անարժան ի բաց ընկեսցե:

«Արթուն լերուք, ոչ գիտէք յորո՛ւմ ժամու ա[է]րն ձեր գայ»(6): Զայս ոչ միայն վ[ա]ս[ն] կատարածի աշխարհիս ասաց, այլ եւ վ[ա]ս[ն] կատարածի իւրաքանչիւր մարդկան. արթուն լե-

(1) Ա. Կորնթ. ԺԵ. 28: Ոչ բառական, այլ իմաստով:
(2) Ա. Կորնթ. ԺԲ. 26: Տպ. «եւ» փոխանակ «քանզի»:
(3) Բ. Կորնթ. Ե. 21: «Զի զայն որ...»:
(4) Գաղ. Գ. 13: Տպ. «Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք, (զի գրեալ է թէ Անիծեալ ամենայն որ կախեալ կայցէ զփայտէ,) |Բ. Օր. ԻԱ. 23|:
(5) Մատթ. ԻԴ. 40: Տպ. «Ցայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առնուցու և միւսն թողուցու»:
(6) Մատթ. ԻԴ. 42: Տպ. «Արթուն կացէք, զի ոչ...»:

րուք գործուվք բարուվք, զի ոչ գիտեք զաւր վախճանի ձերոյ, յորժամ կոչէ ա[է]ր ձեր զոգիդ ի մարմնոյդ։ «Ո՛վ իցե արդեւք ծառայ հաւատարիմ եւ իմաստուն»(1)։ Հաւատաք եւ իմաստութի[ւն], յորժամ որպես առաքինութի[ւն] տեսանի, զհետ երթան մխիթարք, այսինքն հաւատարիմն եւ իմաստունն. եւ որ իմաստուն, նոյնպէս հաւատարիմ. իսկ որ ունի զիմաստութիւնն որպես խորամանկութի[ւն], մարթի ոչ հաւատարիմ լինել այնպիսոյն, որք են իմաստունք հանդոյն աւձին և անտեսին անիրաւութեան. արդ որ հաւատարիմ ե եւ իմաստուն, որպես Պաւղոս եւ Պետրոս եւ նոցին նմանողք, որք տային զկերակուր զվարդապետութիւնս իւրեանց ի ժամու արժանաւորաց, զայսպիսի ծառայս իւր, զոր կացոյց ի վերա[յ] տան իւրոյ աշխարհիս, ակ[եր. 287բ]նալ ք[րիստո]ս ի գալստեան իւրում, երանելիս ցուցանէ։ «Իսկ երթ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում»(2)։ Ապ՚ երթ ոչ իցէ ծառայն իմաստուն եւ հաւատարիմ, այլ չար եւ յիմար, եւ արասցէ չարութե[ան] եւ յիմարութե[ան] գործս, եկեալ ա[է]ր, յերկուս հատցէ զնա։

ԺԲ.

«Ցայնժամ նմանեցի արքայութի[ւ]նն երկնից ժ. կուսանաց»(3)։ ժ. կուսանք, ժ. զգայութի[ւն]քս են ի մեզ, հինգ հոգեւորք եւ հինգ մարմնաւորք. եւ են մարմնաւորքն՝ տեսանելիք, լսելիք, հոտառելիք, ճաշակելիք, շօշափելիք. նոյն աւրինակ եւ հոգիքն։ Արդ որ ետես զիս, ետես զհայր իմ»(4), ասե. մարմնոյ աչաւք եւ Հրեայքն տեսին զք[րիստո]ս, բայց զնայր ոչ տեսին. ապա ուրեմն զհոգւոյն տեսանելեաց ասե, նոյնպէս եւ լսել և հոտառել եւ ճաշակել եւ շօշափել. արդ որ հոգւոյ զգայութ[եան]քդ ծառայեցուցանեն զմարմնական զգայութի[ւն]ս, որպես աղմոսարանով տասնապետաւ աղմոսկից քեզ»(5), այնպիսին իմաստուն է, վ[ա]ս[ն] զի հինգ իմաստուն զգայութ[եան]քդն վա-

(1) Մատթ. ԻԴ. 45։ Տպ. «Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և իմաստուն»։

(2) Մատթ. ԻԴ. 48։ Տպ. «Ապա» փոխանակ «Իսկ»ի։

(3) Մատթ. ԻԵ. 1։ Տպ. «Ցայնժամ նմանեսցի...»։

(4) Յովհ. ԺԴ. 9։ Տպ. «որ ետես զիս՝ ետես զՀայրն»։

(5) Սաղմ. ՃԽԴ. 9։ Տպ. «տասնապետաւ աղմոսարանաւ աղմոս ասացից քեզ»։

րեցաւ, իսկ որ միայն մարմնեղէն զգայութ[եամ]բք, այնպիսին յիմար, քանզի ոչինչ զանազանի յանասնոց։ Ղամպարս ասին ուղեղ եւ սոքայ, որպես եւ իմաստունքն, վ[ա]ս[ն] զի հոգի ամենեցուն հաւասար եւ վարդապետութի[ւն] առաքելոցն եւ այլոց վարդապետացն։

«Ցիմարքն առեալ զլապտերան իւրեանց, և ձէթ ոչ առին ընդ ինքեանս»(1)։ [եր. 288ա] Ձէթ բանն առաքելական եւ մարգարեական, զայսպիսոյ ձիթոյ պարարտութի[ւն] ոչ ունէին հնդեալ յոգիս իւրեանց։ «Եւ ի յամել փեսային, ննջեալ ամենեքեան քունեցին»(2). Ներե գեռ եւս ք[րիստո]ս եւ յամե հասուցանել իւրաքանչիւր ումեք ի մեջ. ննջին վ[ա]ս[ն] զի գեռ եւս յաշխարհիս են ամենեքին։ «Ի մեջ գիշերին ձայն եղեւ. ահա փեսայն գայ, արիք»(3)։ Ի ննջել ամենեցուն, հրեշտակք գոչեն մեծ ձայնիւ ի լսելիս ննջեցելոցն, եւ լինի յարութի[ւն] ամենեցուն։ «Պատրաստքն»(4) կեցեալք հոգիդեն զգայութ[եամ]բք մտանեն ընդ ծ[իսու]ի յարքայութի[ւ]ննն։ «Եւ իմաստունքն պատասխանեցին եւ ասեն, գուցե ոչ իցէ բաւական մեզ եւ ձեզ»(5)։ Ծորժամ ժամանակ եր ուսանելոյ, չուսայք(*)։ արդ ժամանակիս վարդապետութի[ւն] անցեալ է, ոչ մեք ուսուցանել բաւական եմք եւ ոչ դուք ուսանել։ լսելի է եւ այսպես ի վերջին հասակի ծերութե[ան] եւ ի հիւանդութե[ան] ոք երթ կամիցի ըստ մարմնեղէն զգայութե[ան]ց չվարիլ, ոչ կարե. ապա թե եւ կամիցի ուսանել եւ կեալ ըստ հոգեդինացն, յանկարծակի հասանե վախճանն, որպես եւ բանս ցուցանեն եւ փակի որպես դուռն ի վերայ նորա։

«Քանզի որպես այր ի գնալն իւրում, կոչեաց զծառայս [եր. 288բ] իւր և աւանդեաց նոցա զինչս իւր, ումումն ետ հինգ

(1) Մատթ. ԻԵ. 3։ Տպ. «Ցիմարքն առին զլապտերան, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին»։

(2) Մատթ. ԻԵ. 5։ Տպ. «Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին»։

(3) Մատթ. ԻԵ. 6։ Տպ. «Եւ ի մէջ գիշերի եղեւ բարբառ, Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա»։

(4) Մատթ. ԻԵ. 10։

(5) Մատթ. ԻԵ. 9։ Տպ. «Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն, Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական»։

(*) Ջ.ուսմ՝ «չուսայք» կրկնուած է։

տաղանդ, ումինն երկու, ումինն մի»(1)։ *Տաղանդ կշռոյ անուն է, որպես դիար, մնաս, և այդպիսիք ինչ, զոր Թարգմանեցին առաջին Թարգմանիչքն քանքար։ Այլն որ ետ զքանքարն, Ք[րիստո]ս ուսուցանել զա[ստուա]ծա[յ]ին բանս, զարծաթ իմ ընտրեալ եւ փորձեալ եւթնապատիկ ի հողոյ, եւ վերացեալ ի հեռատեսան աչխարհ, յերկրի ի յերկինս։ Բայց վ[ա]ս[ն] ե[՞]ր հինգ և երկու եւ մի ասին։ Որ գինդն եաւ ճշմարտապես գիտացեալ զվճռագոյն միտս ա[ստուա]ծային գրոց ըստ Սողոմոնի, հինգ ա[ստուա]ծային զգայութ[եամ]բք ըստ Պաւղոսի, կրթեալք զգայարանաւքն փոխեցան անտուստ տեսանել զանհրեւոյթն որ ի սկզբանն աչխարհս արարածովս իմացեալ, եւ զայլս ուսուցին սմինոյն ա[ստուա]ծային վարդապետութ[եամ]ք։ Իսկ որ զերկուսն, սմա ոչ պարզեւեցաւ միայն գիրն, այլ եւ զաւրութի[ւն] ա[ստուա]ծային գրոց։ Թեպետ եւ ոչ այնպես կատարեալ որպես որ հինգն եաւ. այսպիսոյս նախ քննեալ զտեսակս արարածոց Ա[ստուծո]յ եւ զհիմն նոցա, եւ ի ստացեալ փոխանակ յարարիչն հիմնոյն եւ ի տեսակացն, յանդրանիկն սմինոյն արարածոց, ուսուցեալ եւ զայլս կրկնապատիկ արար զերկուսն։* [Եր. 289ա] *Իսկ որ զմինն եաւ, զգիրն միայն որպես եւ Հրեայքն, եւ միտք գրոյն թաքուցին ի նմանին եւ զայլս ոչ ուսուցին, այլ ի խորութի[ւն] սրտի իւրեանց թաքուցին, զոր պարտ եր արկանել ի սեղանաւորս, ի վարդապետս հմուտս, որք ունէին բարի վարդապետութի[ւն] եւ ի նոցանէ զմիտս գրոյն ուսանել եւ զայլս ուսուցանել։ արդ վ[ա]ս[ն] զի ոչ արար զայդ, զոր պարտ եր առնել, եւ նոյն ի խաւարն արտաքին։ և զամանաւն եթե վ[ա]ս[ն] ոչ ուսուցանելոյ զբանն Ա[ստուծո]յ այսպես պատուհասի, լա՛ր Պաւղոսի. վա՛յ է ինձ, ասէ, եթե ոչ աւետարանիմ*(2)։ *Խաւարն արտաքին է, ուր հոգին ամենեւիմբ խաւարեալ է զառն արտմութ[եամ]բ եւ ոչ է այցելութի[ւն] ա[ստուա]ծային լուսոյ։ եւ Փիլոնն*(*) *Երրայեցի, եթե Թո[մ]ի զիր ընդունելի զմոլեսնական գիրսն պատմելով, զխաւարն որ ի վերա[յ] անդնդոց արտաքս քան զբոլոր աշխարհի ասէ լինել։ եւ տե՛ս,*

(1) *Մատթ. ԻԵ. 14։ Տպ. «Որպէս այր մի գնացեալ ի տարաչխարհ, կոչեաց զծառայս իւր և ետ նոցա գինչս իւր. Ումինն ետ հինգ քանքար, և ումինն՝ երկուս, և ումինն՝ մի»։*

(2) *Ա. Կորն. Թ. 16։ Տպ. «Բայց վա՛յ է ինձ՝ եթէ ոչ...»։*

(*) *Տղի դիմաց լուսանցքում գրչի ձեռքով և նոյն թանաքով «գր/աց»։*

թե անարժանք աչխարհիս արտաքսին ի բոլոր աչխարհես, եւ ոչ միայն ի դրախտին Ա[ստուծո]յ։

ԺԳ.

«Ցայնժամ գայ Ց[իսուս]ս ընդ նոսա ի գեաւղ մի կոչեցեալ Գեթսեմանի»(1)։ *Գեթսեմանի Թարգմանի ձոր պատարաւթե[ան]։ «Ցայնժամ ասէ ցնոսա. Տրտում է անձն իմ մինչեւ ցմահ»*(2)։ *եւ յետ սակաւ[եր. 289բ]ուց ասէ. «Հայր, եթե հնար է, անցցե բաժակս յինէն, բայց ոչ որպես ես կամիմ, այլ որպես դուն»*(3)։ *Սկսաւ տրտմել եւ հոգալ և աղաւթել, եթե հնար ինչ իցե, անցանել բաժակին։ Ո՛վ փրկիչ, Միածին Որդի Ա[ստուծո]յ, յառաջագոյն ասացեր, եթե որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց եւ ի խաչ հանեալ եւ յերրորդ յաւուր յառնէ*(4)։ *և զիա՞րդ հնար է անցանել բաժակիդ եւ սուտ լինել բանիցն. այո՛ ասէ, որպես զճշմարիտ մարդ տրտմիմ եւ հոգամ եւ աղաւթեմ առ հայր իմ. եւ երկրորդ վ[ա]ս[ն] զի գիտեմ, եթե վրեժխնդրութի[ւն] արեանս իմոյ լինի եւ քակտումն տաճարիդ եւ հրկիզութիւն քաղաքիդ, և բիւրուց բիւրաց սատակումն, ոմանց ի սովոյ, ոմանց ի սրոյ եւ այլոց ի գերութի[ւն] վարելոց, որ եղեւ ի վեսպ[աս]իանոսէ*(*) *կայսեր Հռոմոյ։ բայց ոչ իմ կամք եղիցին, այլ հաւրն, զի նոցա անհաւատութ[եամ]քն փրկութի[ւն] հեթանոսաց լինիցի, եւ իմով մահուս ամենեքեան փրկեսցին ի մահուանէ։*

«Ցայնժամ կատարեցաւ ասացեալն ի մարգարեէն Երեմիայէ, եւ առի զերեսուն արծաթ զգինս վաճառելոյն, զոր վաճառեցին յորդւոցն Իսրայե[ա]ղի եւ ետու յագարակն բրտի, որպես եւ պատուիրեաց ինձ տ[է]ր»(5)։ *եւ Յերեմիայն զատացեալդ ոչ գտաք յայնտեղեա [եր. 290ա], իսկ ի Զաքարիա այսպես կա[յ]։ եւ ա-*

(1) *Մատթ. ԻԶ. 36։ Տպ. «... որում անուն էր...» փ. «կոչեցեալ»։*

(2) *Մատթ. ԻԶ. 38։ Տպ. «...տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ»։*

(3) *Մատթ. ԻԶ. 39։ Տպ. «Հայր իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս յինէն»։*

(4) *Մատթ. Ի. 18։*

(5) *Մատթ. ԻԷ. 9–10։ Տպ. «Ցայնժամ լցաւ որ ասացաւն ի ձեռն Երեմիայի մարգարէի, եւ առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին յորդւոցն Իսրայէլի, եւ ետուն զնա յագարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր»։*

(*) *Ջ.ում՝ ի Գեսպիանոսե։*

սեմ ցնոսա, եթե բարիք և առաջի ձեր, տա՛ք զվարձս իմ. ապա թե ոչ, զրայց արարեք. եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթ[ի]. եւ ասե ցիս ա[ն]ր, ա՛րկ զայդ ի բավս, եւ անա քեզ փարձիցե, զոր աւրինակ փորձեցայ ի նոցանե. եւ առի զերեսուն արծաթին եւ արկի ի տան ա[ետո]ն ի բավս հալոցին(1):

«Եւ մերկացուցեալ զնոյ ապուշին նմա քղամխոր կարմիր, և մանեալ պսակ ի փշոց, եդին ի գլուխ նորա»(2): Մերկացուցին եւ զանկար պատմուճանն եւ զնախորհուրդն նորա, որպես եւ Յովհաննես ասե եւ զգնացուցին նմա քղամխոր կարմիր, քանզի աւրինաւ գնելոյ եր գնելոյ քղամխոր. վ[ա]ս[ն] այնարիկ զգնացուցին, թեպետ եւ ոչ գիտեին, եթե զարիւն աչխարհս նուռ վ[ա]ս[ն] փրկութ[ան] մարգկան. եւ արարեալ պսակ ի փշոց, եդին ի գլուխ նորա, որ եթարձ զհոգս եւ զփուշ աչխարհիս գլխով իւրով: «Եդին եղեգն ի ձեռն նորա»(3), որ նշանակ զկարութ[ի]ւն զոր ընկալեալ ի ձեռն, զմեր ակարութ[ի]ւնս եթարձ եւ պարգեւեաց մեզ զգաւազան զաւրութ[ի]ւն[ան] արքայութ[ի]ւն[ան] իւրոյ:

«Եւ գլխով կալան այր մի կիւրենացի անուն Սիմոն»(4): Եւ Մարկոս եւ Ղուկաս եւս զՍիմոն կիւրենացի ասացին բարձեալ զխաչն Յ[իսուս]ի. [եր. 290բ] իսկ Յովհաննես ասե, ինքն եր բարձեալ զխաչն. երկոցուն հնարաւոր եր լինելն. զառաջինն իւր բառնալ զխաչն եւ վերջոյ ի դառնալն Սիմոնի, նմա սպասաւորել, եւ ոչ դիպաւածով, այլ Ա[սուծո]յ կամեցեալ, զի սպասաւորեսցե խաչին Ք[րիստոս]ի:

«Ի վեցերորդ ժամէ խաւար եղեւ ի վերայ երկրի մինչեւ ցիննն ժամն»(5): Մարկոս եւ զժամն ասաց, յորում խաչեցաւ, եւ եթե եղեւ խաւար նոյնպես, որպես Մատթեոս. Ղուկաս զժամն ոչ ասաց, բայց զխաւարն ասաց լինել որպես յառաջնային պատմութ[ի]ւնե: Եւ զի՞րդ հնարաւոր եր պակասիլ արեգական ի լրման լուսնոյ. քանզի Զատիկն ի չորեքտասանեւրորդին լուսնոյ

(1) Զաքար. ժԱ. 12-13: Տպ. «Թէ բարւոք Թուի յաչս ձեր,... և քննեա թէ փորձ իցէ, որպէս և ես գտայ փորձ վասն նոցա,... և արկի ի տուն տեառն ի բովս»:

(2) Մատթ. իէ. 28: Տպ. «Մերկացին զնա, և արկին զնովաւ քղամիդ կարմիր: Եւ բոլորեալ պսակ...»:

(3) Մատթ. իէ. 29: Տպ. «... և եդեգն՝ յաջոյ ձեռին նորա»:

(4) Մատթ. իէ. 32: Տպ. «Եւ ելեալ արտաքս՝ գտին այր...»:

(5) Մատթ. իէ. 45: Տպ. «Եւ ի վեց ժամէ աւուրն... ամենայն երկիր...»:

լիներ, բայց եթե վ[ա]ս[ն] չարչարանաց արարչէն հրաշափառ եղեւ եւ արտաքս քան զբնութ[ի]ւն արեգական պակասութ[ի]ւն(*): Յովհաննես ոչ զժամ խաչելութե[ա]ն պատմեաց եւ ոչ վ[ա]ս[ն] խաւարայն յիշեաց:

«Եւ յիննեւրորդ ժամուն ազաղակեաց Յ[իսուս]ս ի ձայն մեծ եւ ասե. Եղի, Եղի', զամա սաբաքթանի. այսինքն Ա[սուա]ծ իմ, Ա[սուա]ծ իմ, ընդե՞ր Թողեր զիս»(1): Եւ զի՛րդ եթող, ասիցե ոք. բայց կարծեմ այսպես իմանալի է. ձայն գոչեցեալ կամելով Թողել զիս հայր, զի յետ մարդարէիցն այնչափ մեղսացեալ յիս ժողովրդեանս [եր. 291ա] արժանապես մերկասացին ի լուսոյ, եւ եղիցին ի խաւարի, զի պատասխան արիւնս իմ հեղցի յաղագս հեթանոսաց:

«Եւ քաղաքս մարմինք ննջեցելոց սրբոց յարեան եւ եկեալ ի գերեզմանաց յետ յարութե[ան] նորա, մտին ի ս[ուր]բ քաղաքն Ե[րուսաղէ]մ»(2): Ասե զվերինն, որպես պատմեաց ումն յառաջին մեկնչացն. բայց ինձ Թուի վ[ա]ս[ն] ասելոյդ, եթե երեւեցան բազմաց, եթե զայս երկրաւոր Ե[րուսաղէ]մ ասե: Բայց վ[ա]ս[ն] ե՞ր արդեւք յետ յարութե[ա]ն նորա մտին ի սուրբ քաղաքն եւ ոչ առաժամայն: Վ[ա]ս[ն] զի պարտ եր նախ անդրանկին ի մեւելոց երեւել բազմաց, եւ ապա այլոց, որք եղեն կ[ր]պարանակից մահու նորայ եւ յարութե[ա]ն նորին:

ԺԴ.

«Եւ յերեկոյի չաբաթուն, յորում լուսանայր առաջին չաբաթուն, եկն Մարիամ Մակդալենացի եւ միւս Մարիամն, տեսանել զգերեզմանն»(3): Յաղագս ժամու յարութե[ա]ն, եթե յո՛ր ժամու յարեաւ, ամենեցուն անյայտ է. Մատթեոս յերեկու չաբաթու ասաց. Յովհաննես ընդ առաւաւտան գայր, ասե, Մարիամ Մակդալենացի. Ղուկաս ամենեւիմբ քաջ ընդ միոյ չաբաթուն.

(1) Մատթ. իէ. 46: Տպ. «Եւ ի վեցն ժամուն գոչեաց... այսինքն է...»:

(2) Մատթ. իէ. 52-53: Տպ. «... և բաղում մարմինք... յարեան: Եւ ելեալ... յարութեանն նորա, մտին ի քաղաքն սուրբ»:

(3) Մատթ. իը. 1: Տպ. «... լուսանայր միաշաբաթին...»:

(*) Զ.ի լուսանցքում մի բան է գրուած եղել, բայց կպմելու ժամանակ կտրուած է. մնացած է «որմ/..ն»:

խակ Մարկոս նոյնպես, որպես եւ Ղուկաս(1)։ Եւ խնդրելի է վ[ա]ս[ն] ե[՞]ր արդեւք զանազանեցին ժամուն աւետարանիչքն. [եր. 291բ] այլք ա՛յլ իմն պատճառ ասացին եւ աս[ս]ցին. իսկ ես այդպես իմանամ, եթէ ըստ նախախնամութ[ան] եւ մարդասիրութե[ա]նն Ք[րիսոս]ի պատրաստեցաւ առ ծառայս իւր, զի եթէ ամենեւիմբ հաւատարեալ էին, ասէին ոմանք ի հերձուածողաց եւ ի հեթանոսաց, զի ամենեքեան միաբանեցան եւ վ[ա]ս[ն] այնորիկ համաձառնցին. սակս այսորիկ թուեցաւ սակաւիկ զանազանիլ աւետարանչացն. արդ նոցա զանազանութի[ւն] ի բաց ընկեցեալ, յա՛յլ փոխեսցաք։

«Եւ ահա չարժուն մեծ եղեւ, զի հրեշտակ տ[եառ]ն իջեալ ի բաց առ գլեհմն եւ նստեր ի վերա[յ] նորայ», և այլն(2)։ Ի խաչելութե[ա]ննն գրեալ է, եթէ չարժուն եղեւ, բայց ոչ եթէ մեծ. իսկ այժմ գրեալ է մեծ չարժուն, վ[ա]ս[ն] զի յարութի[ւն] մեծ է, քան զխաչելութիւնն եւս սքանչելագոյն։

«Իւ ահա ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի լրումն աշխարհի»(3)։ Եւ ե՛րբ եղեւ ընդ առաքեալսն մինչեւ ի վախճան աշխարհի, զի անդէն վախճանեցան ամենեքեան։ Առ այս ասելի է. ոչ յանձինս առաքելոցն ասացեալ միայն, այլ եւ առ ամենայն քրիստոնեայս աշակերտեալս նոցա։

Փառք Ք[րիսոս]ի Ա[սուծո]յ ամեն (փակագրով)(*)։

[եր. 292ա] Ա.ԻԵՏՍ.ՐԱ.Ն ԸՍՏ ՄՍ.ՐԿՈՍԻ

ԺԵ.

«Սկիզբն աւետարանի Յ[իսուս]ի Ք[րիսոս]ի որպես եւ գրեալ է յեսայի մարգարէի»(**) եւ որ ի կարգին է(4)։

---

(1) Յովհ. ի. 1։ Ղուկ. իդ. 1. «ամենեւիմբ քալ ընդ միով չարաթաւնց. Տպ. «բայց ի միաշաբաթուն վաղ քալ ընդ առաւօտն»։ Մարկ. ԺԶ. 2։

(2) Մատթ. ԻՀ. 2։ Տպ. «... իջեալ յերկնից մատուցեալ ի բաց թաւալեցոյց գլխին ի դրաց անտի...»։

(3) Մատթ. ԻՀ. 20։ Տպ. «և ահաւասիկ... ի կատարած աշխարհի»։

(4) Մարկ. Ա. 1։ Տպ. «... Քրիստոսի, Որդւոյ Աստուծոյ։ Որպէս և գրեալ է ի մարգարէս...»։

(*) Սրանից յետոյ փոքրիկ յիշատակարան է. «կատարեցաւ մեկնութիւն աւուրք աւետարանին Մատթէոսի ի Հոգին Սուրբ»։

(**) Ջ.ուսմ՝ «մարգարեի» կրկնուած է։

Ըստ Մարկոսի աւետարանս ոչինչ զանազանեն ի Մաթեոսեն, եւ վ[ա]ս[ն] այսորիկ կարճառաւտիւ ասասցուք զմեկնութի[ւ]նս, քանզի աւելորդ համարիմք զնոսին կրկնաբանել զմիանկամ ասացեալսն։

«Եւ պատանի մի երթայր զհետ Յ[իսուս]ի, արկեալ զիւրեւ կտաւ ի մերկուց եւ կալեալ զնա. իսկ նորա թողեալ զկտաւն, փախեաւ մերկ»(1)։ Այլք այլապես ցնորեցան ի ճառիս մեկնութե[ան]. իսկ ես այսպես ասեմ, որպես ժամանակագիրն ասե. Մարկոս հանապազ մերկ գնայր, միայն անգամ մի գիւրեւ զգեստ նոյր. յերթալ ապա Ք[րիսոս]ի ի խաչն, զհետ երթայր Յ[իսուս]ի եւ նա, եւ գտեալ զնա Հրեից բա[ւ]ն հարկանեին եւ նորա թողեալ զկտաւն, փախեաւ մերկ ի նոցանե(*)։

Ա.ԻԵՏՍ.ՐԱ.Ն ԸՍՏ ՂՈՒԿԱ.ՍՈՒ

ԺԶ.

«Քանզի բազումք ձեռնարկեցին գրել պատմութիւն»(2)։ Որպես ի հնումն մարգարեութի[ւն] խոստանային գրել, ոմանք ճշմարտապես եւ ոմանք սխալութ[եամ]բ, որպես Անանիան որդի Ազարին, նոյնպես եւ ի նորումս բազումք գրեցին աւետարան, ոմանք սուտ[եամ]բ եւ ոմանք սուտգութ[եամ]բ։ «Որք ի սկզբանե ականատեսք և սպասաւորք եղեն բանին»(3)։ Ականատեսք են բանին, որք զբանն Ք[րիսոս]ի գրեին, սպասաւորք, որք զգործս նորա գործեին։

«Եւ նա եկեսցե առաջի նորայ հոգւով(**) եւ զաւրութ[եամ]ք Եղիայի»(4)։ Եղիաս վերացեալ, Յովհաննես յառաջընթաց տ[եառ]ն.

---

(1) Մարկ. ԺԴ. 51։ Տպ. «եւ ոմն երիտասարդ զհետ երթայր նորա՝ ... կտաւ մի... ունէին զնա երիտասարդքն... եւ նորա թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ»։

(2) Ղուկ. Ա. 1։ Տպ. «...յօժարեցին վերստին կարգել զպատմութիւն»։

(3) Ղուկ. Ա. 2։ Տպ. «որ» վ. «որք»ի։

(4) Ղուկ. Ա. 17։ Տպ. «ի ինքն... հոգւով զօրութեամբ...»։ Յուն.ը ունի «եւ»։

(*) Սրանից յետոյ՝ «փառք Ք[րիսոս]ի ամեն (փակագիր)», ապա «Ջամենամեղ և գլխովնս ի քահանայս» և այլն յիշատակարան։

(**) Ջ.ուսմ՝ «հոգիով»։

չնորհիւ եւ զաւրութ[եամ]ը եղիայի, այսինքն նոյնպես հոգւով(*) սրբով, եւ ոչ հոգւովն եղիայի, զի մի՛ կարծիցես, եթե փոխանակումն ե հոգւոց(**) մարդկան ի միմեանց մարմինս, որպես ոմանք ցնորեցան ասել: «Որ զարձուցանե զսիրտս հարց յորդիս»(1): Զորո՞ց հարանց յորդիս ասիցե: Հայր եր Աբրահամ եւ դեռ եւս էր սիրտ նորա զարձեալ ի մեզ, իսկ յորժամ արասցուք զգործս նորա եւ նորին համանոզաց, յայնժամ դառնա[յ] ի մեզ եւ որդիս իւր առնե:

«Եւ խնդրեալ պնակիա գրեաց, Յովհաննես եղիցի անուն դորա»(2): Յովհաննես Թարգ[եր. 293ա]մանի Ա[usուձո]յ չնորհ եւ Ա[usուձո]յ ձայն. Զաքարիա՝ յիշումն Ա[usուձո]յ. Եղիսաբէթ՝ Ա[usուձո]յ իմոյ եւթնևրևկ: Արդ չնորհն Ա[usուձո]յ ի յիշողութենեն Ա[usուձո]յ ծնաւղ Յովհաննես ի վախճանի եւթնևրևկի Հին կտակարանացն:

«Եւ ընդ քո իսկ անձնդ անցցե սուր»(3): Մարգարեացաւ գայթակղիլն Մարիամու ի խաչելն Ք[rիusnu]ի, որպես եւ առաքեալքն, որ թաղին զնա եւ փախուստ, գայթակղեալք, եթե ոչ եր որդի Ա[usուձո]յ: «Զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք»(4), զի մի՛ եղիցին ծածկեալք, այլ յայտնեալ կոխիցին գայթակղութի[ւն]ք ամենայն: «Իսկ մանուկն աճէր եւ զաւրանայր հոգւով(***) լցեալ եւ իմաստութեամբ»(5). որպես մարդ աճեր եւ զաւրանայր, հոգւով լցեալ եւ իմաստութ[եամ]բ:

«Եւ ինքն Ց[իսուս]ս սկսաց եր որպես երեսնից սկսեալ որդի Յովսեփայ, որպես կարծիւր, որ Հեղիւր, Մատաթեին»(6): Մա[տ]թեոս զՅակովբոս ասե հայր Յովսեփայ, իսկ Ղուկաս զՀեղի: Արդ ասե-

(1) Ղուկ. Ա. 17: Տպ. «դարձուցանել զսիրտս հարց յորդիս»:

(2) Ղուկ. Ա. 63: Տպ. «եւ խնդրեաց տախտակ, գրեաց և ասէ,... Յովհաննէս է անուն դորա»:

(3) Ղուկ. Բ. 35:

(4) Ղուկ. Բ. 35:

(5) Ղուկ. Բ. 52: Տպ. «եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ և չնորհօք յԱստուծոյ և ի մարդկանէ»:

(6) Ղուկ. Գ. 23: Տպ. «եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ, որոց որպէս և կարծէր, որդի Յովսեփայ, որ Յակովբայն, որ Հեղեայն, որ Մատաթեայն...»:

(*) Զ.ում՝ «հոգիով»:

(**) Զ.ում՝ «հոգիոց»:

(***) Զ.ում՝ «հոգիով»:

լի ե, եթե երկոցունց որդի եր Յովսեփ, Յակովբոսի քնութե[ամ]բ եւ Հեղեա[յ] որդեգրութ[եամ]բ: Հեղի եւ Յակովբ եղբարք եին, ոչ միջնե հաւրե, այլ ի միոյ մաւրե. եւ ի վախճանելն Հեղեա[յ], առանց զաւակի, զկինն Հեղեա[յ] ա՛ռ Յակովբ, զի յարուսցե զաւակ եղբաւր իւրոյ ըստ հրամանի Մովսեսի: Արդ առեալ Յակովբա[յ] զկին եղբաւր իւրոյ Հեղեա[յ], ծնաւ զՅովսեփ: Արդ ե Յովսեփ որդի Յակովբայ քնութ[եամ]բ եւ Հեղեա[յ] ըստ հրամանին Մովսեսի: Եւ ի պրիկ Մա[տ]թեոսի զկարգ ազգահամարին զքնութ[եամ]բ հայրն ասաց, [եր. 293բ] իսկ Ղուկաս զըստ աւրինացն(*) Մովսեսի: Եւ ի վերջնումն սկսեալ վերարերել զազգահամարութի[ւն]ն ի Յովսեփայ ի Դաւիթ եւ յԱբրահամա[յ] յԱդամ եւ յԱ[usուա]ծ:

«Եւ ինքն անցաներ ընդ քաղաքս եւ ընդ գիւղս քարոզել եւ աւետարանել զարքայութի[ւն] Ա[usուձո]յ»(1): Ընդ գիւղս չրջիլ եւ քարոզել եւ ուսուցանել ցաւցանն զմարդապարութի[ւնն առ անանկս եւ ապքաստս եւ առ առաքեալս: «Ոչ ոք ճրագ լուցեալ ծածկե զնա ընդ անաւթիւ կամ ի ներքոյ մահճոյ դնե, այլ ի վերայ աչառնակի, զի որք մտանենն տեսցեն զլոյս»(2): Ոչ ասե զայս յապաշս երեւելի ճրագիս, այլ վ[ա]ո[ն] իմանալոյն(**) ասե. բանի ուղիղ վարդապետութի[ա]ն, որ ոչ ծածկի անաւթիւ իւիք, կամ ի ներքոյ մարմնոյ, այլ ի վերայ աչառնակի իւրոյ. անաւթ ե առն հոգւոյս զաւրութի[ւն]ք. մահիճք՝ մարմինս, որք մտաննեն՝ լսողք բանին վարդապետութի[ան] լուսոյն ճշմարտի: «Որ ունիցի, ասցի նմա եւ որ ոչն ունի եւ զոր կարծիցես ունել, հանցի ի նմանե»(3): Որ ունի ճշրտն եւ դնե ի վերայ աչառնակի, ասցի նմայ զաղանին եւ անյայտն, իսկ որ ոչն լուցանե եւ դնե ի վերայ աչառնակին, թեպետ եւ կարծե իմանալ ինչ, բարձցի յանդիմանեալ, զի մի՛ ասւթ[եամ]բ ուսուսցե:

«Եւ պատմեցին նմա եւ ասեն. մայր քո եւ եղբարք քո կան ի դուրս»(4): Դուրս նշանակե մայր եւ եղբարքն զՀին կտա-

(1) Ղուկ. Ը. 1: Տպ. «եւ ինքն չրջէր, քարոզէր և աւետարանէր»:

(2) Ղուկ. Ը. 16: Տպ. «Ոչ ոք լուցանէ և թաքուցանէ ընդ կարասեաւ կամ դնէ ընդ մահճաւ, զի որ մտանեն, զլոյս տեսցեն»:

(3) Ղուկ. Ը. 18: Տպ. «Զի որ գուցէ, ասցի նմա, և որ ոչն գուցէ և զոր կարծէն, թէ ունիցի, բարձցի ի նմանէ»:

(4) Ղուկ. Ը. 20: Տպ. «Ահդ եկեւ նմա,... կան արտաքոյ...»:

(*) Զ.ում՝ «զսաւրինացն»:

(**) Զ.ում՝ «իմանալիոյն»:

կարանացն ժողովարան, որք ոչ ըն[եր. 294ա]կալան զբանն Ք[րիս-
տոս]ի. եթե վ[ա]ս[ն] Մարիամա[յ] ասացեալ եր եւ եղբարցն՝ որդ-
ոցն(*) Յովսեփայ, զի՞րդ ասեր, մայր իմ եւ եղբարք նոքա
են, որք լսեն զբանս իմ եւ առնեն. մի՞թե մայրն եւ եղբարքն ոչ
լսեին զբանս նորա եւ առնէին։

«Եւ ասե ցնոսա, եկայք անցուք յայնկոյս ծովակիդ, եւ
այլն»(1)։ Ծովակ ալիք կենցաղոյս մերոյ, մրրիկ, որք ալեկոծին
ամենայն բանիւ սուտանուն դիտութե[ան]։

ԺԷ.

«Եւ եղեւ ի լնուլ աւուրց վերանալոյ նորա»(2)։ Յառաջելով
նորա խաստութե[եամ]ք եւ հաստակաւ եւ չնորհիւ՝ լնուին աւուրք
վերացման նորայ։ «Եւ եղեւ ի գնալն նորայ զմանապարհ, ասե
ումն ցնա, զհետ քո եկից ա[ե]ր, ուր եւ երթիցես. եւ ասե ցնա
Ց[իսուս]ս, աղուեսք որջս ունին և թռչունք երկնից(**) բոյնս, իսկ
որդի մարդոյ ոչ ունի ուր զգլուխն իւր հանդուցցե»(3)։ Որպես
Մա[տ]թեոս ասաց. վ[ա]ս[ն] ղի ի դպրացն եր, որ ասաց զհետ քո
գամ, իսկ ցդպիրսն ասացաւ, վա՛յ ձեզ դպրոց եւ փարիսացւոց»(4),
վ[ա]ս[ն] այսորիկ ասաց, եթե աղուեսուց եւ թռչնոց անհրեւութիցն
որջ են(***) և բնակութի[ւն], որդի մարդոյ ոչ-ունի ի հանդուցա-
նել զգլուխս իւր ի քեզ եւ ի նմանողս քո։

«Իսկ նա ասաց, թողացոյ ինձ նախ երթալ թաղել զհայր
իմ(5)։ Ասացաւ ի Մա[տ]թեոսի մեկնութե[ա]ն, եթե մեռեալս ա-
սաց, որ մեղաւք են մեռեալ, թեպետ եւ հոգիքն ի մարմնոյն զնա
եւս ոչ եին ելեալ։ «Ասաց ցնա եւ այլ. զհետ քո եկից ա[ե]ր, եւ
նախ հրամայեա հրաժարել ի տանե իմմէ. [եր. 294բ] ասե Ց[ի-
սուս]ս ցնա, ոչ ուրուք արկեալ զձեռն ի վերա[յ] հարաւոյ եւ հա-

(1) Ղուկ. Ը. 22։ Տպ. «...եկայք անցցուք... ծովակիս»։
(2) Ղուկ. Թ. 51։ Տպ. «ի կատարել» վ. «ի լնուլ»։
(3) Ղուկ. Թ. 57։ Տպ. «Եւ մինչդեռ երթային նոքա ի հանապարհի... եկից զկնի քո յոր վայր և երթիցես։ Աեւ... Աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից՝ դպարք, և Որդւոյ մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգլուխ»։
(4) Մատթ. ԻԳ. 13։
(5) Ղուկ. Թ. 59։ Տպ. «հրամայեա տուր ինձ երթալ նախ թաղել զհայր իմ»։
(*) Ձ.ում՝ «որդիոցն»։
(**) Ձ.ում՝ «երկցից»։
(***) Ձ.ում՝ «որջ ևս». անպայման անուշադրութեան սխալ։

յեալ հետս, եթե չահեկան ե արքայութիւնն երկնից»(1)։ Որպես
ոք կամեսցի վարել և թողուլ զվարն անպիտանե, վ[ա]ս[ն] զի
պղծոյն ոչ հասանե, նոյնպես եւ որ սկիզբն առնե առաքինու-
թե[ան] եւ դառնայ յետս անպիտանե, եւ ոչ չահի արքայութի[ւն]
երկնից։

«Ցետ այսորիկ ընտրեաց ա[ե]ր եւ ա՛յլ եւս եւթանասուն եւ
երկուս»(2)։ Նախկին երկոտասանն ընտրեաց, զի նոցին դասա-
ւորք, դասել զերկոտասան ազգսն Ի[սրայե]ղի. եւ յետ այսորիկ
եւթանասուն եւ երկուս, զի դասեսցին զեւթանասուն եւ երկու
ազգ հեթանոսաց։ Քանզի յետ ջրհեղեղին յեւթանասուն եւ երկու
ազգ սփռեցան յորդւոցն Նոյի ընդ կղզիս եւ ընդ մեծացամաքս
ամենայն։

«Հունձք բազում են»(3)։ Ասացաւ ի Մա[տ]թեոսի մեկնու-
թ[եա]ննե

«Մի՛ զոք ի ճանապարհի ողջագուրեք»(4)։ Մի՛ ընկենուք ի
յանպիտանս եւ յանարժանս ի ճանապարհի քարոզութե[ան] ձերոյ,
այլ պահեցեք արժանաւորացն ողջունութե[ան] եւ խաղաղու-
թե[ան]։ «Ի քաղաք յոր մտանեք եւ ոչ ընդունին զձեզ, ելանելն
ի հրապարակս նորայ ասացեք եւ՝ փոշիս, որ կռնեալ ե ի քա-
ղաքես ձերմէ յոտս մեր, թոթափեսցուք ի ձեզ»(5)։ Մա[տ]թեոս
ա՛յլ աւրինակ ասաց. ի ելանելն ձեր ի քաղաքէն զփոշի սոից
ձեր թաւթափեցեք(6). [եր. 295ա] իսկ Ղուկաս ասե, ի հրապա-
րակս նորա ասացեք եւ զփոշիս կռնեալ ի մեզ ի քաղաքես ձեր-
մէ, թաւթափեմք ի ձեզ։ Վ[ա]ս[ն] զի ոչ ընկալայք զքարոզութ-
թի[ւն]ն մեր, արդ անպարտ եմք։ Զփոշիդ եղեալ ի ձեզ զմեզս եւ
զանիրաւութի[ւն] ի վարդապետաց քաղաքիդ ձերոց թաւթափեմք
ի մեզէ(!) ի ձեզ։ Իսկ Մա[տ]թեոսին զայս նշանակեալ թուի ինձ,
ոմն, զվերջին զաւրութի[ւն] հոգւոյն եւ զակարագոյնս ցուցանել.
ուստի եւ Ք[րիստո]ս զոմս աշակերտացն լուանայր եւ ոչ զձեռս եւ

(1) Ղուկ. Թ. 61–62։ Տպ. «Ասէ և այլ ումն, եկից զկնի քո, Տէր, բայց նախ հրաման տուր ինձ հրաժարել ի տանէ իմմէ... Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով և հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ»։
(2) Ղուկ. ժ. 1։ Տպ. «երեւեցոյց» վ. «ընտրեաց»։
(3) Ղուկ. ժ. 2, Մատթ. Թ. 37։
(4) Ղուկ. ժ. 4։ Տպ. «ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք»։
(5) Ղուկ. ժ. 10–11։ Տպ. «իսկ յոր քաղաք մտանիցէք և ոչ ընդունիցին զձեզ, իբրեւ ելանիցէք... ասասջիք, եւ զփոշիս...»։
(6) Մատթ. ժ. 14։ Տպ. «...թօթափեսջիք զփոշին յոտին ձերոց»։

զգլուխ. արդ, որ ասեդ այս ե, եթե յորժամ ելանեք ի քաղաքեն, որ ոչն ընդունի զձեզ և զաղա, որ կառնել ե ի նոցանե ի վաթարագոյն եւ ի ակարագոյն զաւրութիւնս ձեր, թաւթափեսջիք ի նոսա. կա՛մ ի կերակրոյ եւ կամ յա՛յլ ինչ պարծոց հակառակութի[ան] կամ սրամտութի[ան] զամննելիմբ սրբեալք ելանիցեք. եւ նոքա որպես անարժանք՝ մի՛ աւգտացին։

«Ամենայն ինչ առաւ ինձ ի հաւրե իմմե եւ ոչ ոք պիտի ո՛վ ե որդի, եթե ոչ հայր, եւ ո՛վ հայր՝ եթե ոչ որդի»(1)։ Ասա յանդիմանի Մարկիանէ, որ ասե երկուս երկինս, որդւոյ միոյնոյ եւ ոչ հաւր, զի եթե ոչ եին հաւր, զիա՞րդ եւ որդւոյ. Տուաւ ինձ ի հաւրե իմմե, ասե, վ[ա]ս[ն] զի ամենք կարծիս ունին վ[ա]ս[ն] Ա[սուծո]յ, եթե արարիչ ե Տ[եառ]ն եւ զաւտաւորի եւ ոչ հայր որդւոյ, վ[ա]ս[ն] այսարիկ [եր. 295բ] հաստանելով զկարծիս նոցա ասաց, Ամենայն ինչ առաւ ինձ ի հաւրե իմմե եւ ոչ ոք պիտի զորդի թե ո՛վ ե, բայց միայն հայր, եւ որում հայրն յայտնե, եւ ոչ ոք զհայրն,, բայց միայն որդի, եւ որում կամի յայտնել։

«Պատասխանեալ Յ[իսուս]ի ասաց. այր մի իջաներ յե[րուսաղէ]մէ յերիքով, եւ անկաւ ի ձեռս աւազակաց»(2), եւ որ ի կարգին ե։ Այրն որ իջաներ յե[րուսաղէ]մէ յերիքով, Ադամ եւ ամենայն մեղուցեալք ըստ նմանութի[ան] յանցաւածոցն Ադամայ. եւ ե[րուսաղէ]մ՝ դրախտն, յորմէ արտաքսեցաւն. երիքով աշխարհ՝ յոր ել ի դրախտեն. աւազակք սատանա[յ] եւ դեւնդք նորա. մերկութի[ւն]՝ ի փառացն և յանմահութիւնեն անկանելն. վերքն՝ մեղքն եւ յանցանք ամենայն. Թողուլ կիսամահ, զի մեռաւ մեղաքն վերաւորեալ, կիսամահ վ[ա]ս[ն] այնորիկ, զի ակնկալութի[ւն] գալստեան սամարացւոյն, այսինքն փրկչին՝ դա՛րձուլ ի կենդանութի[ւն] փոխեսցէ. քահանայ եւ ղեւտացի՝ մարգարէքն, որպես թուի ինձ, եւ վարդապետքն, որք յառաջ քան զՔ[րիստո]ս. սամարացի՝ Ք[րիստո]ս. Սամարացի կոչեցաւ եւ դիւահար, ասե Գրիգորիոս, այլ փրկեաց զնա, որ իջաներն յե[րուսաղէ]մ յերիքով եւ անկաւ ի ձեռս աւազակացն. ձեթ՝ ողորմութի[ւն]ն, զոր արարի ի վերա[յ] նորա. գինին՝ ուրախութի[ւն], զոր ի փրկել յաւազակացն(*) պարգեւեաց. գրասան՝ յոր հնան մարմինն իւր,

(1) Ղուկ. ժ. 22։ Տպ. «...գիտէ թէ ո՛վ... և ո՛ է...»։
(2) Ղուկ. ժ. 30։ Տպ. «Պատասխանի ետ Յիսուս և ասէ,»։
(*) Ձ.ում՝ «յառաջակացն», որ սխալ պիտի լինի, բնագիրն ու մեկնութեան մաքերի ընթացքն ի նկատի ունենալով։

[եր. 296ա] յոր երթայ զմեզս աշխարհի։ Պանդոկին՝ եկեղեցի Ա[սուծո]յ. պանդոկապետ՝ առաքեալքն և նոցինն նմանողք՝ վարդապետք եկեղեցւոյ. երկու դահեկանքն՝ Հին և Նոր Կտակարանք. դարձումն սամարացւոյն երկրորդ անգամ, երկրորդ գալուստն Ք[րիստո]ի, յորժամ հաւատացանեն իւրաքանչիւր ըստ գործոց, առաքելոցն եւ այլոց վարդապետաց զպատկեր արքայութի[ան], զի ջանացան եւ վաստակեալ ճգնութի[ամբ] գործեցին զորդիս Ադամայ ի բարեպաշտութիւն։

«Եւ եղեւ ի գնալն նորայ եւ ինքն եմուտ ի գիւղ մի եւ կին մի անուն Մարթա ընկալաւ զնա. Մարիամ քոյր նորա նստեր առոտն Յ[իսուս]ի և լսեր նորա վարդապետութ[եա]ննե. իսկ Մարթա վաստակեալ եւ աշխատեալ եր յոյժ ի սպասաւորութե[ան]»(1)։ Նշանակի Մարթա զգործական իմաստութիւն եւ զանասական և Մարիամ զքննականն եւ երկոքին հնաւելին միմեանց. այսինքն ոչ բանականն կատարեալ է առանց գործականին եւ ոչ գործականն առանց բանականին. վ[ա]ս[ն] որոյ եւ Ղուկաս աւետարանիչ ասաց ի Գործս Առաքելոցն. Սկսաւ ասել, Յ[իսուս]ս առնել եւ ուսուցանել(2). նշանակի Մարթա զայնպիսին որ ի տուն իւր եւ ի հոգին ընդունի զՔ[րիստո]ս հիւրասիրապես եւ մարմնաւորապես. իսկ Մարիամ զայնասիկ, որք հոգեւորապես ընդունին զՔ[րիստո]ս ի հոգին, ի տունս իւրեանց. հնարաւոր է եւ Մարթա[յ]ին նշանակել զհրե[եր. 296բ]ական ժողովուրդն, որ եւ այժմ ջանա[յ] ի գիրն, որ սպասանե, եւ զհոգին, որ կենդանացանե, ոչ ընդունի եւ խնդրե. իսկ Մարիամ զհեթանոսաց եկեղեցի, որ թողեալ եւ արհամարհեալ զաներեւոյն ա[սուա]ծա[յ]ին գրոց, զպատուղն՝ զգեղեցիկ բաժինըն ընտրեաց. եւ ասե, վ[ա]ս[ն] ե՞ր հոգաս եւ աշխատիս ի բազում իրս, մի՛ն են պետք(3). վ[ա]ս[ն] ե՞ր ջանաս եւ աշխատիս ի բազում աւրենս եւ պատուիրանս, մի՛ն են պետք, յորս ամենայն աւրենք եւ պատուիրանք կախեալ կան եւ կատարին ի Սիրեացես զա[ե]ր Ա[սուա]ծ քո յամենայն սրտե քումմ[մ]ե(4), եւ որ ինչ ի կարգին ե։ Մարթի իմանալ զմարթա զայնասիկ, որք ընկալան

(1) Ղուկ. ժ. 38-39։ Տպ. «... և կին ոմն անուն... ի տան իւրում։ Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ, որ և եկն նստաւ առոտն Տեառն և լսէր զբանս նորա։ Եւ Մարթա զբաղեալ էր ի բազում սպասուս»։
(2) Գործք. Ա. 2։
(3) Ղուկ. ժ. 42։ Տպ. «Բայց ասա սակաւ ինչ պիտոյ է»։
(4) Բ. Օրէնք. Զ. 5։

զՔ[rիստո]ս ի տուն՝ ի հոգիս՝ իբրեւ նոց, եւ դեռ եւս հրեաբար կեան ի հին խաղտոյն ոչ ազատեալք, իսկ Մարիամ, որ ի գաղանի Հրեայն է, եւ զվերինն խնդրեր եւ ոչ զերկրայինս։

«Եւ ասեն ցնոսա, ա՛վ ի ձենջ, որ ունիցի բարեկամ եւ երթա[յ] առ նա ի մեջ գիշերի, եւ ասի ցնա. սիրելի, տուր ինձ երից հացս, քանզի սիրելի իմ ինկն առ իս ի ճանապարհորդութենե»(1)։ Սիրելի եւ բարեկամ աշակերտացն Յ[իսուս]ի՝ Հայր Ա[ստուա]ծ եւ Ք[rիստո]ս Որդի Ա[ստուծո]յ։ ի մեջ գիշերին՝ կենցաղս կարճեալ, յորում մահուն սաստկիչն, չաշխարհով զբանն կենաց։ . . .(*)։ Այսպիսի զգայութի[ւն]ք թեպետ եւ անաւորդին ի վաճառատան եւ ի վաճառի երկուց դանգից, յիմարութի[ան] եւ լրբութի[ան], սակայն յԱ[ստուծո]յ մի ի սոցանէ ա՛չ ի մոռացեալ։ [Եր. 297ա] «Տիսկ զգուշաւս, զի ոչ սերմանեն եւ ոչ հնձեն»(2). Եւ ի հարիւր քառասուն եւ վեց Սաղմոսին ասացաւ, «Որ տայ ամենայն անասնոց կերակուր, ձագուց ագռաւուց, որ կարդան առ նա(3), եւ Յոբ, Որ պատրաստեաց ագռաւուց կերակուր(4)։ Պատմութի[ւն] վ[ա]ս[ն] պգռաւու ձագուց այսպես ունի. յորժամ հանեն զձագն ի ձուոցն, զնան հայրն եւ մայրն եւ մոռանան զձագն. իսկ ի մոռանալ զնան հայրն եւ մայրն եւ մոռանան զձագն։ իսկ ի մոռանալ ծնողացն եւ ոչ կերակրել զնոսա, ի բաղում խնամակալութենեն Ա[ստուծո]յ գիջութի[ւն] իմն լինի զբերանովն եւ արգունք ծնանին եւ ժողովին ի նմա գիջութիւնն եւ ա՛յլ չնչաւորք, ճանջ(տ!) եւ մժիխ եւ նայնպիսիք բազումք, եւ ամենայն ի ճանջացն կերակրին, մինչեւ կարիցին թռչել եւ որսալ կերակուրս իբրեւնց։ Եւ այս յաղագս պատմութե[ան]դ. Եւ վերաբերի ագռաւդ եւ ձագք ագռաւուց ի մեղաւորս, որք զոչնն ամենայն սրտիւ իբրեւնց առ Տ[է]ր, եւ ասեն նոցա զկերակուր հաղուցանէ։

«Եւ եղիցին մեջքն ձեր պնդեալք եւ ճրագունք ի ձեռս ձեր»(5)։ Որք սրբութ[եամ]ք եւ զգաստութ[եամ]ք կեան, նոցա

---

(1) Ղուկ. ԺԱ. 5։ Տպ. «Ո՞վ է ի ձենջ որոյ իցէ... և երթայցէ... և ասիցէ ցնա, Բարեկամ, տուր ինձ վոխ երիս նկանակս։ Զի բարեկամ իմ... ի յուղեայ»։

(2) Ղուկ. ԺԲ. 24։ Տպ. «Հայեցարուք ընդ ագռաւս...»։

(3) Սաղմ. ՃԽԶ. 9։ Տպ. «Այն որ տայ անասնոց զկերակուր իւրեանց...»։

(4) Յոբ. ԼԸ. 41։ Տպ. «Ո՞ պատրաստեաց ագռաւուց կերակուր...»։

(5) Ղուկ. ԺԲ. 35։ Տպ. «...գոտիք ձեր պնդեալ ընդ մէջս, և ճրագունք լուցեալք»։

(*) Այս յետագայ հատուածի սկիզբը պակաս է եղել, մի թերթ հաւանօրէն, գրչի օրինակում, բայց ինքը ոչինչ չէ նկատել։

մեջք պնդեալ ևն(*), եւ վ[ա]ս[ն] զի գիշեր է կենցաղս այս՝ ճրագի պեաք ևն, եւ ճրագ է միտք՝ ակն հոգւոյն։ «Ամեն ասեմ ձեզ, զի գաւաթ ածեալ, բազմեցուցեալ զնոսա»(1), ըստ ասացելումն, «Զգուշացաւ Տ[է]ր գաւրութի[ւն] ընդ մեջ ածաւ(2) և քե [Եր. 297բ] արդարութի[ան]ս պնդեալ զմեջ իւր(3), որով իւրաքանչիւր ոք ըստ արժանեաց բազմեցու[ս]ցեն եւ ըստ արժանեաց լապաւսարեն, «Եւ անցեալ, ասէ, սպասաւսարեն նոցա»(4)։ Զանց արարեալ Տ[եառ]ն զերեւելեաւքս՝ սպասաւսարեն այնոցիկ, որ արթուն ունին զիմանալին։ «Թեպետ յերկրորդ պահուն կամ յերրորդ պայցե»(5)։ Առաջին եւ երկրորդ պահ մարգպան, մանկութենեն հասակ եւ երկրորդ երիտասարդականն, երրորդ ծերականն։ Արդ հրամայե արթուն կալ յամենայն հասակի, զի արժանաոցին բազմիլ եւ սպասաւորիլ ի Տ[եառ]ն։

«Եւ ասէ Տ[է]ր, ա՞վ իցե հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր կարգեսցէ Տ[է]ր ի վերա[յ] պաշտամանն իւրոյ»(6)։ Պաշտաւն եւ հնազանդութի[ւն] է սրբոյ, վ[ա]ս[ն] զի սպասաւորե և ծառայե Ա[ստուծո]յ, որպես եւ Մովսես պաշտաւնեայ եւ ծառայ Ա[ստուծո]յ ասի, այլ եւ անսուղ լինի ծառայից իւրոց Ա[ստուա]ծ։ «Ամենայնի որում(**) առաւ բազում, բազում եւ խնդրեսցի(***) ի նմանե, եւ որում աւանդեսցի բազում, առաւելագոյն խնդրեսցի ի նմանե»(7)։ Ոչ է հաւասար ամենեցուն տուեալ եւ ոչ հասարակ ամենեցուն(†) աւանդեալ։ Տուաւ ի Ք[rիստո]ս եւ աւանդեցաւ Պետրոսի եւ Ղուկասու, բայց ոչ հասարակապես, ուստի եւ առաւելագոյն խնդրեսցի ի Պետրոսե։

---

(1) Ղուկ. ԺԲ. 37։ Տպ. «...գոտի ընդ մէջ ածցէ և բազմեցուսցէ...»։

(2) Սաղմ. Ղ. 1։ Տպ. «...ընդ մէջ իւր ածաւ»։

(3) Ես. ԺԱ. 5։ Տպ. «Եւ եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր»։

(4) Ղուկ. ԺԲ. 37։ Տպ. «Եւ անցեալ պաշտիցէ զնոսա»։

(5) Ղուկ. ԺԲ. 38։ Տպ. «Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ»։

(6) Ղուկ. ԺԲ. 42։ Տպ. «...զոր կացոյց տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ...»։

(7) Ղուկ. ԺԲ. 48։ Տպ. «Ամենայնի որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ, և որում բազում աւանդեցաւ, առաւել եւս պահանջեսցեն ի նմանէ»։

(*) Ձ.ում՝ «պնդեալ են» կրկնուած։

(**) Ձ.ում՝ «որում» կրկնուած։

(***) Ձ.ում՝ «խնդրեցի»։

(†) Ձ.ում՝ «ամենեցուն» կրկնուած։

«Հաւր ակի արկանել յերկիր, եւ ինչ, կամիցիմ թե [եր. 298ա] արքեն իսկ վաւաշ եր. մկրտութի[ւն] ունիմ մկրտել և զիա՛րդ փութամ մինչեւ կատարեցայ. արդեւք կարծեք ևին խաղաղութի՞[ւն] տալ ի յերկիր ակի»(1): Նոյս զխաղաղութի[ւն] զոր ունի հոգին առ մարմինն, եւ ապա հաւր արկանի ի մարմինս, երկիր անուանեալ, զի մսեղութեացն զխորհուրդս մարմնոյ, և ծախեացն զխոտ, փայտ, եւ զկեչն՝ զվաթար խորհուրդս եւ զմիտս. վ[ա]ս[ն] զի Ա[ստուա]ծ, ասէ, հաւր ծախիչ է, հրոյս այսորիկ ազդեալ ի մեզ ճրագք մեր լուցանին եւ զապաւէրք մեր ոչ չիջանին: «Բանդի եղիցին ասէ հինգ ի սոսն միւսոյ բաժանեալք, երիքն յերկուց, եւ երկուքն յերից»(2): Հինգ զդայութի[ւն]քս մինչդեռ եւս ոչ է ընկալեալ զոսն վարդապետութի[ն]ն՝ միաբանին, իսկ յորժամ ընդունին, յայնժամ մեկնութեանն անուսթի[ւն] եւ լսելութի[ւն] յայլոց երից, ի տառապելացն, ի ճաչակելից եւ ի չաշափելից. իսկ յորժամ վարդապետի բանիւ որ ունի զդայութիւնդ, յայնժամ երկու զդայութիւնդ անուսթիւն եւ լսելութիւն, որ են իմաստասիրականք եւ բանաւորագոյնք, բաժանին յերից մարմնաւորացն. քանզի տառապելիք եւ ճաչակելիք եւ չաշափելիք ի յատուկնականութի[ւն] ինչ ոչ ակնառար են իմաստասիրապես կեալ, լոյց միայն ի մարմնոյ [եր. 298բ] կազմած եւ տառապութի[ւն]. իսկ երկուքն անուսթի[ւն] եւ լսելութի[ւն]՝ բաժանելիք ի սոյնոսն՝ ոչ միայն ի կենդանութի[ւն], այլ եւ յիմաստասիրական կենդանութի[ւն]ս ուղղակար են. վ[ա]ս[ն] զի անուսթ[եամ]ք պիտանալ զերկինս և զերիս տանելոց եւ կարգս նոցա եւ զքաղաք աշխարհս, զարմանամբ ընդ արարիչն, նոյնպես եւ լսելութ[եամ]ք ուսանիմք զոսն ուղղակի վարդապետութ[եան], եւ ուսանելիք՝ զա՛յլս ուսուցանիմք:

«Բաժանեցաք հայր յորդի, եւ որդի ի հայր»(3): Զայս ի յիւր(?) ի սկզբանէ ընդ[ունելոյ], մի՛ ինչ մերձենալ յատաջինդ(*)· եւ ե զոր ուսուցանեն, բաժանումն հաւտոյ յանհատութիւնն·

(1) Ղուկ. ժՒ. 49։ Տպ. «կամիմ... բորբոքեր։ Եւ մկրտութիւն մի ունիմ...։ Համարիք եթէ խաղաղութի՞ւն ակի տալ յերկիր»։

(2) Ղուկ. ժՒ. 52։ Տպ. «Ձի եղիցին յայսմհետէ հինգ...»։

(3) Ղուկ. ժՒ. 53։ Տպ. «...յորդւոյ... ի հօրէ»։

(*) Այստեղ Ձեռագրի նախկին օրինակն էլ վչացած է եղել. լուսանցքում այս երկու տողի դիմաց նշանակուած է «վինքն յառաջ առնելով — յաբրինակիս գրեալ էր այդ նոյնպես ի վերայ»։ Ձախերանների մէջ առնուածի երկրորդ մասը գրչի նկատողութիւն է և ոչ բնագրի մաս։

«Հայր բաժանի յորդի»(1), միաք բարի ի խորհրդոյ վատթար ե, ոչ հաւանելոյ սոցայ, «եւ որդի ի հաւրե», որ ոչ թողեալ զհայրն մհռեալ. «մայր ի դստերե», ցյաւրին եւ զհոգի պատուէն իւր ոչ ընդունելով. «դուստր ի մաւրե». ի հիւթոյն որում ոչ միաւորի հոգին. «սկիսաւր ի հարսնե իւրմե», որ եղեալ է անաւրեն(*) առն հոգւոյ(**) նորին նման է մայր. «հարսն ի սկիսրե իւրմե». ժողովուրդն, որ յայտգս յանցառացն որոշեցաւ ի հոգւոյն(***):

ԺԸ.

«Եւ նա ասէ ցնոսայ. այր ոմն արար ընթրիս մեծ, կոչեաց զբազումս և առաքեաց զծառայս իւր ի ժամու ընթրեացն կոչել յ[ը]նթրեանն»(2): Ծառայ Ք[րիստո]ս, վ[ա]ս[ն] զի ի կոչումն եւ ի փրկութի[ւն] ամենեցուն ծառա[յ]եաց [եր. 299ա] հաւր՝ զկերպարանս ծառայի առեալ, եւ ակեալ ոչ ի սպասաւորել, այլ ի սպասաւորել. եւ նա ասեմ ի միջի ձերում ոչ բազմեալ, այլ սպասաւոր: «Առաջինն ասաց, ագարակ գնեցի»(3), եւ որ ի կարգին: Ոչ կամեցան գալ յ[ը]նթրեան, որք ուսան եւ գնեցին ագարակս ազնդ աւտարս(†) յա[ստուա]ծպաշտութենե: Ունի այնպիսին հարկաւորութի[ւն] եղանել եւ տեսանել զագարակն, այսինքն փորձել եւ քննել զազնդ հաւատոյն, զոր ստացան: «Եւ միւսն ասաց, զոյգս եզանց գնեցի հինգ, եւ երթամ փորձել զնոսայ»(4): Զոյգս հինգս ասացաւ, որ թողեալ զիմանալի եւ զմտաւոր զգայութի[ւն]ս, եւ միայն մարմնեղեն հինգ զգայութ[եամ]քս իմաստասիրե: «Եւ այլն ասաց. կին առի եւ վ[ա]ս[ն] այնորիկ(††) ոչ կարեմ գալ»(5): Կին առի ասէ ոչ զիմանալի եւ զհոգեւոր իմաս-

(1) Ղուկ. ժՒ. 52, այս և հետեւեալ վկայութիւնները։

(2) Ղուկ. ժԴ. 16։ Տպ. «...ցնա, Այր մի գործեաց ընթրիս և հրաւիրեաց... զծառայ... կոչել զհրաւիրեալսն»։

(3) Ղուկ. ժԴ. 18։ Տպ. «Առաջինն ասէ...»։

(4) Ղուկ. ժԴ. 19։ Տպ. «եւ միւսն ասէ, լուծս հինգ եզանց գնեցի»։

(5) Ղուկ. ժԴ. 20։ Տպ. «եւ միւսն ասէ, կին ածի,...»։

(*) Ձ.ում՝ «անաւրեն» կրկնուած։

(**) Ձ.ում՝ «հոգիոյ»։

(***) Ձ.ում՝ «հոգիոյն»։

(†) Ձ.ում՝ «աղանդաւարս» վերջին ա-ի գլխին նոյն թանաքով և գրչով գրուած է ե, ուրեմն «աղանդաւետարս», որ պիտի զատուի «աղանդ աւտարս»։

(††) Ձ.ում՝ «վ[ա]ս[ն] այն այնորիկ»։

տաբթի[ւն], այլ զմարմնովքինաց եւ զաչխարհիս այսորիկ զբաղանս եւ զցանկութի[ւնս]ս։ «Եւ ակնակալ ծառայն պատմիաց զայն ա[ստուա]ծային իւրոյ»(1), որ պատմեն զխրաժարումն նոցայ յ[ի]նթրեանցն ք[րիստո]սի, հեռացուցանելով ի հրնից զփրկութի[ւն] ա[ստուա]ծային։ «Եւ վաղվաղակի յանցս եւ ի հրապարակս եւ ի փողոցս քաղաքիդ»(2)։ Սոքա են հոմանուագ ընդարձակ. որ նոսին այնոքիկ են, որք զ[ի]նդարձակ(*) ճանապարհն գնացին, և վարեին զկնան իւրեանց առ[ետր. 299բ]անց վարդապետութի[ան] եւ հաւատոյ. «եւ ի փողոցս», որք երեսին երեւեալ կարծեին զչարութի[ան] գնացս իւրեանց. «քաղաք», երկրային աչխարհս. «աղքատք, խեղք, կաղք, կոյրք», յիմարք աչխարհիս այսորիկ. «աղքատք», զաղքատացեալս յա[ստուա]ծպաշտութինն։ Նոյն աւրինակաւ իմացիր, «զխեղս եւ զկոյրս եւ զկաղս». սոքայ ոչ տեսանին եւ ոչ գնային ըստ ճշմարիտ իմաստութի[ան]ն։ «Եւ ասէ ա[ե]րն ցծառայն. Ել ի ճանապարհս եւ ի ցանկս և արա մտանել այսր»(3)։ կոչեցեալ յ[ի]նթրեան, որք ի փողոցս քաղաքին նոսին և ի հրապարակս, հրամա[յ]ն կոչել եւ զայնոսիկ, որք արտաքոյ քաղաքին. եւ երեք քաղաք զերկրաւոր աչխարհս անուանեցաք, արտաքոյ քաղաքիս ո՞վ արդեւք իցեն, զոր կոչել հրամայեաց. կարծեմ, երեք որք ի դժոխս արգելեալ եին հոգիքն սրբոցն, զորս ազատեաց ք[րիստո]ս իւրովք իջանելով ի դժոխս։

«Եւ դարձեալ ասէ ցնոսա, որ ոք գայ առ իս և ոչ ատեայ զհայր իւր և զմայր եւ այլն եւս»(4)։ Եւ զիա՞րդ, որ զքրիստոնեան սիրել հրամայեաց, ատել հրամայէ զհայր եւ զմայր և զեղբարս եւ զքոյր, զկին եւ զորդիս, այլ եւ զանձն եւս։ Արդ որպես ինձ թուի՝ յորդորէ յայս, որպես Մա[տ]թէոս ասէ, երեք ոք զհայր կամ զմայր առաւել քան [եր. 300ա] զիս սիրէ, չէ ինձ արժանի, եւ որ ինչ ի կարգին կա[յ](5). այլ առաւելագոյն սիրով եւ անքակտելի հաստատութի[եամ]ք զիս սիրեցից, եւ ապա զհայր իւր եւ զմայր եւ զեղբարս, եւ զկին եւ զորդիս, զի նոցայ սերն առ իմով սի-

(1) Ղուկ. ԺԴ. 21։ Տպ. «իւրոյն» վ. «իւրոյ»։
(2) Ղուկ. ԺԴ. 21։ Տպ. «յանցս» կը պակասէ։
(3) Ղուկ. ԺԴ. 23։ Տպ. «...և արա այսր մտանել»։
(4) Ղուկ. ԺԴ. 26։ Տպ. «Դարձաւ և ասէ ցնոսա, երէ ոք գայ...»։
(5) Մատթ. Ժ. 37։ Տպ. «Որ սիրէ զհայր... ոչ է ինձ արժանի»։
(*) Ջ.ուսմ՝ «զնդարձակ»։ Ուշադրութեան արժանի է «ընդ» սղումը մի քանի անգամ մի երեսի մէջ, որ պէտք է վերագրել գրչի օրինակին։

բովք այնչափ մեղմագոյն երեւեսցի, մինչ զի ատելութի[ւն] թուեսցի։

ԺԹ.

«Այր ումն ի ձենջ, որ ունիցի ճ ոչխար եւ կորուսանիցէ ի նոցանէն, ո՞չ խոզուցս զինեսուն եւ զինն յանապատի եւ երթայ առ կորուսեալն»(1)։ Հարիւրիդ ի խիւ կատարեալ, հոգեւոր մարդկան նշանակ, իսկ կորուսեալ ոչխարն, որ մեղաւք եւ անեւրենութի[եամ]ք ի կորուսեալ, զոր ակն Որդի մարդոյ խնդրել եւ կեցուցանել, եւ բարձեալ ի վերայ ուսոց իւրոց, զի զանեւրենութիւնս մեր երթայր եւ զմեզ, մարմնով՝ ուսովք իւրաւք յորս խաչն բարձեալ եւ երթայր ի չարչարանս։ «Կամ ո՞վ կին, որ ունիցի դրամս ժ, եւ եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ ապաքէն լուցանէ ճրագ եւ սրբէ զատնն, և խնդրէ փութապես»(2)։ Կինն նշանակի զհոգի մարդոյ, ժ զրամ ներարտերեալ ի նմա կատարեալ առաքինութի[ւն]ք. միաբանութի[ամ]բ հինգ հոգեղին զգայութի[եան]ց ընդ հինգ մարմնեղեն զգայութիւնիս, յորոց եթէ կորուսանիցէ [եր. 300բ] մի յառաքինութի[ան]ց, լուցանէ ճրագ, զբանն ա[ստուա]ծային, յորմէ լինի յիշատութի[ւն] ա[ստուա]ծա[յ]ին պատուիրանին, մի՛ չնար, մի՛ սպանանիցես, մի՛ գողանար եւ մի՛ ևղիցին քեզ ատատածք աւատք(3). աւելածէ, գտուն իւր սրբէ, զմարմինն ի չարութիւնեն, որ եղեւ ի պատուիրազանցութենեն. կոչէ զբարեկամս եւ զդրացիս, զհամախտս եւ զդուզպահաւատս զհոգիս եւ ասէ ցնոսա, ուրախակից լերուք ինձ, զի գտի զկորուսեալ առաքինութի[ւնն] իմ։

«Եւ ասեր, այր ումն ունիցեր երկուս որդիս, և ասէ կրտսերագոյնն ցհայրն. հայր, տուր ինձ մասն, որ ինչ հասանի յ[ի]նէիցդ. իսկ նա բաժանեաց նոցա զգոյանս»(4)։ Որպես որ յառաջ երկու առակքն յորդորեն յապաշխարութի[ւն] զմեզուցեալս, նոյն-

(1) Ղուկ. ԺԵ. 3։ Տպ. «Ո՞վ ոք ի ձէնջ իցէ մարդ որոյ իցէ հարիւր ոչխար, և կորուսանիցէ զմի ի նոցանէ... և երթիցէ զնա կորուսեալն»։
(2) Ղուկ. ԺԵ. 8։ Տպ. «Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն զրամք տասն... ո՞չ լուցանիցէ ճրագ և ածիցէ աւել ի տան, և խնդրիցէ ամէն»։
(3) Համեմատ Բ. Օրէնք ե. 7, 17–18։
(4) Ղուկ. ԺԵ. 11։ Տպ. «Եւ ասէ, Առն միոջ էին երկու որդիք. Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն, Հայր, տուր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ. և նա բաժանեաց նոցա զկեանսն»։

պեա եւ առաջիկայս. իսկ զերիցադոյն՝ որդին եւ զկրսերագոյն ի յերկուս գաւրութի[ւ]նս բանական հոգւոցն բաժանելի է, եւ դեռ եւս ոչ մեղուցեալս զորդին երիցագոյն, իսկ զորդին կրսերագոյն ի մեղուցեալս, որք վերջկացան(sl) ի փառացն Ա[usուծո]յ։ Ոմանք ասացին որդի երիցագոյն զի[սրայ]եղեան ժողովուրդն, եւ որդի կրսերագոյն զհեթանոսական ժողովուրդն, քայց այս ոչ թուի ինձ ճշմարիտ. քանզի ցերեց որդին ասե հայրն որդեսեր. «Եթե դու որդեակ հանապազ [եր. 301ա] ընդ իս ես եւ ամենայն, որ ինչ իմ է, քո է. իսկ ի[սրայ]եղացիք բազում անգամ յանցուցեալ, ոչ եղեն ընդ հաւրն. եւ հեթանոսաց ժողովուրդն ո՛չ եր երբեք առեալ մասն ի հաւրենի եւ կորուսեալ, այլ որպես ասացին, երից որդին զհոգիս նշանակէ, որք ոչն մեղանն, եւ կրսերագոյն՝ զհոգիսն, որք մեղանն եւ ապաշխարեցան։ Այլ ասիցէ ոք վ[ա]ս[ը] ե՞ր կրսերագոյն ասացան հոգիք անառակացն, և երիցագոյն՝ հոգիք արդարոցն։ Առ այս ասացից, եթե վ[ա]ս[ը] անառակութի[ա]նն եւ վ[ա]ս[ը] բաժանելոյ յառաքինութենէ եղբարն իւրոյ կրսեր կոչեցաւ, այլ ոչ ըստ ժամանակի. եւ եթե որպես ոք կարծիցեն ասել, հա՛յր, այժմ զփրկիչն կարծեմք, որ ասացն ցաշակերտան, Որդեակք իմ, և դարձեալ՝ Քաջալերեա՛ց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ(1)։

«Գնաց, ասե, յերկիր հեռաստան»(2), ի յարդարութենե եւ յերկնային կենդանութենէն յերկրային ցանկութի[ւ]նս եւ զբազմութիւն խաւարային աշխարհիս այսորիկ. «եւ ցրուեաց զամենայն գոյացութի[ւ]ս իւր կելով անառակապես»(3)։ Հայրն աւանդեաց նմա-զինչս առաքինութի[ա]ն, իսկ նորա զհրամանսն հաւրն զանց արարեալ, կորոյս զամենայն առաքինութի[ւ]ն [եր. 301բ], որպես եւ ես որ չարագրեցիս(*). ուսեալ զամենայն գործ ա[սուա]ծա[յ]ին առաքինութեանն ի Ք[րիսոս]է եւ յաշակերտաց նորա արուեստից անառակական գործովք վարեալ. «Եւ եղեւ սով սաստիկ ի քաղաքին յայնմիկ»(4). սով եղեւ լսել զբանն Տ[եառ]ն եւ խնա-

(1) Մատթ. թ. 22։
(2) Ղուկ. ժե. 13։ Տպ. «գնաց յաշխարհ հեռի»։
(3) Ղուկ. ժե. 14։ Տպ. «եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ»։
(4) Ղուկ. ժե. 14։ Տպ. «յաշխարհին» փ. «ի քաղաքին»։
(*) Լուսանցքում՝ «յարինակիս(sl) եր, զիս մի կարծեր, թեպետ եւ ստոյգ յիս ես»։

մակալութեանն Ա[usուծո]յ, զի պակասեալ եւ նուազեալ յիւրոցն գարձցի առ հայրն, ցանկացեալ հաւրն մարդասեր հեզութեանն. «և նա սկսաւ պակասել»(1), այսինքն եթե ի մոռացումն եկն իւրոյ ցանկութեանն. «և գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց գաւառին այնորիկ»(2), քաղաքացիք գաւառին, որ հեռի ե յերկնաւոր գաւառեն ասասանայ և դաչնաւորք նորայ ասաց։

«Եւ նա չղեաց զնա յանդաստան իւր արածել խոզս»(3)։ Անդաստան եւ ագարակ սատանայի, ուր են տունկք, զորս ոչ անկաց հայրն երկնաւոր. և խոզք, որ զմարգարիտն կոխեն եւ անցանեն, նա արածե խոզս, որ զցանգութի[ւն] մարմնական կատարե եւ թաւալի ի ժանտահոտութիւնս ախտից մարդկան, այլ եւ այնպիսին որ պղծովն հոգւով լցեալ է. եւ սերմանե ի մարմին, այլ ոչ ի հոգի։

«Եւ ցանգայր յագենալ յեղջերեն, զոր ուտէին խոզքն»(4)։ Բանական հոգի ցանկանայ վարդապետ[եր. 302ա]ութե[ան] եւ բանից Քեպետ եւ ոչ բարի, սակայն որ եւ իցե բան վարդապետական. եղջերուդ այդ պտուղ քաղցր է եւ պարարե զմարմին, Քեպետ եւ կղկղանաց առնե արդելուն, եւ նշանակե զբանս հիւթասիրաց եւ մարմնասիրաց, որք ասեն զմարմնական ցանկութի[ւնս] բարի ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց։ «Եւ ոչ ոք տայր նմայ»(5). բարեյուզաց զխոխոտել ուսմունս ոչ աւանդե[ցին](*) յոմինք, զի մի յանդիմանեսցին. «Եւ յինքն եկեալ ասաց»(6), որպես Քմբրեալ եւ զթմբրութի[ւն]ն ի բաց ընկեցեալ, յիշե երանելութե[ան] հաւրն. վարձկան կոչի, որ ծառայե ումեք կամ Ա[usուծո]յ եւ կամ ա՛յլ ումեք. եւ ծառայե ոչ վ[ա]ս[ը] սիրելոյ գնա, այլ զի փոխանակ ծառայութե[ա]ն վարձուց ակն ունիցի։

«Եւ ասացից գնա, հայր մեղայ յերկինս եւ առաջի քո»(7)։ Ծերկնաւորսն մեղայ, զի Թողեալ զերկնաւորացն գործս, յերկրաւորս քարշեցայ. «առաջի քո», զի անցեալ զպատուիրանաւ քով

(1) Ղուկ. ժե. 14։ Տպ. «եւ սկսաւ ինքն չքաւորել»։
(2) Ղուկ. ժե. 15։ Տպ. «աշխարհին» փ. «գաւառին»։
(3) Ղուկ. ժե. 15։ Տպ. «յագարակ իւր» փ. «յանդաստան»։
(4) Ղուկ. ժե. 16։ Տպ. «լնուլ զորովայն իւր» փ. «յագենալ»։
(5) Ղուկ. ժե. 16։
(6) Ղուկ. ժե. 17։ Տպ. «եւ եկեալ ի միտս իւր, ասէ»։
(7) Ղուկ. ժե. 18։
(*) Այս բառը լուսանցքում «աւանդե..., մնացածը կորուած կազմելիս. կարելի է լինել «աւանդեցին». նոյն գրչով և թանաքով գրուած։

ընդ սաստանայի յարևցայ։ «Եւ յարուցեալ գնաց առ հայրն իւր»(1)։ Ընդ ասել բանին եւ զղջիծն կատարեր. զվերջինսն մոռացեալ և յառաջինսն ձգեալ։ «Եւ դիւռ եւս նորայ հետի գոլով սկսեալ հայրն գթացաւ եւ ընդ առաջ ընթացեալ անկաւ զպարանոցսն նորա եւ համբուրեաց»(2)։ [եր. 302բ] Դիւռ եւս հետի եր, վասն զի ի յանցանացն ոչ եր թաւթափեալ։ Եւ զի զղջացեալ վաւթայր առ հայրն, սկսաներ գնա եւ անկաներ ի վերա[յ] պարանոցի նորայ, որ ազատեալն եր այն ինչ ի լծոյ սատանայի. տայր նմայ եւ համբոյր, նշանակելով զմխաւսրաւթի[ւն] առ որդին։

«Ասե հայրն ցծառայս իւր վաղվաղակի, հանեք զպատմուճանն առաջին եւ զկեցուցեք զմա], եւ տուք մատանի ի ձեռս դորա եւ կաւչիկս յոտս դորայ»(3)։ Առաջին պատմուճան զառաջին զարդ հագուցն, որով զարդարեւ և ուրախացուցանեւ զհոգիս ապաշաւելոյ եւ ի բաց ընկելոյ զարամական անզարդութի[ւն] յանցանաց. մատանի՝ զնկարագիրն, որ զգործական հագուցն զարդարեր. կաւչիկ՝ սէ զհղխատացուցն, զոր հրամայէ ի բաց ընկենուլ այնոցիկ, որ եկանեն եւ գնանն ի վերա[յ] սրբո[յ] երկրին, այլ որ ի պատրաստութի[ւն] սրբոյ ուխտարանին կազմեցան։ «Եւ ածէք զզուարակն պարարեալ՝ զնէք, զի կերեալ ուրախասցուք»(4)։ Զուարակ պարարեալ բանն ազխահ վարդապետութի[ւն], կամ ինքն իակ Ք[րիստո]ս բան եւ խոտութի[ւն] Ա[ստուծո]յ, որպես եւ Սողոմոն ասե. «Խոտութի[ւն] չինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն եւ զնն զպնդիս իւր եւ որ ի կարգին է»(5) [եր. 303ա]։

«Իակ որդի նորա երիցագոյն եր յագարակի»(6)։ Որդին երեց որպես եւ ասացաւ բանական բնութի[ա]նս որ ոչ մեղուցեալ ե ի բարի եւ ի պարարտ անդաստանի՝ եղեւ գործաւղ անդաստանի բարւոյ, հակառակ անդաստանին, որ ուներ զխոզսն։ «Եւ որպես գայր մերձեցեալ ի տուն, լուաւ զձայն երգոց եւ պարսուց»(1)։ Երգ երաժշտականք են եւ համաձայնք, եւ կրկնաձայնք. արդ պարտ եր ի դառնալ որդւոյն առ հայրն եւ ապաչխարել, երգոց համաձայնից լսիլ, եւ ոչ զհակառակաւ ձայնից. եւ երգք համաձայնք են ա[ստուա]ծաբանութի[ւն]ք, գովեստք, աւրհնութի[ւն]ք եւ ա՛յլ այսպիսի զանազանս, որ կատարի ի փառս Ա[ստուծո]յ։

«Ահաւ այսչափ ամս ծառայեցի քեզ, և ոչ երբեք զհրամանաւ քո զանց արարի, եւ ինձ երբեք ոչ եւոեր ուլ մի»(2)։ Թէ՝ատ(!) զի ոչ ե անգործ եւ գատարկ ա[ստուա]ծ հագուց(*) զաւրութի[ւն]ցն կենցաղք, այլ ունին ի բնութի[ւն]ն իւրեանց պատշաճ ծառայութի[ւն]։ «իակ ուլ մի ինձ ոչ եւոեր». վ[ա]ս[ն] զի վնասուն ուլոյ հագուց է բանականի, որ բարեգործութեանն զմիզուցեալն եւ հանե ի ս[ուր]ը կենդանութի[ւն]։ Եւ ոչ վ[ա]ս[ն] զի ոչ եր միզուցեալ երեց որդին, վ[ա]ս[ն] այնորիկ եւ ոչ ուլոյ պիանայր ի զոհ եւ ի զհնուն։ «Իակ յորժամ ակն որդիս քո այս, որ կերաւ զկեանս քո ընդ պոռնիկս ընկալար»(3) [եր. 303բ]։ Բանքս վատահելոյ են յառաջախոհրդութի[ւն]։ պոռնիկք՝ զանազան չարութիւնք հեթանոսական եւ մարմնական կենցաղոյս։

«Որդեակ դու հանապազ ընդ իս ես»(4)։ Վկայութի[ւն] հաւրն, եթե երբեք ոչ մեկնուացաւ ի բարւոյն։ «Ուրախանալ պարտ ե եւ խնդալ, զի եղբայր քո այս մեռեալ եր եւ կենդաց, կորուսեալ եր եւ գտաւ»(5)։ Մեռեալ՝ վ[ա]ս[ն] զի կենարար գործութիւնն ցրուեաց, կելոնք անառակութի[ամ]բ. «կորուսեալ», վ[ա]ս[ն] զի ըզլայն եւ ընդարձակ ճանապարհն գնայր, գաղաւղն ի կորուստն. իակ ի մտաւ ածել գալ առ հայրն, կենդանացաւ եւ գտաւ ի բաց եդեալ զմեռելութի[ւն] եւ զկորուստն։

---

(1) Ղուկ. ժե. 20։ Տպ. «եկն» վ. «գնաց»։

(2) Ղուկ. ժե. 20։ Տպ. «եւ մինչդեռ հեռագոյն էր, եահս զնա հայրն և գթացաւ. յարեաւ և ընթացաւ ընդ առաջ»։

(3) Ղուկ. ժե. 22։ Ըստ ձեռագրի կէտադրութեան «վաղվաղակի» կապուած է «ասէ» բայի հետ։ Տպ. «...և ապուցէք նմա... և տուք մատանին ի ձեռս նորա... յոտս նորա»։

(4) Ղուկ. ժե. 23։ Տպ. «եւ ածէք զեզն պարարակ, զնէք, կերիցուք և ուրախ լիցուք»։

(5) Առակք Թ, 1։

(6) Ղուկ. ժե. 25։ Տպ. «եւ էր երէց որդի նորա յագարակի»։

(1) Ղուկ. ժե. 25։ Տպ. «և մինչդեռ գայր և մերձ եղեւ ի տունն»։

(2) Ղուկ. ժե. 29։ Տպ. «Այս քանի՛ ամք են, զի ծառայեմ քեզ և երբեք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբեք ոչ եւոեր ինձ»։

(3) Ղուկ. ժե. 30։ Տպ. «ցորժամ... որդիդ քո այդ որ եկեր... ընկալար»։

(4) Ղուկ. ժե. 31։

(5) Ղուկ. ժե. 32։ Տպ. «Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր... կորուսեալ՝ և գտաւ»։

(*) «հագուց» գրուած է լուսանցքում, բայց նոյն գրչով և թանաքով։

Ի.

«Ասաց առ աչակերտան. այր մի մեծատուն ունէր անառակ եւ եղեւ ամբաստանութի[ւն] ընդ նմանէ, որպէս թէ վատնեսցէ զինչս նորա»(1). Տնտես անիրաւութի[ւն] նշանակէ զամենայն մեզաւորս, որ իբր պարտապանաց Քրոջ զյանցանս և առնեն իւր սիրելիս մամոնա[յ] հարստութի[ւն] եւ մեծութի[ւն] ընչից, զոր բաշխեալ առատապես կամ Քրիստոս զպարախս, առանց[յ] իւր սիրելիս զհրեշտակս եւ զհոգիս արդարոց։

«Այր մի եր մեծատուն, ագաներ ծիրանիս եւ բհնդ»(2). Առակն զամենայն մեծատունս, որ միայն զմարմնոյ հոգայ, [եր. 304ա] եւ յերկրային իրս զբաղեալ է. եւ ագքատ ի նմն, զամենայն որ ագքատ է հոգւով, վասն որոյ ասացաւ՝ «Երանի ագքատացդ հոգւով, զի նոցայ է արքայութի[ւն] երկնից»(3). «Եւ ի վերայ այսր ամենայնի և ի մեջ մեր եւ ձեր վիհ մեծ է հաստատեալ»(4). Որպես գործովք մեկնեսացեալ են ի մխիթարից արդարք եւ մեղաւորք, նոյնպես կայինիւք եւ տեղւոք. եւ զայս պիտայ(!) զի զյարութի[ւն]ն նշանակէ առակդ, այլ եւ զայս եւս, եթէ է՛ ծանեալ[ութի[ւն] ի հանդերձեալսն։

«Հարցեալ ի փարիսեցւոցն, թէ ե՛րբ գայ արքայութիւնն Ա[ստուծո]յ»(5), եւ յետ առակաւոյ ասաց, «թէ արքայութի[ւն]ն Ա[ստուծո]յ ի ներքս ի ձեզ է»(6). Ազգեցութի[ւն]ք հոգւոյն ի մեջ եւ ի ներքս զաւրութի[ւն]ցն են. «Աւրհնեա անձն իմ զՏ[է]ր, ասէ, եւ ամենայն ներքինք իմ զանուն ս[ուր]ք նորա»(7). որպ յորում ազգեցութ[եամ]ք Ք[rիստո]ս ի նոսա, ի ներքս է արքայութիւնն Ա[ստուծո]յ, իսկ յոր աչ ազգեցութ[եամ]ք, այլ կարողութ[եամ]ք, ի նոսա եւ արքայութիւնն Ա[ստուծո]յ կարէ լինել, թեպետ զուտ եւս ազգեցութ[եամ]ք աչ է. նոյնպես եւ ի փարիսացիսն եր արքայութի[ւն]ն(!?) Ա[ստուծո]յ, թեպետ եւ նոքա անգիտանային.

(1) Ղուկ. ԺԶ. 1։ Տպ. «եւ ասէ ...Այր մի էր մեծատուն, որոյ էր... զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ...»։
(2) Ղուկ. ԺԶ. 19։ Տպ. «Այր ոմն էր... և... բհնդեզս և ծիրանիս»։
(3) Մատթ. ե. 3։
(4) Ղուկ. ԺԶ. 26։ Տպ. «...վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ»։
(5) Ղուկ. ԺԷ. 20։ Տպ. «Հարցաւ ...թէ ե՞րբ... գայցէ»։
(6) Ղուկ. ԺԷ. 21։ Տպ. «...զի ահա արքայութիւնն Աստուծոյ...»։
(7) Սաղմ. ճԲ. 1։ Տպ. «...և ամենայն ասկերք իմ...»։

զի թէ հաւատացեալ եին ի Ք[rիստո]ս, եթէ որդի է Ա[ստուծո]յ միածին, ապա եւ ազգեցութ[եամ]ք յինքեանս ունեին զարքայութի[ւն]ն Ա[ստուծո]յ, որպես եւ Պաւղոս երանելին։

«Ասեմ ձեզ յայսմ գիշերի ելիցին երկուք ի վերա[յ] մահճաց միոյ»(1). Այս եւ որ ի կարգին, մեկնեցաւ յաւետարանին Մա[տ]թէոսի։

ԻԱ.

[եր. 304բ] «Ասաց նոցա զառակս զայս առ ի հանապազ աղաւթել եւ մի ձանձրանալ. Դատաւոր մի եր ի քաղաքի միում, յԱ[ստուծո]յ աչ երկնչեր եւ ի մարդկանն աչ ամաչեր»(2). Ոմանք ի Ք[rիստո]ս վերաբերեցին զառակս, քանզի որպես Ա[ստուա]ծ յԱ[ստուծո]յ աչ երկնչի, այլ եւ ի մարդկանն աչ ամաչէ. զի չեն ինչ յետին գործեալ. արդ եթէ դատաւոր արդարութի[ան] և Ք[rիստո]ս եւ ամենայն ճանապարհք նորա իրաւամբք են, որպես եւ են իսկ ըստ ամանց մեկնութի[ան]ց, անիրաւութի[ան] դատաւոր լինի Ք[rիստո]ս, քանզի ի վերայ ածեն աւետարանագիրն յետ առակաւոյ(*) ասելով. Լուարուք, զի՛նչ դատաւորն անիրաւութի[ան] ասէր (3). և եթէ այդ զմասն ածել յետին յիմարութի[ւն]ն են եւ ընդդիմակաց են միմեանց դատաւորն արդարութի[ան] եւ անիրաւութի[ան]։

Ապա մեկնելի է այս այսպես. երկուս անիրաւս եւ չարս աստ իմաստուք մին զդատաւորն անիրաւութի[ան] եւ միւս զայրուոյն աւասիս, որ եր ընդ իշխանութ[եամ]ք անիրաւ դատաւորին, և մարթի ի չարսն ումեմն իշխել, եւ ումեմն իշխել, որպես Բեհզեբուղ իշխան դիւաց ասացաւ. արդ անիրաւութի[ան] դատաւորն յԱ[ստուծո]յ աչ երկնաւ, քանզի նա խաչել զորդի նորայ, ապանաւել եւ զմարգարեան նորայ և զառաքեալսն եւ մինչեւ յայժմ եւս

(1) Ղուկ. ԺԷ. 34։ Տպ. «Յայնմ գիշերի թէ եղիցին երկու ի մի մահիճս»։ Մեկնութիւնը տես եր. 87։
(2) Ղուկ. ԺԸ. 1։ Տպ. «Ասաց և առակ մի նոցա առ այն, թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի՛ ձանձրանալ։ Ասէ, Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն...»։
(3) Ղուկ. ԺԸ. 6։
(*) Ջ.աւմ՝ «աւուց» վանկը չնչուածի նշանով, իսկ լուսանցքում դրուած է «միոյ», ուրիմն բնագիրը պիտի լինի «յետ սակաւ միոյ»։

հալածանս [եր. 305ա] ի վերա[յ] քրիստոնէից յարուցանէ ըստ նե-
րելոյ Ա[ստուծո]յ այն պատուար ամբարտաւան եւ ամբարհաւած եւ
ի մարդկանէ ոչ ամաչէ, արհամարհելով զազգ մարդկան; իսկ
այրի ի քաղաքին՝ հոգի մարդոյն, այրի լեալ ի Ք[րիստո]ե, որ ե
փեսայ եկեղեցական հոգեւոյ· այս՝ այրոյ թողեալ զՔ[րիստո]ս, ա-
պաւիներ ի պատուարն անիրաւաբնեան, լլկեալ յոսոխէն, ի դի-
ւէ, իրաւանս խնդրեր ի դիւաց, զի խաբեփսոյի ի բռնաբնեան
աւասխին· աւասխս այս, որպես ասացի, կա՛մ դիւ իսկ եր, որ
լլկեր, կամ մարդ հնազանդեալ սատանայի· իսկ պատուարն անի-
րաւաբնե[ան] յաչխատաւբնեան այրւոյն առներ, զոր ինչ խնդրեր·
և խրատու առակս, թէ պարտ է անձանձրոյթ ազաւթել առ Ա[ս-
տուա]ծ, զի եթէ պատուարն անիրաւաբնե[ան], որ ոչ յԱ[ստուծո]յ
երկնչի եւ ոչ ի մարդկանէ ամաչէ, յաղագս(*) վկայելոյ և խա-
փանձելոյ այրւոյն արար նմա զատուտան, ո՛րչափ եւս առաւել
Ք[րիստո]ս, արդարաւբնե[ան] արեգակն եւ պատուար, լուիցէ ազա-
չանաց եւ պաղատանաց այնոցիկ, որք հանապազ պաղատին եւ
աղաչեն զնա։

ԻԲ.

«Ասէ Յ[իսուս]ս· Այսուբ եղեւ փրկաբ[ւն] տանս այսմիկ,
վ[ա]ս[ն] զի եւս սա որդի Աբրահամու է»(1)։ Որդի Աբրահամու նա՛
է, որ գործէ զգործս Աբրահամու։ Արդ վ[ա]ս[ն] զի Զա[կ]քէոս
զգործան Աբրահամու գործեաց, որդի Աբրահամու անուանեցաւ
ի Ք[րիստո]ս։ [եր. 305բ]

«Եւ ասաց· Այր աւն բարեհամն գնաց յերկիր հեռի՝ առնուլ
իւր թագաւորաբ[ւն] եւ դառնալ»(2)։ Այր բարեհամն՝ Ք[րիստո]ս,
եկեալ ի հեռաստան երկիրս ի յերկնաւորացն յերկրաւորս(**)
թագաւորեաց եւ համբարձեալ յերկինս, գարձեալ գալոց է դա-
տել զմեռեալս եւ զկենդանիս։ «Եւ կոչեալ զծառայս իւր եւ տա-

(1) Ղուկ. ԺԹ. 9։ Տպ. «Եւ ասէ ցնա Յիսուս... քանզի...»։

(2) Ղուկ. ԺԹ. 12։ Տպ. «Ասէ, Այր աւն ազնուական գնաց յաշխարհ հեռի»։

(*) Զ.ուշ՝ «յալաս», իսկ լուսանցքում նոյն գրչով և թանաքով ա-
ւելացրած «ագ»։

(**) Զ.ուշ՝ գրիչը պրիլ է «ի յերկրաւորացն» և ապա ջնջել, պա-
հելով միայն ի-ն, ուշադրութեան արժանի համարելով այդպիսի ուղղումը,
աւելացրինք յ-ն որպէս հետագայ բառի նախդիրը և ջնջեցինք աւելորդ «ի»-ն։

ցա տասն մնաս»(1)։ Նոյն առակ է, որ ի Մա[տ]թեոսին, տաղանդն
եւ քանքար անուանեցաւ։ Եւ նոյնպես մեկնեցի, բայց միայն
պանազանի, զի անդ ասէ քանքար տասցաւ և տաս տասն, կա-
տարեալ թիւդ։

«Առաքեաց երկուս յաշակերտաց[ն] իւրոց եւ ասէ, երթայք
ի գիւղդ, որ ընդդեմ ձեր է, յոր երթեալ գտանէք յաւանակ կա-
պեալ յորոյ վերայ ի մարդկանէ ոչ ոք նստաւ»(2)։ կապեալ յա-
ւանակ՝ ժողովուրդ, յորս ոչ երբէք եղեւ բան վարդապետաբն[ան]
Ք[րիստո]ի։ լուծանեն ի կապանաց զյաւանակն երկուս աշակերտքն
Ք[րիստո]ի, որպես կարծեմ Հին եւ Նոր կտակարանք և վարդա-
պետք նոցին եւ մեկնիչք։ «Ի լուծանելն նոցա զյաւանակն ասեն
տե[ր]քն նորա ցնոսա, զի՞ լուծանէք զյաւանակդ»(3)։ Ցառաջ քան
զթիրելն Ք[րիստո]ի եւ թագաւորել յաւանակին, լազում տեարս
ուներ յաւանակն, եւ այդ այպես։ Եւ որ ինչ ի կարգին մեկնեա-
ցի, որպես ի Մա[տ]թեոսի աւետարանին կա[յ](4)։ [եր. 306ա] «Եւ
արկեալ ի վերա[յ] նորա զհանդերձս իւրեանց»(5)։ Ի վերա[յ] անբան
յաւանակին, արկանեն աշակերտքն զհանդերձս իւրեանց, զբան
վարդապետաբն[ան] առաքելական եւ մարգարեական. Մա[տ]թեոս
եչ ասաց կապեալ եւ յալանակ ընդ նմին, զեկուցանելով զերկուս
ժողովուրդս, զհրեական եւ զհեթանոսական. իսկ Ղուկաս յաւանակ
միայն։

«Եւ մերձենալ նորա յիջ լերինն ձիթենեաց, բակաս ամե-
նայն բազմաբն[ւն] աշակերտացն ուրախաբ[ւնամ]ք աբհնել զա[ս-
տուա]ծ»(6)։ Մա[տ]թեոս ամբոխ բազմաբն[ան] ազազակեին, ասե,
որ առաչին եւ զկնի հրեայք· գուցե արդեւք զամբոխն ամենայն,
որ ազազակեր աշակերտաց բազմաբն[ւն] աբհնեաց անդ, որք
խոստովանեցին զնա Ք[րիստո]ս, ասելով՝ Աբհնեալ է, որ գայ
գալոց և անուամբ ա[եառ]ն(7)։

(1) Ղուկ. ԺԹ. 3։ Տպ. «կոչեսցեալ»։

(2) Ղուկ. ԺԹ. 29։ Տպ. «երթայք գտէք ի գիւղն որ հանդէպ մեր
կայ. յոր իբրեւ մտանէք, գտանիցէք... յորում ոք ի մարդկանէ երբեք
ոչ նստաւ»։

(3) Ղուկ ԺԹ. 33։ Տպ. «Եւ մինչդեռ լուծանէին...»։

(4) Մեկնութիւնը տես նաև եր. 79։

(5) Ղուկ. ԺԹ. 35։ Տպ. «և արկին զնոսա զհանդերձս...»։

(6) Ղուկ. ԺԹ. 37։ Տպ. «Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ զառ ի վայր
լերինն...»։

(7) Ղուկ. ԺԹ. 38։ Տպ. «Օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տեառն»։

«Զի եթե գիտեիր դուն յաւուրս յայսմիկ զխաղաղութի[ւն] քո, իսկ այժմ ծածկեցաւ յաչաց քոց»(1)։ կաբաւթի[ւն] փոքր ի շատե հղեւ ի[սրայե]ղի, ծածկի յաչաց ե[րուսաղէ]մի, որ ինչ ի խաղաղութի[ւն] նմա, վ[ա]ս[ն] դի ոչ գիտաց զայդ յաւուր զալստեանն ք[րիստոս]ի։

ԻԳ.

«Այր ոմն անկեաց այգի եւ ետ մշակաց եւ գնաց ճանապարհ աւուրս բազումս»(2)։ Այգի ա[ստուա]ծական վարպապետութի[ւն]ն մարգարեական եւ առաքելական, յորս զայդին ետ, զի պաղաբերեսցե [եր. 306բ] հրեական ժողովուրդն. ծառայք՝ Մովսես եւ ա՛յլ մարգարէքն. որդին զորս սպանին՝ ք[րիստո]ս միածին Որդին Ա[ստուծո]յ։

«Յայնժամ որ [ի] Հրեաստանեայս իցեն, փախիցեն ի լերինսըն»(3)։ Այս եւ որ ինչ կարդիդ, մնկնեցաւ ի մաթեոսեան աւետարանին։

«Աման ձեզ ոչ կերայց զդա մինչեւ լցցի յարքայութի[ա]ն Ա[ստուծո]յ»(4)։ Խնդրելի է, զի՛րդ լնաւ զառիկ յարքայութի[ան] Ա[ստուծո]յ, եթե ոչ երբեմն յերկնայինսն լինի, որոյ սաւերն կատարիւր ի ժողովրդեանն։

Ես եմ ի միջի ձեր որպես սպասաւոր, եւ դուք եք, որ համբերեք ընդ իս ի փորձանս իմ»(5)։ Փորձանք աշակերտացն ասին փորձանքն ք[րիստոս]ի, իսկ յորժամ յալեմիք ի փորձանսն՝ համբերելով, յայնժամ աւանդեսն նմա մահ զարքայութի[ւն]ն. յայնժամ եւ որդին մեզ աւանդեացէ. զի կերիցուք եւ արբցուք հոգեւորապես ի վերա[յ] սեղանոյ նորա. զի նացաւք ի վերայ աթոռոյ, դատել երկոյասան ցեղսն ի[սրայե]լի։

(1) Ղուկ. ԺԹ. 42։ Տպ. «եթէ գիտէիր դու... յերեսաց քոց»։

(2) Ղուկ. Ի. 9։ Տպ. «... և ետ գնաս... և ինքն... ժամանակս բազումս»։

(3) Ղուկ. ԻԱ. 21։ Տե՛ս մեկնութիւնը եր. 83։

(4) Ղուկ. ԻԲ. 16։ Տպ. «Բայց ասեմ ձեզ թէ ոչ եւս կերայց ի սըմանէ...»։

(5) Ղուկ. ԻԲ. 28։ Տպ. «. . . . որ ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմս»։

«Եւ Յ[իսուս]ս ասէ ցնոսա. համբաւրի[՞]ւ, Յուդա՛, մատնես զորդի մարդոյ»(1)։ Բայազմաք ի մարդկանն պատմին յայժ սիրել զք[րիստո]ս, եւ պատուհասով բարեհամբաւեն. ամանք՝ եթե ոչ ծնաւ ի կնոջէ, եւ ա՛յլք՝ եթե կարծեաւք երեւեցաւ մարդկան. այլք ա՛յլ ինչ ազատ լամելով նմա պատիւ մատուցանել, կարծանեցան ի [եր. 307ա] հաւատացն։ Այդ եւ որ ինչ ի կարդիդ, մինչեւ ցյարութիւնն, մնկնեցաւ ի մաթեոսեան աւետարանին(2)։

«Եւ ահա երկաւ ի նացանն երթայիր յաւուրց յայնմիկ ի գետաւզ մի, որ հետ ևր յե[րուսաղէ]մէ ձկ ասպարեաւ, որեմ անուն էր Է[ւ]մաւուս(3)։ Է[ւ]մաւուս հետացեալ են յե[րուսաղէմ]է ձի ասպարեզս, եւ վիա՞րդ գրեալ է ձկ ասպարեզս։ Այդ վիպաբերութի[ւն] ինչ ոչ ունի, եթե ոչ գրեալ եր ձի ասպարեզս։ Առաւեւսա մինչեւ ի կատարումն աւետարանին, ոչ ոք պատմեաց յայլոց աւետարանչացդ։

Ա.ԻԵՏԱ.ՐԱ.Ն ԸՍՏ ՅՈՎՀԱ.ՆՆՈՒ

ԻԴ.

Յովհաննես մի յերկոյասանեայն, աշակերտն զոր սիրեր Յ[իսուս]ս, որ եւ անկաւն իսկ զլանջաւքն նորա ի յ[ի]նթրիս գիշերայն այնորիկ, յորում մատնեցաւն եր ք[րիստո]ս։ Սա ա՛չ զազգահամարութի[ւն]ն գրեաց եւ ոչ զվիպերին ի առաքեալսն։ Զազգահամարութիւնն վ[ա]ս[ն] այնոցի՛կ ոչ գրեաց, զի ոչ ի մարդկային ծնընդեանն արար լսկիզբն, այլ յա[ստուա]ծա[յ]ին ծնընդեանն, ուստի եր և անապզ զազգատումն նորա. ասէ մարգար[եր. 307բ]ին, Ո՞ պատմեսցի(4)։ իսկ Յովհաննես յա[ստուա]ծաբնեանն արար լսկիզբն եւ զծնունդն միածնի Որդւոյն Ա[ստուծո]յ, որ յաւաջ քան զյաւիտեանս ամենայն պատմի ասելով.

«Ի սկզբանն եր բանն, եւ բանն եր առ Ա[ստուա]ծ, եւ Ա[ս-

(1) Ղուկ. ԻՒ. 49։ Տպ. «... Յուդա՛, համբուրիլո՞վ մատնես...»։

(2) Մեկնութիւնը տե՛ս եր. 91։

(3) Ղուկ. ԻԴ. 13։ Տպ. «Եւ ահա երկուք... ի նմին աւուր... և էր անուն նորա Եմմաւուս»։

(4) Ես. ԾԳ. 8։ Տպ. «և զազգաւոնն նորա ո՞ պատմեսցէ»։

տուա]ծ եր բանն»(1)։ Բան ասի Որդի Ա[ստուծո]յ միածին, վ[ա]ս[ն] զի զամենայն անբանութի[ւն] մեր կրծտ, եւ աւրար զմեզ բանաւոր։ Որ եր ի Հաւր ի սկզբանէ, եւ ոչ եղեւ որպես ամենք ի հրեշտակացն ցնորեցան ասել։ Եր երբեմն, յորժամ ոչ եր որդի։ Արդ եթե բան ե Հաւր ի սկզբանէ, Որդին միածին, եւ ասիցե ոք, եր երբեմն, յորժամ ոչ եր որդի, ապա անբան ասիցե զՀայր, սկիզբն եւ առանց զաւրութեան եւ իմաստութի[ւն]։ «Բանդի Ք[րիստո]ս Ա[ստուծո]յ զաւրութի[ւն] եւ Ա[ստուծո]յ իմաստութի[ւն] է», ասաց առաքեալն(2)։ Եւ Բանն եր ի սկզբան ի Հաւր, իսկ(*) կենդանութի[ւն]ն ոչ եր ի Բանին հանապազ, այլ եղեւ, զի եթե կենդանութիւնն լոյս եր մարդկան, յորժամ եղեն մարդիկ՝ յ'ոժամ եղեւ կենդանութիւնն լոյս մարդկան։

